Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

**www.freebooks.do.am**

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

Ռ. Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՄՈՒԼԸ

ԵՐԵՎԱՆ

HOMO RES SACRA

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ)
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
КАФЕДРА ЖУРНАЛИСТИКИ

РАФИК ОГАНЕСЯН

# ВНЕШНЯЯ ПОЛИТИКА И ПРЕССА

## Учебное пособие для студентов

ИЗДАТЕЛЬСТВО РАУ
ЕРЕВАН 2004

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՄՈՒԼԸ

**Ուսումնական ձեռնարկ ուսանողների համար**

ՌՀՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 32+070
ԳՄԴ 66+76.1
Հ 854

**Տպագրվում է ՌՀՀ ժուռնալիստիկայի ամբիոնի երաշխավորությամբ**

Խմբագիր՝ պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ս.Ս.Հայրապետյան**

**Հ 854** **Հովհաննիսյան Ռ.** Արտաքին քաղաքականությունը և մամուլը. (ուսումնական ձեռնարկ), ՌՀՀ հրատ , Եր., 2004, 128 էջ:

ՀՀ ժուռնալիստների միության «Ոսկե գրիչ» մրցանակի դափնեկիր, հայտնի լրագրող և քաղաքական մեկնաբան Ռ.Հովհաննիսյանի անձնական հարուստ փորձի հիման վրա գրված այս աշխատությունը հասցեագրվում է ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողներին: Գրքում կան գործնական առաջարկներ լրագրող-միջազգայնագետների աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:

Հ $\frac{0801000000}{0112(01)-2004}$ ԳՄԴ 66+76.1

ISBN 99941-919-8-5

© **ՌՀՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2004**

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ՀՀ գործող Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է. *«Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»:*

Այս ձևակերպման մեջ «**ինքնիշխանությունն**» այն է, որ տվյալ պետությունը ենթակա չէ որևէ մեկի գերիշխանությանը և ինքնուրույնաբար է տնօրինում սեփական ճակատագիրը:

«**Ժողովրդավարական**» ասելով նկատի է առնվում այն հանգամանքը, որ պետության մեջ իշխանությունը պատկանում է ժողովրդին, իշխանության աղբյուրը ժողովուրդն է:

Ժողովրդավարությունը լինում է ուղղակի և միջնորդավորված: Ուղղակի ժողովրդավարություն եղել է, օրինակ, հին Հռոմում կամ Աթենքում, երբ այդ քաղաքների ազատ քաղաքացիները (որոնց մեջ, իհարկե, ստրուկները չէին մտնում, քանի որ չէին օգտվում որևէ, այդ թվում նաև քաղաքացիության իրավունքից) հավաքվում էին գլխավոր հրապարակներում (Ագորա) և կարծիքների ազատ արտահայտման, բանավեճերի, ապա և բաց քվեարկությունների միջոցով ընդունում էին իրենց քաղաք-պետությունների համար կարևոր օրենքներ ու որոշումներ, ընտրում իրենց կառավարիչներին: Քաղաք-պետությունների մեծացման և ավելի ընդարձակ պետական կազմավորումների առաջացման հետ միասին այդ կարգի ուղղակի ժողովրդավարությունն այլևս անհնար էր իրականացնել (պարզապես անկարելի էր պետության ընտրական իրավունք ունեցող բոլոր քաղաքացիներին հավաքել որևէ, անգամ ամենամեծ հրապարակում): Այդ ժամանակներից էլ ուղղակի ժողովրդավարությունն իրականացվում է ընտրությունների և հանրաքվեների միջոցով: Քանի որ դրանք

կազմակերպելը նույնպես հեշտ խնդիր չէ, բացի այդ նպատակահարմար էլ չէ ամեն անգամ ողջ ժողովրդին մասնակից դարձնել ամեն կարգի հարցերի լուծմանը, ավելի հաճախ գործադրվում է ներկայացուցչական ժողովրդավարությունը, երբ որոշակի թվով քաղաքացիներ իրենց միջից ընտրում էին պատվիրակներ (ներկայացուցիչներ) գործուղելով նույն կարգի պատվիրակների հետ պետական նշանակության հարցեր քննարկելու և որոշումներ ու օրենքներ ընդունելու: Նման կարգը ժամանակակից ժողովրդավարության անկյունաքարն է: Այս կերպ է, որ ժողովուրդը ազատ, արդար և ուղղակի ընտրությունների միջոցով ձևավորում է պետական իշխանության ներկայացուցչական մարմինները և դրանցում ընտրված իր ներկայացուցիչների միջոցով մասնակցում իրեն կառավարելու կոչված գործադիր իշխանության ձևավորմանը: Այլ խոսքով, պետական իշխանության ներկայացուցչական մարմինների կազմում ընտրված իր ներկայացուցիչներին ժողովուրդը պատվիրակում է իրեն պատկանող իշխանության իրականացումը: Ընդսմին ընտրությունների պարբերաբար անցկացումը հնարավորություն է տալիս որոշակի ժամանակահատվածներում թարմացնել (ռոտացիայի ենթարկել) ներկայացուցչական մարմինների և գործադիր կառավարման համակարգում ընդգրկված անձանց կազմը: Ժողովրդին պատկանող իշխանության բռնազավթումը ընտրությունների արդյունքների կեղծման, անձնիշխանական (ավտորիտար) կամ բռնատիրական (տոտալիտար) ռեժիմների հաստատման կամ որևէ այլ ճանապարհով ծանրագույն հանցագործություն է:

«**Իրավական**» ասելով նկատի է առնվում պետության մեջ օրենքի գերակայության, օրենքի առաջ բոլոր քաղաքացիների հավասարության, պետական մարմինների և այլ քաղաքացիների կամ կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների նկատմամբ հնարավոր ոտնձգությունների անթույլատրելիության սկզբունքների հաստատումը: Այստեղ հատուկ կարևորվում է մարդու սեփականության իրավունքի, խղճի, խոսքի, դավանանքի և այլ ազատությունների պաշտպանությունը.

«Սոցիալական» ասելով նկատի է առնվում սոցիալական արդարության սկզբունքի կիրառումը բոլոր քաղաքացիների վերաբերմամբ Դա ամենևին չի նշանակում պետության բոլոր քաղաքացիների միջև նյութական բարիքների հավասարարական բաշխում. Պետությունը չի կարող և չպետք է թալանի իր հարուստ քաղաքացիներին նրանց ունեցվածքը բոլորի, մանավանդ աղքատների միջև հավասարապես բաշխելու նպատակով: Պատմությանը հայտնի է այդպիսի մի ձախողակ փորձ, երբ բոլշևիկները, 1917 թվականի պետական հեղաշրջման միջոցով տիրանալով պետական իշխանությանը Ռուսաստանում, փորձեցին պարզունակ կերպով իրականացնել «սեփականատերերին սեփականազրկելու» Մարքսի տեսական դրույթը: Մարքսը նկատի էր ունեցել սեփականատիրական կամ կապիտալիստական արտադրահարաբերությունների վերացումը և նոր, իր պատկերացրած սոցիալիստական արտադրահարաբերությունների հաստատումը: Ռուս բոլշևիկները դա վերածեցին հարուստ խավերի ուղղակի կողոպուտի, այդ թվում տվյալ կարգի մարդկանց զանգվածային ոչնչացման, առանց դատ ու դատաստանի արյունարբու հաշվեհարդարի ենթարկելու ճանապարհով: Այս անպարագիծ ոճիրին զոհ գնաց շուրջ 18 միլիոն մարդ 1918-1922 թվականներին, և դարձյալ շուրջ 15 միլիոն մարդ՝ 1929-1933 թվականներին, երբ սկսվեց ստալինյան բռնի կոլեկտիվացումը՝ «կուլակությունը որպես դասակարգ վերացնելու» կարգախոսով: Ա՛յս կարգախոսն էլ ընդունվեց իր ամենաբարբարոս և ամենաուղղակի իմաստով հարուստ և ունևոր (կուլակային) դասակարգին պատկանող մարդկանց ֆիզիկական ոչնչացման իմաստով: Իսկ ոչնչացումն իրականացվեց հարազատ վայրերից կուլակների (իրականում առավելաբար աշխատավոր, ձեռներեց գյուղացիների) ու նրանց ընտանիքների անդամների զանգվածային աքսորումներով, դիմադրողներին պարզապես գնդակահարելով, նոր բնակավայրեր հասնելու ճանապարհին ու արդեն այդ բնակավայրերում աշխատելու և գոյատևելու հնարավորությունների լիակատար բացակայության, սովի ու համաճարակների արհեստական հրահրման ճանապարհով: Այս բարբարոսությունը, որ

իրականացրել է *պրոլետարիատի դիկտատուրայի* պետությունն իր իսկ միլիոնավոր քաղաքացիների նկատմամբ, նախադեպը չունի համաշխարհային պատմության մեջ մանավանդ ոճրագործության ծավալների իմաստով: Նախադեպը չունի, սակայն ընդօրինակումներ ունի: Ռուս բոլշևիկների հրեշավոր փորձի «լավագույն» ընդօրինակողները գերմանական ֆաշիստներն էին, որոնք, 1933-ի հունվարին իշխանության գալով, երկիրը ծածկեցին համակենտրոնացման ճամբարների ցանցով, դրանցում սկզբում ոչնչացնելով սեփական, այնուհետև իրենց կողմից բռնազավթված այլ պետությունների տասնյակ-միլիոնավոր քաղաքացիներին: Այս և այս կարգի այլ բարբարոսություններն, իհարկե, ոչ մի ընդհանուր բան չունեին *սոցիալական արդարության* սկզբունքի հետ: Այդ սկզբունքը իրականում ենթադրում է պետության բոլոր քաղաքացիների համար արժանապատիվ ապրելու, նյութական բարիքներ արտադրելու, ձեռք բերելու և սպառելու, մշակութային արժեքներից օգտվելու *հավասար հնարավորությունների ապահովում:*

Մարդիկ նույնիսկ իրենց ծնվելու պահին հավասար չեն մեկի քաշը նորմալ է, մյուսինը ավելի թեթև, մեկը ավելի երկար հասակ ունի, մյուսն ավելի կարճ, մեկը լիարժեք է, մյուսը արատով, մեկն աշխարհ է գալիս ժառանգական ավելի հարուստ պաշարով, քան մյուսը: Ողջ կյանքում նույնպես մարդկանց անհատական տարբերությունները զգացվում են: Մեկը գեղեցիկ է, մյուսը ոչ, մեկը ավելի ըմբռնող է, քան մյուսը, մեկն աշխատասեր է, մյուսը ծույլ, և այսպես շարունակ: Նույնիսկ կյանքի բացարձակապես նույն պայմաններում գտնվողները, անգամ միևնույն ընտանիքում մեծացող և արտաքուստ չափազանց նման երկվորյակները տարբեր են թե բնավորություններով, թե ընդունակություններով: Ձեզնից յուրաքանչյուրը, սիրելի ուսանողներ, հնարավորություն ունի լսելու միևնույն դասախոսին, սակայն ամեն մեկը իր չափով է օգտվում նրա տված գիտելիքներից. Այդպես էլ *սոցիալական արդարության* պարագայում է: Պետությունը հավասար հնարավորություններ է ապահովում իր քաղաքացիների համար՝ ապրելու որպես սոցիալական էակներ, իսկ թե այդ էակներից յուրաքանչյուրն ինչ չափով է

կարողանում օգտվել ընձեռված հավասար հնարավորություններից իր անձնական գործն է Ավելի առարկայական օրինակ բերեմ ձեզնից յուրաքանչյուրը հավասար հնարավորություն ունի այցելելու Պետական պատկերասրահ, հաղորդակցվելու այնտեղ պահվող արվեստի շուրջ 20 հազար հիանալի գործերին· Սակայն բոլո՞րդ եք եղել Երևանի պետական պատկերասրահում: Կամ Մատենադարանում, թանգարաններում, թատրոններում, օպերայում, համերգասրահներում, այլուր, ուր կարող եք կրթել ձեր գեղագիտական ճաշակը: Արդարացի չէր լինի, եթե պետությունն իր մշակութային օջախներում պահվող *արժեքները* հավասարապես բաժաներ... քաղաքացիների միջև (երաժշտությու՞նն ինչպես պիտի բաժաներ, կոնկրետ համերգի, օպերային կամ բալետային ներկայացման պատճառած գեղագիտական հաճու՞յքն ինչպես): Բայց պետությունը ձեզ հնարավորություն է տալիս դրանցից օգտվելու հաճախ անվճար կամ չնչին վճարներով: Եվ հենց դա էլ *սոցիալական արդարության* սկզբունքի կիրառում է: Իհարկե, անհեթեթ կլինի պնդել, թե տվյալ սկզբունքը մեր պետության մեջ կիրառվում է լրիվ ծավալով: Ամենևին: Արդարությունը, որպես բարոյական կատեգորիա, տարբեր կերպ է հասկացվում երկրի քաղաքացիների, սոցիալական առանձին խմբերի կողմից: Այն, ինչ միանգամայն արդարացի է թվում մեկին, կատարյալ անարդարություն է մյուսի տեսակետից: Հռչակելով, որ մեր պետությունը *սոցիալական* պետություն է, մենք, նախ, սահմանադրորեն ամրագրել ենք, որ մեր նպատակը *սոցիալական արդարության* հաստատումն է, մյուս կողմից գիտակցում ենք, որ դրան դեռ չենք հասել և ըստ իս երբեք լիակատար չափով չենք հասնի, քանի որ ամեն ժամանակ՝ իր հետ կբերի արդարության իր ըմբռնումը: Խնդիրն այն է, որ պետության զարգացման որոշակի ժամանակահատվածում ապրողների *մեծամասնության* համար պետության մեջ սոցիալական արդարության *կիրառումը* ընդունելի համարվի:

Ահա և մենք դիտարկեցինք ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված «ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական» հասկացությունները: Դրանք բոլո-

որը հանդիսանում են մեր պետության *բնութագրումները,* նրա, եթե կարելի է այսպես ասել, հիմնական հատկանիշների *թվարկումը:*

Իսկ ի՞նչ է պետությունն ինքը: Սահմանադրության մեջ այս հարցի պատասխանը չկա· Պետությունը բնութագրող հատկանիշների թվարկումը կա, իսկ դրանց ընդհանրական բանաձևը, ավա~ղ, ոչ: Սակայն այսպիսի հարցադրումն ամենևին էլ ավելորդ չէ «Արտաքին քաղաքականությունը և մամուլը» առարկայի տեսակետից, քանի որ *արտաքին* քաղաքականություն, որպես այդպիսին, կարող է ունենալ միայն և միմիայն ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ:

Դուք, իհարկե, կարող եք առարկել, քանզի շատ անգամ լսած ու կարդացած կլինեք պատմական ու քաղաքական դեմքերի անուններ «արտաքին քաղաքականություն» բառերի համակցությամբ: Ասենք Հուլիոս Կեսարի, Նապոլեոն Բոնապարտի, Ջորջ Բուշի կամ Վլադիմիր Պուտինի քաղաքականություն: Պատմությանը հայտնի են այս կերպ գործածված նաև այլ, ոչ առաջին դեմքերի անուններով «պսակված» քաղաքականություններ՝ Թալեյրանի քաղաքականություն, Դալլեսի քաղաքականություն և այլն:

Պետությունների արտաքին քաղաքականության այս կարգի անձնավորումները ընդամենը չափազանցություն են: Որևէ անհատ, որքան էլ մեծ, «արտաքին քաղաքականություն» ունենալ չի կարող: Նա ունի (կամ ունեցել է) քաղաքական *համոզմունքներ, վարքագիծ, դիրքորոշում,* պատմական իրադարձությունների, այդ թվում նաև իր ներկայացրած պետության արտաքին քաղաքականության վրա մեծ կամ փոքր չափերով *ազդելու* հնարավորություն և կարողություն և ոչինչ ավելի: Որքան մեծ է տվյալ անհատի ազդեցությունը պետության արտաքին քաղաքականության ձևավորման վրա, այնքան ավելի հաճախ հենց նրա անունով էլ անձնավորվում է արտաքին քաղաքականությունը: Բայց պատկերացնու՞մ եք, թե իրենցից ինչ կներկայացնեին նույն Կեսարը, Բոնապարտը, Բուշը, Պուտինը, Քոչարյանը, եթե իրենց պետությունների ղեկավարները չլինեին, կամ նույն Թալեյրանն ու Դալլեսը, եթե

իսկայական հնարավորություններ չունենային ազդելու Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի պես հզոր պետությունների արտաքին քաղաքականության վրա: Իհարկե, կարելի է անվարան ասել, որ նշված (և բազմաթիվ ու բազմաթիվ այլ) պատմական դեմքերն ու քաղաքական գործիչները, իրենց անհատական հատկանիշներով հզոր քաղաքական կամքով, իշխելու տենչով, զորավարական տաղանդով, կազմակերպչական ընդունակություններով և շատ այլ շնորհներով են հասել իրենց բարձր դիրքերին: Սակայն հազվադեպ չեն նաև այն դեպքերը, երբ կատարելապես անարժան այլ անհատներ իրերի բերումով հայտնվել և այսօր էլ հայտնվում են պետական իշխանության բուրգի գագաթին դարձյալ հնարավորություն ստանալով ազդել իրենց պետությունների արտաքին քաղաքականության ձևավորման վրա:

Տաղանդավորները տաղանդավոր արտաքին քաղաքականություն են իրականացրել, ապաշնորհները ապաշնորհ: Սակայն թե մեկ, թե մյուս դեպքերում դա չի եղել և չէր կարող լինել տվյալ անհատի արտաքին քաղաքականությունը: Դա եղել և կարող էր լինել միայն և միմիայն իրենց ղեկավարած կամ ներկայացրած *պետությունների* արտաքին քաղաքականությունը: Իբրև այս մտքի հաստատում մի անգամ ևս վկայակոչենք ՀՀ գործող Սահմանադրությունը, որի 9-րդ հոդվածը հռչակում է. «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը իրականացվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով»: Ուշադրություն դարձրեք այս հոդվածի առաջին մի քանի բառերին «ՀՀ արտաքին քաղաքականությունը իրականացվում է. .»: Թե ու՞մ կողմից և ինչպե՞ս է «իրականացվում», իր տեղում կտեսնենք, իսկ այստեղ մի անգամ ևս կարդացեք «ՀՀ արտաքին քաղաքականությունը» բառերը: Այսինքն, արտաքին քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությանն է, ոչ թե այս կամ այն պետական մարմնինը կամ պաշտոնյայինը. Որովհետև պետական մարմիններն էլ, պաշտոնյաներն էլ անցողիկ են, եթե նույնիսկ այդ պաշտոնյաները... անսահմանափակ իշխանությամբ

օժտված կայսրեր լինեն, ինչպես Ալեքսանդր Մակեդոնացին էր. Բայց նա էլ մահկանացու էր բոլոր մահկանացուների նման Իսկ պետությունները, համենայն դեպս իրենց ճնշող մեծամասնությամբ (Հայաստանի 1-ին Հանրապետության բացառիկ տխուր օրինակի նման դեպքերը չհաշված) միշտ շատ ու շատ ավելի երկարակյաց են...սեփական պաշտոնյաներից: Պետություններ կան, որոնք գոյատևում են հարյուրամյակներով ու նույնիսկ հազարամյակներով, մյուսները շատ ավելի երիտասարդ են, մի քանի տասնյակ տարեկան: Այս վերջիններից է նաև մեր պետությունը, Հայաստանի 3-րդ Հանրապետությունը, որն իր նորօրյա անկախությունը հռչակել է 1991 թվականի սեպտեմբերի 21-ին:

Արդ, դառնանք այս գլխի հիմնական հարցադրմանը ի՞նչ է ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ:

Հասարակագիտական գրականության մեջ ամենից ավելի չարչրկված հարցերից մեկն է սա: Մարքսիզմը պետությունը դիտում էր զուտ դասակարգային պայքարի հայեցակետից և ըստ այդմ գտնում էր, թե պետությունը մի դասակարգի իշխանությունը մյուսի վրա պահելու **բռնության գործիք է:** Ռուս բոլշևիկները, նրանց առաջնորդ Ուլյանով Լենինը ա՛յս հայեցակետից ելնելով զարգացրին և գործնականում կիրառեցին *պրոլետարիատի դիկտատուրայի* , իբրև կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանի «միակ հնարավոր պետության ձևի» իրենց տեսությունը, որը Ռուսաստանի ժողովուրդներին, ինչպես և երբեմնի խորհրդային հանրապետությունների մյուս ժողովուրդներին բառացիորեն արժեցավ տասնյակ-միլիոնավոր մարդկային կյանքեր: Գործնականում իրականացնելով «տապալված դասակարգերի դիմադրության ճնշման» տեսական դրույթը, *պրոլետարիատի դիկտատուրայի պետությունը* անխնա ոչնչացնում էր ոչ միայն իսկապես դիմադրողներին, այլև կասկածելիներին, ոչ միայն «սոցիալապես անհարազատ տարրերին», այլև սեփական մոլեռանդներին ու նվիրյալներին, եթե այդպիսիները ևս վստահություն չէին ներշնչում անսահմանափակ իշխանության հասած ամեն կարգի համապետական ու տարածաշրջանային մասշտաբի «առաջնորդ-

ների» և «առաջնորդիկների» նկատմամբ իրենց նվիրվածության կամ առնվազն լոյալության մեջ· Որովհետև տվյալ առաջնորդներն ու առաջնորդիկները սովորել էին իրենց նույնացնել.. *պետության* հետ: Ահա և սեփական անձի նկատմամբ ամենաանշան անբարյացակամությունը կամ նույնիսկ այդպիսի անբարյացակամության *կասկածը* վերագրվում էր. . պետությանը. Երբեմն անկեղծ, իսկ շատ հաճախ նաև դիտավորյալ էր վերագրվում սեփական պաշտոնի ամրապնդման կամ ավելի բարձր պաշտոն զբաղեցնելու մղումներով մրցակիցներին չեզոքացնելու համար: Այս է, որ քաղաքացիական պատերազմի ու համատարած կոլեկտիվացման դժոխքներից հետո նոր դժոխքներ ստեղծեց և դարձյալ տասնյակ-միլիոնավորների *ՁՈՒԼԱԳ*-ի զնդաններ տարավ ու կառափնարաններ բարձրացրեց՝ անծայրածիր երկիրը հերթական անգամ ողողելով արյան գետերով...

Իհարկե, և Մարքսի, և նրանից հետո եկած ժամանակներում մարդկային հասարակության պատմությունը զուտ իբրև դասակարգային պայքարի պատմություն ներկայացնելու, սրանից ելնելով պետությունը սոսկ իբրև բռնության գործիք համարելու մտայնությունը արժանացել է սուր քննադատության, համարվել միակողմանիություն և ծայրահեղականություն: Բայց հանուն ճշմարտության պիտի խոստովանել, որ քննադատողներն իրենք էլ պետության ավելի համոզիչ բնորոշում չէին տալիս: Ավելի հաճախ, չկարողանալով աչք փակել դասակարգային պայքարի վրա և քիչ թե շատ ընդունելի բացատրություն տալ դրան, հակամարքսիստները շեշտում էին, թե պետությունը ոչ թե մեկ դասակարգի իշխանությունը մյուսի վրա պահելու բռնության գործիք է, այլ ճիշտ հակառակը *դասակարգային բախումները չափավորելու,* անգամ դասակարգային *համերաշխություն* հաստատելու միջոց, մի տեսակ ներազգային կամ ներհասարակական համաձայնության, անգամ յուրօրինակ *դաշինքի արտահայտություն*: Այն, որ պետությունը այս կամ այն չափով կատարում է թե մեկ, թե երկրորդ, թե երրորդ խնդիրները կասկածից դուրս է: Բայց դա պետության համապարփակ բնորոշում չէ, նրա գործառույթների

բնորոշումն է Ընդսմին ոչ բոլոր գործառույթների Իսկ պետության համար ժամանակակից հասարակագիտական միտքը տալիս է այլ, ըստ իս շատ ավելի ընդունելի և ընդգրկուն բանաձև **պետությունը մի որոշակի տարածքի վրա ապրող քաղաքացիների քաղաքական ինքնորոշման, ինքնակազմակերպման և հասարակական ինքնակառավարման բարձրագույն ձևն է:**

Բարձրագույն, որովհետև տվյալ տարածքի վրա կարող են լինել նաև ինքնակազմակերպման և ինքնակառավարման ավելի ցածր մակարդակներ զանազան ինքնավարություններ այլ պետությունների կազմում դաշնային կամ համադաշնային սկզբունքներով: Այստեղ «տարածք» ասելով հասկացվում է համաշխարհային հանրության կողմից ընդունվող և որոշակի աշխարհագրական սահմաններով նշագծված այն տիրույթը, որի վրա գերակայում է միայն և միմիայն տվյալ պետության սուվերենությունը կամ ինքնիշխանությունը, գործում են միայն այդ պետության օրենքները, ինչպես նաև միջազգային իրավունքի միայն այն նորմերը, որոնք ընդունել և վավերացրել է տվյալ պետությունը. Սա մեկ. Երկրորդ տվյալ տարածքի վրա ապրող քաղաքացիները իրացնում են քաղաքական ինքնորոշման իրենց անկապտելի իրավունքը ազատ կամարտահայտմամբ սահմանելով իրենց պետության *կառավարման ձևը, քաղաքական ինստիտուտները, հասարակական ինքնակառավարման մարմինները, ինքնիշխանության այն չափը, որն, ինչպես Ռուսաստանի 1-ին նախագահ Բորիս Ելցինը կասեր, ի վիճակի են իրացնել: Ավելի պարզ տվյալ տարածքի վրա ինքնորոշված հանրությունը,* ի դեմս իր բոլոր քաղաքացիների ազատ կամարտահայտման (ինչը ժամանակակից աշխարհում սովորաբար իրականացվում է հանրաքվեների և Սահմանադրության ընդունման միջոցով), ինքնուրույնաբար է լուծում այն հարցերը, թե ինչ վարչակարգ է ուզում հաստատել, կառավարման ինչ ձև է նախընտրում միապետությու՞ն, թե՞ հանրապետություն (որոնք իրենց հերթին տարատեսակներ ունեն) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման իրականացման ի՞նչ մարմիններ է գերադասում ստեղծել վերից

վար, վարչատարածքային ի՞նչ բաժանում է նպատակահարմար գտնում, իշխանության փոփոխման ու նորացման ո՞ր մեխանիզմներն ու եղանակներն է ընդունելի կամ նախընտրելի համարում իր համար և այլն, և այլն·

Այն բանից հետո, երբ պետությունն ստեղծված ու ճանաչված է միջազգային հանրության կողմից (աշխարհում չճանաչված պետություններ էլ կան, բայց դրանց կանդրադառնանք իր տեղում), նա սկսում է կատարել իր հիմնական գործառույթները: Դրանք, միգուցե նույնիսկ ձեզ համար շատ տարօրինակ հնչի, ընդամենը 2-ն են արտաքին **աշխարհի հետ հարաբերվելու (կամ շփվելու) և ներքին-կազմակերպչական** գործառույթներ:

Ամեն պետություն յուրովի է լուծում թե մեկ, թե՛ մյուս գործառույթներից բխող հարցերը: Ներքին-կազմակերպչական գործառույթների մեջ մտնում են քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, հասարակական կարգ ու կանոնի ապահովումը, պետության ներսում տնտեսավարելու, բարիքներ արարելու և դրանք սպառելու հնարավորությունների ստեղծումը: Այդ և հասարակության ներքին կյանքին առնչվող մյուս բոլոր հարցերը լուծվում են ներպետական օրենքների, պետական կառավարման մարմինների կողմից ենթաօրենսդրական ակտերի ու որոշումների ընդունման և դրանց կատարումն ապահովելու մեխանիզմների, այդ թվում նաև հարկադրանքի մեխանիզմների գործադրման ճանապարհով: Դրանք, որքան էլ բարդ, սակայն զուտ տվյալ պետությանը վերաբերող խնդիրներ են, և իշխանությունների ու հասարակության անդամների բավարար քաղաքական կամքի առկայության դեպքում, լիովին լուծելի են:

Շատ ավելի բարդ է արտաքին աշխարհի հետ հարաբերվելու խնդիրը: Դա արդեն ոչ միայն և ոչ այնքան տվյալ պետության ու նրա քաղաքացիների ցանկություններից է կախված, որքան շրջապատող աշխարհի վերաբերմունքից:

Ցավոք, արտաքին աշխարհը (մանավանդ հարևանները) միշտ չէ, որ բարեկամաբար են տրամադրված լինում տվյալ պետության նկատմամբ:

Չնայած միջազգային իրավունքը ցանկացած պետության հանդեպ ուժի կիրառումը դատապարտում է (բացառյալ այն դեպքերի, երբ այդպիսի թույլտվություն տալիս է ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը աշխարհի կամ այլ երկրների անվտանգությանը տվյալ պետությունից բխող սպառնալիքը ուժով վերացնելու համար), այնուամենայնիվ, ամեն պետություն առաջին հերթին ինքն է հոգում իր անվտանգության խնդիրները. Քանզի, ավա՜ղ, միջազգային իրավունքի կիրառման մեխանիզմները կատարյալ չեն: Ուստի պետությունների մեծամասնությունը գերադասում է հոգալ սեփական *զինված ուժերի* ստեղծման, ռազմական դաշինքների մեջ մտնելու կամ չեզոքություն պահպանելու մասին:

Պետությունները, երբ արդեն լուծում են իրենց գոյությունն ապահովելու գլխավոր խնդիրը (ճանաչվում են, ստեղծում են պետական կառույցներ, այդ թվում բանակ) , դրան զուգահեռ, մանավանդ ժամանակակից աշխարհի խիստ արագընթաց «ռիթմի» պայմաններում, իրար հետ հազար ու մի կապերի մեջ են մտնում: Նկատի ունեմ առևտրատնտեսական հարաբերությունները, քաղաքացիների և կազմակերպությունների ամեն տեսակ շփումները, սկսած պարզ-մարդկային նամակագրությունից, հեռախոսային խոսակցություններից ու փոխայցելություններից, վերջացրած գործարար ու մշակութային կապերով: Մի խոսքով, եթե ճիշտ է, որ մարդը հասարակական կենդանի է ու չի կարող ապրել հասարակությունից դուրս (քանզի նույնիսկ Ռոբինզոն Կրուզոն իր անմարդաբնակ կղզում մենակ չէր նրա հետ իր ժամանակի քաղաքակրթության նվաճումների իմացությունն էր և մարդկության ողջ նախընթաց փորձի հիշողությունը ըստ իր անհատական օժտվածության չափի), ապա ճիշտ է նաև, որ ժամանակակից պետությունները նույնպես չեն կարող գոյատևել մյուս պետությունների ընկերակցությունից դուրս, նրանցից լիովին կտրված ու մեկուսացված: Այդպիսի լիակատար կտրվածության ու մեկուսացվածության, նույնիսկ շատ մեծ ցանկության դեպքում (ինչը հատկապես հատուկ է ամբողջատիրական երկրներին) ուղղակի անհնար է հասնել: Կապի միջոցների զարգացումը, հատկապես

նորագույն տեխնոլոգիաները, ուղղակի փշրում են պետությունների ու ժողովուրդների միջև հաղորդակցությունն արգելելու կամ սահմանափակելու ամեն մի հնարավորություն:

Այժմ, երբ դուք գիտեք, թե ինչ է արտաքին քաղաքականությունը, որը անձամբ ես կբանաձևեի իբրև «մնացյալ աշխարհի հետ տվյալ պետության հարաբերվելու կանոնագիրք», ժամանակն է անդրադառնալու նաև այն հարցին, թե ինչպես է իրականացվում այդ «կանոնագիրքը»:

Ամենատեսանելի պետական մարմինը, որն զբաղվում է արտաքին քաղաքականության անմիջական իրականացմամբ, արտգործնախարարությունն է: Չկա մի երկիր, որ այդպիսի գերատեսչություն չունենա (անունները տարբեր կարող են լինել դեպարտամենտ, կոմիսարիատ, նախարարություն և այլն, բայց դրանից նրանց էությունը չի փոխվում): Արտգործնախարարության միջոցով է իրականացվում տվյալ պետության ողջ դիվանագիտական ու այլ կարգի պաշտոնական գրագրությունը այլ պետությունների հետ, կազմակերպվում բարձրաստիճան պաշտոնյաների այլևայլ շփումները:

Արտգործնախարարությունն է համակարգում այլ նախարարությունների գծով արտաքին հարաբերությունների կազմակերպումը, երկիր մուտքի ու ելքի արտոնության տրամադրումը օտարերկրյա քաղաքացիներին:

Արտգործնախարարությունն է լիազորված պետության ու նրա ղեկավարների, այդ թվում իր իսկ անունից հանդես գալու զանազան հայտարարություններով, միջազգային կառույցներին և այլ պետություններին հղելու պաշտոնական գրություններ (դրանք սովորաբար «նոտա» են կոչվում): Ուրիշ ոչ մի նախարարություն նոտա տալ չի կարող: Նույնիսկ այնպիսի մի հզոր ուժային կառույց, ինչպիսին պաշտպանության նախարարությունն է, հայտարարություն անել կարող է, սակայն նոտա հղել ոչ: Անշուշտ, արտգործնախարարությունն իրականացնում է նաև բազմաթիվ այլ գործառույթներ, որոնց թվարկումը մեր խնդիրը չէ: Բայց դրանցից ևս մեկը շրջանցել չեմ կարող արտգործնախարարությունը, ելնելով սեփական ինֆորմացիայից, կատարում է կանխատեսումներ և մշակում է հանձ-

նարարականներ ավելի վերադաս մարմինների համար: Դրանցում, պարզ ասած, շարադրվում են այն առաջարկները, որ արտգործնախարարությունը նպատակահարմար է համարում ներկայացնել երկրի ղեկավարությանը համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

Արտաքին աշխարհի հետ հարաբերվելու զանազան գործառույթներ են իրականացնում, եթե ելնենք կոնկրետ մեր երկրի օրինակից, նաև մյուս նախարարությունները (որպես կանոն արտգործնախարարության միջոցով), Ազգային ժողովը հանձին իր նախագահի, փոխնախագահների, մշտական հանձնաժողովների նախագահների գլխավորած պատվիրակությունների փոխայցելությունների, կառավարության ղեկավարը ի դեմս իր նույն կարգի պաշտոնական շփումների, նախագահին կից Անվտանգության խորհուրդն ու նրա քարտուղարը և, իհարկե, Հանրապետության նախագահը: Վերջինս պետության արտաքին քաղաքականությունն իրականացնող բարձրագույն պաշտոնյան է: Սահմանադրության մեջ նախագահի լիազորություններին նվիրված է 55-րդ հոդվածը, որի 7-րդ և 8-րդ ենթակետերը նվիրված են արտաքին քաղաքականությանը. նախագահը «7) ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում, իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, կնքում է միջազգային պայմանագրեր, ստորագրում է Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագրերը, վավերացնում է միջկառավարական պայմանագրերը. 8) նշանակում և ետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին, ընդունում է օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը»: Այս ամբողջ շարադրանքից, որը հիմնականում ներառում է արարողակարգային գործառույթներ, ձեր ուշադրությունը հատուկ հրավիրում եմ «իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը» բառերի վրա: Դրանք վկայում

են, որ պետության արտաքին քաղաքականությունն իրականացնելիս վերջին ու վճռական խոսքի իրավունքը, դրա հետ միասին, անշուշտ, նաև ամենամեծ պատասխանատվությունը, նախագահինն է

Իսկ պետություններն իրար հետ հարաբերվելիս, պետական պաշտոնյաները, այդ թվում նախագահները բանակցություններ վարելիս ի՞նչ սկզբունքներով են առաջնորդվում. Կա՞ն պետությունների հարաբերման ինչ-ինչ կանոններ՝ Անշուշտ, կան, և դրանք մշակվել-բյուրեղացել են դարերի ընթացքում, իրենց արտահայտությունն ստանալով միջազգային իրավունքի նորմերում, ՄԱԿ-ի կանոնադրության, միջազգային կոնվենցիաների և բազմակողմ ու երկկողմ պայմանագրերի մեջ: Հիմնականը, որ կուզենայի մեկընդմիշտ հիշեր այս գրքի ընթերցողը. հետևյալն է **պետությունները հավասար են իրենց արժանապատվությամբ:** Նրանք միջազգային կառույցներում, օրինակ, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի լիագումար նիստում, ունեն հավասար ձայն յուրաքանչյուրը մեկական:

Սակայն ինքներդ էլ հասկանում եք, որ մի բան է *տեսական* հավասարությունը, այլ բան իրական կյանքը: Ի պաշտոնե այս աշխարհի գերհզոր պետության, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշն ու Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը հավասար են, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում քվեարկությունների ժամանակ Հայաստանն ու Նահանգները ունեն մեկական ձայն: Բայց ակնհայտ է, որ աշխարհում Հայաստանի և Նահանգների քաղաքական դերակատարությունները խիստ տարբեր են: Եվ այդ տարբերությունները պայմանավորված են պետություններից յուրաքանչյուրի ռազմական, տնտեսական, սոցիալական հզորությամբ: Պատկերավոր ասած, մեր ձայները ՄԱԿ-ում հավասար են, սակայն այդ ձայներից յուրաքանչյուրն ունի ուժգնության սեփական աստիճանը մեկի ձայնն այնքան հզոր է, որ դղրդացնում է աշխարհը, լսելի է մոլորակի բոլոր ծայրերում, իսկ մյուսի ձայնը, ավա~ղ, չափազանց թույլ է, շնչահատ, հազիվ լսելի նույնիսկ մերձավոր երկրներում, ուր մնաց թե մոլորակում: Այս գործնական *անհավասարությունը* իր միջազգային-իրավական ձևակերպումն է ստացել նույնիսկ

ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, երբ ձևավորվել է նրա Անվտանգության խորհուրդը իր 5 մշտական անդամներով ԱՄՆ, ԽՍՀՄ (այժմ Անվտանգության խորհրդում այդ տեղն զբաղեցնում է նրա իրավահաջորդը Ռուսաստանի Դաշնությունը), Անգլիա, Ֆրանսիա, Չինաստան· Այս երկրներից յուրաքանչյուրին վերապահված է Անվտանգության խորհրդի ցանկացած որոշման նկատմամբ արգելք («վետո») կիրառելու իրավունք· Բավական է այս հնգյակից ցանկացած մեկի «վետոն», որպեսզի որոշումը, եթե նույնիսկ դրան կողմ են աշխարհի մյուս բոլոր պետություններն անխտիր, չընդունվի. ՄԱԿ-ի կանոնադրության մշակման և ընդունման ժամանակ այս հնգյակից միայն ԱՄՆ-ն ուներ միջուկային զենք: Սակայն շատ կարճ ժամանակ անց այդպիսին դարձան նաև մյուսները: Հասկանալով այս հնգյակի ռազմական հնարավոր բախման ամբողջ կործանարարությունը ողջ մարդկային քաղաքակրթության համար, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ձևավորման սկզբունքների մեջ կատարվեց այդ վերապահումը գերհզոր երկրներին օժտելով վերը նշածս «վետոյի» իրավունքով: Այսինքն, նրանք կարող էին գործել կամ բոլորը միասին, հետևաբար հանդես պիտի գային իբրև դաշնակիցներ, կամ իրենցից թեկուզև մեկի առարկության դեպքում ընդհանրապես չպիտի գործեին, որպեսզի դուրս չգային միմյանց դեմ: Սա այլ բան չէր, եթե ոչ իրենց *արժանապատվությամբ հավասար,* սակայն կարողություններով ակնհայտորեն տարբեր պետությունների *փաստացի անհավասարության* ամրագրում այնպիսի մի բացառիկ կարևոր միջազգային փաստաթղթում, ինչպիսին ՄԱԿ-ի կանոնադրությունն էր: Սակայն կյանքը հարափոփոխ է: ՄԱԿ-ի հիմնադրումից ի վեր ռազմատնտեսական հզորության առումով մեծ առաջընթաց են ապրել նաև այլ պետություններ: Մասնավորապես, սեփական միջուկային զինանոցի առկայության մասին հայտարարություն են արել Հնդկաստանն ու Պակիստանը: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ միջուկային կամ, առնվազն, զանգվածային ոչնչացման այլ զենքեր (քիմիական, կենսաբանական) ունեն նաև Իսրայելը, Սիրիան, Իրանը, Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունը, Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունը և

ուրիշներ. Չի կարելի հաշվից դուրս նետել նաև այն պետություններին (Ճապոնիա, Մալայզիա և այլն), որոնք թեև ռազմական առումով սպառնալիք չեն ներկայացնում, սակայն տնտեսական այնպիսի մեծ հզորության են հասել, որ ակնհայտորեն ազդեցություն են գործում համաշխարհային քաղաքական կլիմայի վրա: Այս հանգամանքը կանխորոշում է ՄԱԿ-ի ԱԽ-ի հետագա ընդլայնման անխուսափելիությունը, բայց հարցն այդ չէ Հարցը, կրկնում եմ, միջազգային իրավունքի տեսակետից բացարձակապես իրավահավասար, սակայն գործնականում *անհավասար* պետությունների առկայությունն է:

Սակայն վերադառնանք մեր շարադրանքին պետությունների միջև հարաբերությունների սկզբունքներին:

Դրանցից 2-րդը, որ դարձյալ կուզենայի երբեք չմոռանաք, **արգելում է ոչ միայն ուժի գործադրումը, այլև ուժի գործադրման սպառնալիքը** պետությունների հարաբերություններում: Միջազգայնորեն թույլատրվում է *ուժ գործադրել* , ինչպես արդեն առիթ ունեցա քիչ վերը նշելու, միայն ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշմամբ, այն էլ բացառիկ դեպքերում: Սակայն պետություններից ոչ մեկը մյուսի, կամ պետությունների մի խումբը մյուս խմբի նկատմամբ, առանց ՄԱԿ-ի ԱԽ-ի թույլտվության, իրավունք չունի ուժ կիրառել կամ ուժի կիրառմամբ սպառնալ:

Պահպանվու՞մ է, արդյոք, այս հիմնարար սկզբունքը: Մեծ մասամբ այո, սա քիչ բախումներ և ողբերգություններ չի կանխել: Միջազգային հանրության աչքում «ագրեսոր» ճանաչվելու, հետևաբար նաև ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշմամբ միջազգային ուժերի հարվածի թիրախ դառնալու վախը, անկասկած, քչերին չի կանգնեցրել և մեկ տաք գլուխ չէ, որ սառեցրել է: Սակայն քիչ չեն նաև միջպետական հարաբերություններում ուժի կիրառման դեպքերը հատկապես գերտերությունների, ինչպես և նրանցից մեկի կամ մյուսի հովանավորությունը վայելող պետությունների կողմից: Այսպես, Խորհրդային Միությունը, լինելով ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամ, շրջանցելով այդ մարմնի կարծիքը և հակառակ այդ կարծիքի ագրեսիա է ձեռնարկել Հունգարիայի (1956), Չեխոսլովակիայի (1968), Աֆղանստանի (1979) նկատմամբ: Օգտվելով իր գործողությունները դատա-

պարտող բանաձևերի նկատմամբ ՄԱԿ-ի ԱԽ-ում «վետո» կիրառելու իրավունքից, այլոց նկատմամբ մեծ կամ փոքր ագրեսիաներ ու արյունահեղ պատերազմներ քիչ չի սանձազերծել նաև ԱՄՆ-ը: Բավական է հիշել Հյուսիսային Կորեայի (1951-1952) ու Վիետնամի դեմ մղվող պատերազմները (1964-1974), որոնցից վերջինը հետագայում իրենք իսկ դատապարտեցին: Ավելի մոտ ժամանակներից հիշենք ԱՄՆ-ի ագրեսիայի զոհը դարձած Հարավսլավիայի բարբարոսական ռմբահարումները (1998) և Իրաքի օկուպացիան (2003): ԱՄՆ-ի հովանավորյալներից Իսրայելն իր հերթին ագրեսիվ պատերազմներ է վարել Մերձավոր արևելքում, մասնավորապես Սիրիայի դեմ 1967 և 1973 թվականներին, բազմիցս ներխուժել է հարևան արաբական տերությունների տարածք և մինչև այժմ էլ բռնազավթած է պահում արաբական հողերի պատկառելի հատվածներ (Գոլանի բարձունքները Սիրիայում, Հորդանանի Արևմտյան ափի քաղաքները Պաղեստինի ինքնավարության տարածքում): *Ուժի կիրառման անթույլատրելիության* սկզբունքը չխանգարեց նաև ադրբեջանական ագրեսորներին հարձակվելու իր ինքնորոշման իրավունքից օգտվել փորձող և մայր-հայրենիքի հետ վերամիավորվելու խնդրանքով Խորհրդային Ադրբեջանի Գերագույն խորհրդին միանգամայն քաղաքակիրթ կերպով դիմում հղած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վրա, երբ դեռ Խորհրդային Միությունը չէր փլուզվել, իսկ այդ փլուզումից հետո պատերազմ վարելու նաև ԼՂՀ անվտանգության երաշխավոր Հայաստանի Հանրապետության դեմ: Իհարկե, Ադրբեջանն այդ պատերազմում ջախջախվեց, սակայն մինչև այժմ էլ շարունակում է Հայաստանի ու Արցախի շրջափակումը, իսկ դա թշնամական-պատերազմական ակցիա է: Բացի այդ, Բաքվից պարբերաբար հնչում են նաև «Ղարաբաղի հարցը պատերազմով լուծելու» իրենց վճռականության մասին հոխորտանքներ, իսկ դա այլ բան չէ, քան ուժի գործադրման սպառնալիք: ՀՀ-ի նկատմամբ թշնամական քաղաքականություն է իրականացնում նաև Ադրբեջանի ավագ եղբայր Թուրքիան, որն իր հերթին ցամաքային շրջափակման է ենթարկում մեր երկիրը: Եվ չնայած

այս կարգի օրինակները քիչ չեն, այնուամենայնիվ, պետությունների հարաբերություններում ուժի կիրառման և դրա գործադրման սպառնալիքի անթույլատրելիության սկզբունքը քաղաքակրթիչ նշանակություն է ունեցել անցյալում և դեռ ունենալու է թե մոտ, թե հեռու ապագայում·

Միջպետական հարաբերությունների հաջորդ կարևոր սկզբունքը **միմյանց տարածքային ամբողջականության ճանաչման սկզբունքն է:** Սա մեկը մյուսից տարածքային պահանջներ չունենալու հանձնառություն է և չափազանց կարևոր է բոլորի համար, որովհետև աշխարհում շատ քիչ են մանավանդ այնպիսի հարևան պետությունները, որոնք իրարից տարածքային պահանջներ չունեն: Ավա՜ղ, համարյա չկան այդպիսի տարածքային պահանջների խաղաղ, քաղաքակիրթ լուծման օրինակներ: Ժամանակակից աշխարհում նման եզակի փաստ է Ալանդյան կղզիների օրինակը, երբ Ֆինլանդիան ու Շվեդիան, դասեր քաղելով իրենց արյունոտ ու երկարատև բախումների պատմությունից, տվյալ կղզիների պատկանելության հարցը լուծել են փոխշահավետ պայմանագրով. կղզիները համարվում են Ֆինլանդիայի սուվերենությանը ենթակա տարածք, սակայն դրանց շվեդ բնակիչները լիովին ազատ են իրենց ինքնավարությունն իրականացնելիս չեն զորակոչվում ֆիննական բանակ, գործածում են ցանկացած դրամարժույթ, ազատորեն կապ են պահպանում մայրհայրենիքի հետ և այլն, և այլն: Սա, կրկնում եմ, բացառիկ, եզակի օրինակ է Մնացած բոլոր դեպքերում հողի հարցը միշտ եղել է արյան հարց, լուծվել կամ անլուծելի մնացել պատերազմների միջոցով. Ահա ինչու Հայաստանի Հանրապետությունը երբեք և ոչ մի ամբիոնից պետական մակարդակով հարց չի բարձրացրել Թուրքիայից, իբրև երբեմնի Օսմանյան կայսրության իրավահաջորդից, մեր ժողովրդի հողային արդար պահանջատիրության մասին. Հայաստանի Հանրապետությունը պետականորեն հետապնդել և ի լուր աշխարհի հայտարարել է միայն նույն Օսմանյան կայսրությունում 1915 թվականին իրականացված Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը, որպես իր *արտաքին քաղաքականության* անկյունաքարերից մեկը: ՀՀ

նախագահ Ռոբերտ Քոչարյանն այդ մասին հայտարարել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր ամբիոնից, արծարծել է Եվրոպայի Անվտանգության ու Համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) անդամ-երկրների ղեկավարների Ստամբուլի գագաթաժողովում (1999), նաև դրանից առաջ Սևծովյան տնտեսական համագործակցության անդամ-երկրների նախագահների Յալթայի (1998 թ. մայիս) Վեհաժողովի շրջանակներում Թուրքիայի այն ժամանակվա նախագահ Սուլեյման Դեմիրելի հետ վերջինիս խնդրանքով իր ունեցած հանդիպման ժամանակ: Յուրաքանչյուր դեպքում Հայաստանն իր նախագահի շուրթերով խոսել է ոչ թե հայոց *պահանջատիրության*, այլ **Հայոց ցեղասպանության** ճանաչման մասին, որպես անցյալի ցավագին էջը միասին շրջելու և երկու պետությունների հարաբերություններում նոր էջ բացելու բարոյական քայլ: Հայկական կողմի այս քաղաքականությունն է, որ Թուրքիան աշխարհին ներկայացնում է իբրև «Հայաստանի կողմից իրեն ներկայացվող հողային պահանջ», այսինքն՝ իր տարածքային ամբողջականությունը պաշտոնական Երևանի կողմից *չընդունելու* արտահայտություն: Ելնելով այս կասկածելի մեկնաբանությունից, Անկարան աղաղակում է, թե թող Երևանը պաշտոնական հայտարարություն անի, որ «Հայաստանը Թուրքիայից հողային պահանջ չունի»: Սա փարիսեցիական հարցադրում է: Այդ ե՞րբ է Հայաստանն ասել, որ հողային պահանջ... ունի: Ուրեմն ինչու՞ պիտի «հերքի» մի բան, որը երբեք չի ասել:

Պատկերացնում եմ իմ երիտասարդ ընթերցողի զարմացած հայացքը՝ մի՞թե այս տողերը գրողը ինքն էլ համոզված է, թե մենք Թուրքիայից իսկապես հողային պահանջ չունենք: Պետականորեն, այո՛, չունենք: Սակայն ո՞վ է ասել, թե իբրև ժողովուրդ, իբրև թուրքերի իրականացրած վայրագ Ցեղասպանության զոհերի վերապրող շառավիղներ, որ կազմում ենք Հայաստանի Հանրապետության բնակչության մեկ երրորդը և ամբողջ աշխարհասփյուռ հայությունը մեր երկրից դուրս, նույնպես այդպիսի պահանջ չունենք: Անշուշտ, ունենք և ունենալու ենք այնքան ժամանակ, քանի դեռ ցեղասպանի ժառանգներն իրենց ձեռքում են պահում իրենց պապերի անա-

գորույն ոճրագործության հետևանքով մեզնից խլված մեր Հայրենիքը: Հայաստանի Հանրապետությանը ոչ ոք իրավունք չի տվել հանդես գալու ցեղասպանության ենթարկված ժողովրդի ու նրա վերապրող շառավիղների անունից և հայտարարելու, թե իբր...հողային պահանջատիրություն չունի: Այլ խոսքով, Հայաստանի Հանրապետությունը երբևէ Արևմտահայաստանի սեփականատերը չի եղել, որ հիմա իր այդ «սեփականությունից» հրաժարվելու հայտարարություն անի:

Այդ դեպքում ինչպե՞ս է այս տողերի հեղինակը տեսնում *հայոց պահանջատիրության* ապագան: Որտե՞ղ է դրա լուծման բանալին: Եվ կա՞, արդյոք, այդպիսի բանալի:

Կա, համոզված եմ: Առաջին և ամենացանկալի լուծումն այն կլիներ, եթե թուրքերը քաղաքակրթվեին այն աստիճան, որ ամաչեին իրենց նախնիների վայրագ, արյունռուշտ անցյալից, ճանաչեին Հայոց ցեղասպանության ոճիրի ամբողջ ահավորությունը և իրենց բարոյական պատասխանատվությունը, որպես ոճրագործների ժառանգների, պատրաստակամություն հայտնելով **հատուցում ու բավարարություն** տալու զոհերի ժառանգներին: Այդ հատուցման ձևերը կարող են տարբեր լինել, սկսած նյութական-դրամական փոխհատուցումից, ցեղասպանության ժառանգների՝ Հայրենիք վերադառնալու իրավունքի ճանաչումից (Թուրքիան դա մերժում է 1926 թվականին ընդունած հատուկ օրենքով, որով սպանդից փախած ժողովրդի հրաշքով կենդանի մնացած զավակներին անվանում են «դավաճան ժողովուրդ», որն այլևս երբեք «իրավունք չունի վերադառնալ Թուրքիայի տարածքի իր նախկին բնակության վայրերը»), վերջացրած հայկական Հայրենիքը իր բնիկ տերերին կամավոր վերադարձնելու այսօր դեռ ֆանտաստիկ թվացող հնարավորությունը: 2-րդ և այսօր դարձյալ քիչ հավանական թվացող միջոցը Թուրքիայի փլուզումն է կամ ռազմական այնպիսի ջախջախումը, որը հնարավորություն կստեղծի հայտարարություն անել ստեղծված անտերունչ վիճակում Հայոց պատմական հայրենիքին **տեր կանգնելու** մասին: Միգուցե ապագայում գտնվեն նաև այլ միջոցներ կամ ճանապարհներ, որոնք այսօր դեռ չեն երևում: Սակայն որևէ

տարակույս լինել չի կարող, որ պատմական ոճիրը պատժվելու, և արդարությունը հաղթանակելու է: Թուրքերը չեն կարող հավերժորեն ապրել այդ ոճիրի համար անվերապահորեն պատասխան տալու *սարսափի* տակ. Բայց դա ապագայի հարց է, այսօրվա կամ վաղվա խնդիր չէ, առավել ևս մեր առայժմ դեռ տկար պետության լուծելիք խնդիրը չէ: Առաջին քայլը առայժմ դեռ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը հասնելն է, այդ թվում նաև Թուրքիայի կողմից ճանաչմանը: Դա Հայոց պահանջատիրության հաջորդ քայլերի նախապայմանն է, գալիք պատմական հաշվեհարդարներում մեր *արդարացիության* միջազգային-իրավական հիմքերի նախապատրաստումը: Այս է, որ կատաղության է հասցնում ժամանակակից թուրքերին մանավանդ այն դեպքերում, երբ հերթական պետությունը կամ միջազգային կազմակերպությունը հանդես է գալիս Հայոց Ցեղասպանության ճանաչման հայտարարությամբ կամ օրենքի ընդունմամբ: Ժխտելով Հայոց ցեղասպանության իրողությունը, դրա միջազգային ճանաչմանը հասնելու Հայաստանի Հանրապետության քաղաքական կեցվածքը նենգափոխելով իբրև «հարևան պետության նկատմամբ Հայաստանի տարածքային նկրտումների», այսինքն Թուրքիայի տարածքային ամբողջականությունը *չճանաչելու* արտահայտություն, այսօրվա թուրքերն այդ կերպ ուզում են *ապահովագրել* իրենց ժառանգներին, նրանց ազատել *հատուցման պարտքից:* Չու՛ր ջանքեր: Արդարությունը հիվանդանում է, բայց չի մեռնում: Աստված հապաղում է, բայց չի ներում: Չի ներում մանավանդ չզղջացողին, համառողին: **Հայոց ցեղասպանության ոճիրը ժխտելով՝ Թուրքիան փաստորեն արդարացնում է իր բարբարոս նախնիների կատարած ոճիրը, դրանով իսկ մեղսակից է դառնում ոճիրին և իր վրա է հրավիրում Բարձրյալի արդար զայրույթը: Իսկ երբ այդ զայրույթը պայթի՝ մե՛նք ենք լինելու Աստծո ձեռքի խարազանը...**

Պետությունների տարածքային ամբողջականության պահպանման միջազգային սկզբունքը նենգորեն փորձում է արցախահայության դեմ իբրև մահակ գործածել նաև Թուրքիայի

կրտսեր եղբայր Ադրբեջանը ԼՂՀ բնակչության ազգային-ազատագրական պայքարը սկզբում ներկայացնելով իբրև անջատողականություն ու ծայրահեղականություն, պաշտոնական Բաքուն փորձում էր արցախահայության դեմ ուղղել հսմաշխարհային հասարակական կարծիքը, հայտարարելով այդ «անջատողականների և ծայրահեղականների կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտման անթույլատրելիության» մասին· Բաքվի վայ-տեսաբանները չէին հասկանում, որ միջազգային իրավունքի տեսակետից պետությունների տարածքային ամբողջականության պահպանման և ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքները հավասարազոր են, չեն հակասում մեկը մյուսին և մեկի գործադրումը չի կարող արգելել մյուսի գործադրումը: Այո, ինչ խոսք, որևէ ժողովուրդ, որն ապրում է իր բնապատմական հայրենիքում, բայց ինչ-ինչ իրողությունների բերումով հայտնվել է այլ պետության գերիշխանության տակ, ինչպես արցախահայության պարագայում է, ինքնորոշման իր իրավունքն իրացնելիս և սեփական անկախությունը հայտարարելիս խախտում է տվյալ գերիշխող պետության տարածքային ամբողջականությունը· Բայց դա *ներսից* կատարված խախտում է, որի մեջ, իբրև կանոն, մեղավոր են լինում գերիշխող ազգերը: Եթե պետությունը ժողովրդավարական լինի, հարգի այս կամ այն պատճառով իր տարածքի մեջ հայտնված ազգային փոքրամասնությունների իրավունքները, չբռնանա նրանց կամքին, չվարի հալածանքի, ծուլման, իր բնօրրանից դուրսմղման բարբարոս քաղաքականություն, բնականաբար, չի բարձրանա նաև այդ ազգային գերությունից ազատագրվելու հարց: Նման դեպքերում, երբ գերիշխող ազգը բիրտ ու բարբարոս է, չի կարելի դրոշ դարձնել նրա տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը և հարկադրել ճնշված ազգային փոքրամասնությանը մնալու այդ բարբարոս պետության կազմում: Դա կնշանակեր **ստրկության հավերժացում**, կբացառեր նոր անկախ պետությունների ստեղծման հնարավորությունը, ժողովուրդներին կբաժաներ 1-ին ու 2-րդ կարգերի, որոնցից 1-ինի մեջ մտնելու իրավունք ունեցող «երջանիկները» արդեն

հասցրել են ստեղծել իրենց անկախ պետությունները, իսկ 2-րդ «դժբախտ» խմբի մեջ հայտնվածները, որոնք անհամեմատ ավելի շատ են, երբևէ այդ երանությանը հասնել չեն կարող: Ահա թե ինչ անհեթեթության կարող է հասցնել պետությունների տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքի դոգմատիկ կիրառումը բռնակալ պետությունների վերաբերմամբ: Որովհետև խնդրո առարկա սկզբունքը վերաբերում է միջազգայնորեն ճանաչված, ինքնիշխան, անկախ պետությունների հարաբերություններին, միջպետական կատեգորիա է, մեկ պետության և նրա գերիշխանության տակ գտնվող ինքնավարությունների հարաբերությունները կարգավորող կատեգորիա չէ: Այս միտքը, որքանով տեղյակ եմ, առաջին անգամ հստակորեն ձևակերպել և հրապարակայնորեն արտահայտել է Հայաստանում Ռուսաստանի Դաշնության 1-ին արտակարգ ու լիազոր դեսպան Վլադիմիր Ստուպիշինը անցյալ դարի 90-ական թվականների սկզբին, կարծեմ՝ 1992-ի ձմռանը: Հիշողությանս մեջ մնացել է ԱՕԿՍ-ի (Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեի) ցուրտ դահլիճը վերարկուների մեջ փաթաթված կիսաքաղց, խիստ նիհարած հայ մտավորականության ներկայացուցիչներով լեցուն (պատերազմ էր, համարյա սնունդ չկար, իսկ հացը քարտերով էր բաշխվում օրական 250 գրամ): ԱՕԿՍ-ի նախաձեռնությամբ հանդիպում էինք Ռուսաստանի դեսպանին: Այդ օրերին ՄԱԿ-ը հերթական բանաձևն էր ընդունել, ուր դատապարտվում էր Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը խախտելու փաստը և պահանջվում էր հայկական զորքերը անհապաղ դուրս բերել այնտեղից: Իհարկե, այդ բանաձևն ընդունվել էր Ադրբեջանի և նրա հովանավորների սադրանքով (ընդհանուր առմամբ ՄԱԿ-ն այդպիսի 4 հակահայ բանաձև է ընդունել): Հետագա տարիներին հաջողվեց ՄԱԿ-ի անդամ-պետությունների շրջանում հետևողական-բացատրական աշխատանքով հասնել այն բանին, որ ՄԱԿ-ը հակամարտության խաղաղ կարգավորման հարցը վերահանձնարարեց ԵԱՀԿ-ին, իսկ վերջինս՝ Մինսկի խմբին ու նրա եռանախագահներին, որոնք կարող էին ավելի

մոտիկից խորամուխ լինել հակամարտության էության մեջ և առաջարկներ ներկայացնել միջազգային հանրությանը: Սակայն այն օրերին այն հույսը, թե միջազգային հանրությունը, ի դեմս ՄԱԿ-ի, երբևէ կփորձի խորամուխ լինել հակամարտության էության մեջ և կձգտի արդարացի լուծման չափազանց փոքր էր: Եվ մեր տրամադրությունն էլ ընկած էր (եթե ավելին չասեմ): Ոէ ահա այդ հուսահատական մթնոլորտում Վլադիմիր Ստուպիշինը՝ հմայիչ, կապուտաչ, տոհմական ռուս ազնվականի կիրթ կեցվածքով ու շարժուձևով, մեր լսարանի համար շարադրեց հարցի իր ընմբռնումը, որ քիչ վերը բերեցի: Այդ դահլիճից անձամբ ես դուրս եկա թևավորված, ներքուստ վստահ, որ Ռուսաստանը թույլ չի տա պետությունների տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքի դոգմատիկ կիրառում արցախյան հակամարտության վերաբերյալ: Տարիներ անցան, և նաև Ռուսաստանի դիրքորոշման շնորհիվ համաշխարհային հանրությունը կամ գոնե նրա մի մասը քիչ թե շատ հասկացավ հարցի էությունը: Այնուամենայնիվ, պետությունների տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքի ստուպիշինյան ձևակերպումը, այսինքն այն, որ դա վերաբերում է **պետությունների և ոչ թե մեկ պետության ու նրա կազմում գտնվող ինքնավարության** հարաբերություններին, աշխարհում դեռ լիակատար ընմբռնում չի գտել: Փոխարենը Ադրբեջանում գտել է: Հասկանալով իրենց վրիպումը, որով հակամարտությունը ներկայացնում էին իբրև «դրսից (պետք է հասկանալ՝ Հայաստանի կողմից) հրահրվող անջատողականություն», ապա նաև Հայաստանի տարածքային *հավակնություն*, ադրբեջանցիները, հերթական անգամ սրբագրման ենթարկելով իրենց «տեսական մոտեցումները» (ընդսմին չհրաժարվելով նախկին ամբաստանություններից), նորանոր «մեկնաբանություններ» են անում: Ըստ այդ նոր «մեկնաբանությունների» ԼՂՀ-ն «միջազգային ահաբեկչության ու միջազգային թմրաբիզնեսի բույն է», իսկ արցախյան հակամարտության էությունը 2 ինքնիշխան պետությունների Հայաստանի և Ադրբեջանի միջև ծագած տարածքային վեճ է:

Կեղծի՛ք է: Արցախյան հակամարտությունը նոր չի սկսվել,

գոյություն ունի 1923 թվականից, երբ այն ժամանակվա կառավարող կուսակցության ՀամԿ(բ)Կ Կովկասյան Բյուրոյի 1921 թվականի հունիսի 5-ի ապօրինի որոշման հիման վրա հայկական բնօրրանը հանձնվել է Ադրբեջանական ԽՍՀ-ին և նրա կազմում ձևավորվել իբրև Ինքնավար Մարզ. Արցախահայությունը երբեք չի համակերպվել այդ անարդարության հետ, տասնամյակներով, նույնիսկ խորհրդային կայսրության դժնդակ պայմաններում, բարձրացրել է մայր-հայրենիքի հետ վերամիավորվելու հարցը: Ամեն անգամ նման հարցադրումը հանդիպել է խորհրդային ղեկավարության բթության ու անընմբռնողության պատին, տեղիք տալով հերթական հիասթափությանն ու ազգային-ազատագրական ձգտումների հերթական սրմանը. Խորհրդային իրականության մեջ վերջին անգամ այդ հարցը բարձրացվեց Միխայիլ Գորբաչովի հռչակած վերակառուցման տարիներին, երբ հավատալով հասարակությունը նորացնելու այդ շատախոսի հավաստիացումներին արցախահայությունը հերթական անգամ ստորագրահավաք կազմակերպեց և ուղարկեց Մոսկվա Ստալինի ճիվաղային կամքով կատարված պատմական անարդարությունը ուղղելու խնդրանքով: Մոսկվան ժամանակ չունեցավ և ցանկություն էլ չուներ դիմումն ըստ էության քննարկելու: 1988-ի հունիսի 18-ին Գորբաչովի նախագահությամբ կայացած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում ընդունվեց հերթական ադրբեջանանպաստ որոշումը անծայրածիր կայսրության մեջ առկա 19 համանման խնդիրների լուծման հույսեր չարթնացնելու և պետության քայքայումը կանխելու մտադրությամբ: Բանդուրս չեկավ սկսվեց ԽՍՀՄ փլուզման կայծակնային գործընթացը: Խրախուսված Մոսկվայի հովանավորչությունից, Ադրբեջանը հրով ու սրով պատասխանեց մայր-հայրենիքին վերամիավորվելու արցախահայության խնդրանքին: Սանձազերծվեց Սումգայիթի սպանդը, սկսվեց հայության զանգվածային բռնագաղթը ողջ Ադրբեջանից, ծայր առավ իսկական պատերազմ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դեմ: Մնացածը ձեզ հայտնի է: Ոտքի ելած արցախահայությունը նախ հռչակեց իր անկախությունը, կազմավորեց իր պետությունը

ԼՂՀ-ն, ապա և ջախջախեց ագրեսորներին. Իհարկե, հայկական կամավորական ուժերի ամենալայն աջակցությամբ, որոնք մայր-ժողովրդի արցախյան հատվածին օգնության շտապեցին աշխարհի բոլոր ծայրերից, այդ թվում, անշուշտ, նաև Հայաստանի Հանրապետությունից: Կամավորական ուժերի այս աջակցությունն է, որ Ադրբեջանն այսօր էլ մատնացույց է անում իբրև Հայաստանի կողմից իր դեմ մղված պատերազմի «վկայություն» իր տարածքային ամբողջականության խախտում, իսկ պատերազմի արդյունքներով ազատագրված Արցախն ու շրջակա հայկական տարածքները (Քաշաթաղ, Քարվաճառ և այլն) «Հայաստանի կողմից բռնազավթված ադրբեջանական հողեր»:

Ի սեր ճշմարտության՝ հարկ է նշել, որ 1994 թ. մայիսի 12-ին Ադրբեջանի թախանձագին խնդրանքով հաստատված զինադադարի պահին ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի վերահսկողության տակ էին գտնվում (և մինչև այսօր էլ մնում են) որոշ ադրբեջանական շրջաններ: Դրանք պատերազմական գործողությունների ընթացքում գրավվել էին բացառապես ռազմական նկատառումներով ԼՂՀ-ի շուրջ անվտանգության գոտի ստեղծելու հրամայականից ելնելով: Զինադադարի պահին Ադրբեջանի գերիշխանության տակ մնացին նաև որոշ հայկական տարածքներ (Գետաշեն, Շահումյան): Խոսելով արցախյան հարցը խաղաղ բանակցությունների և փոխզիջումների ճանապարհով լուծելու պատրաստակամության մասին, հայկական կողմն, անշուշտ, նկատի ունի հենց այդ ադրբեջանական որոշ շրջանները վերադարձնելու կամ Գետաշենի ու Շահումյանի շրջանի հայկական տարածքների հետ փոխանակելու հնարավորությունը: **Ադրբեջանի կողմից ԼՂՀ անկախությունը ճանաչելն այս դեպքում սակարկությունների ենթակա չէ: Որովհետև Արցախը երբևէ չի եղել «ադրբեջանական հող», եղել է Ադրբեջանին բռնակցված հայկական հող, որն արդեն ազատագրվել է: Այժմ և հավիտյանս հավիտենից: Ամե՛ն:**

Սակայն վերադառնանք մեր թեմային պետությունների միջև հարաբերությունների սկզբունքներին: Դրանցից մեկը

հռչակում է **միմյանց** ներքին գործերին միջամտելու անթույլատրելիությունը: Միանգամայն ողջախոհ սկզբունք է, եթե պետությունն ինքնիշխան է, ապա ինքնուրույն էլ պետք է լուծի իր հարցերը, և ոչ ոք չպետք է միջամտի նրա ներքին գործերին:

Պահպանվու՞մ է, արդյոք, այս սկզբունքը պետությունների հարաբերություններում:

Ամենայն անկեղծությամբ պետք է նկատեմ՝ պահպանվում է այնքանով, որքանով պետություններից յուրաքանչյուրն ի վիճակի է *թույլ չտալ* ուրիշներին միջամտելու իր ներքին գործերին: Մյուս բոլոր դեպքերում, երբ պետությունը բավականաչափ զորեղ չէ սեփական անվտանգությունն ապահովելու և ինքնիշխանությունը պահպանելու, ենթակա է այդպիսի միջամտությունների:

Ժամանակակից աշխարհում այլոց ներքին գործերին անբռնազբոս և նույնիսկ լկտի կերպով միջամտելու առավել աղաղակող օրինակներ է տալիս ԱՄՆ-ը: 1998-ի աշնանը Նահանգներն սկսեց Հարավսլավիայի 79-օրյա բարբարոսական ռմբակոծումները, անամոթաբար հայտարարելով, թե պատերազմ է մղում ոչ թե սերբ ժողովրդի, այլ նախագահ Սլոբոդան Միլոշևիչի ամբողջատիրական ռեժիմի դեմ: Այս գրքում հարավսլավական պատերազմին անդրադառնալու առիթ դեռ լինելու է, իսկ այստեղ նշեմ, որ եթե նույնիսկ ընդունենք ամերիկյան մեկնակերպը, ըստ որի «Միլոշևիչը չարիք էր և նրան հարկավոր էր տապալել», ապա չենք կարող չհարցնել սերբ ժողովուրդը ձեզ հրավիրե՞լ էր Միլոշևիչին տապալելու: Ո՞վ է ձեզ իրավունք վերապահել որոշելու՝ ո՞ր նախագահն է ժողովրդավար, և ո՞րը բռնակալ: Ի՞նչ իրավունքով եք դուք տնօրինում ինքնիշխան պետությունների ու նրանց քաղաքական լիդերների ճակատագիրը: Այս հռետորական հարցերը պարզ պատասխան ունեն ուժեղի, հղփացածի, լկտիի իրավունքով: Եվ արդեն մեկ տասնամյակ չէ, որ այդպես է: Ամերիկյան պետությունը ինքն իրեն ներշնչել է, թե ի վերուստ կոչված է առաջնորդելու աշխարհի ժողովուրդներին ժողովրդավարական հասարակարգ կառուցելու իր ջանքերում:

ԵՎ ահա «առաջնորդում» է պատերազմներ սանձազերծելով, անցանկալի քաղաքական գործիչներին գաղտնի կամ բացահայտ սպանելով, հեղափոխություններ ու զանգվածային անկարգություններ հրահրելով հետագա միջամտության համար հող նախապատրաստելու, իրեն ցանկալի գործիչներին իշխանության բերելու դիտավորություններով. Հարավսլավական պատերազմից ԱՄՆ-ը անհրաժեշտ «դասեր քաղեց»: Հասկանալով, թե մնացած աշխարհն ինչքան հիվանդագին է ընդունում ինքնիշխան պետության ներքին գործերին այնքան անթաքույց ու լկտի միջամտությունը, ինչպիսին Սլոբոդան Միլոշևիչին տապալելու «գործընթացն» էր, ԱՄՆ-ը փոխեց մարտավարությունը: Այժմ այլոց ներքին գործերին միջամտելու համար պատրվակ է բերվում... միջազգային ահաբեկչության դեմ պայքարը: Անցանկալի պետությունները, առանց որևէ հիմքի կամ առանց բավարար հիմքերի հայտարարվում են «միջազգային ահաբեկչությանը սատարող», «զանգվածային ոչնչացման զենքի տիրապետող» կամ այդպիսի զենք ստեղծելու դիտավորություն ունեցող երկրներ: Ճիշտ այդպիսի մեղադրանք ներկայացրեց ԱՄՆ-ը Իրաքին, չնայած վերջինս բազմիցս հերքում էր դա, իսկ ՄԱԿ-ի զենքի փորձագետները, ամիսներ տևող փնտրտուքներից հետո, այդպիսի զենքեր չգտան Դա չխանգարեց Ջորջ Բուշի վարչակազմին 2003 թվականի մարտի 20-ին, առանց ՄԱԿ-ի ԱԽ թույլտվության, առանց հարցը նույնիսկ ԱԽ-ի քննարկմանը ներկայացնելու (քանզի ակնհայտ էր, որ ԱԽ 5 մշտական անդամներից առնվազն 3-ը դեմ կքվեարկեն) և, հակառակ աշխարհի երկրների բացարձակ մեծամասնության կարծիքի, հարձակվելու ՄԱԿ-ի անդամ ինքնիշխան պետության վրա: Իբր թե իրենք «հետախուզական տեղեկություններ ունեին, որ Սադամ Հուսեյնը զանգվածային ոչնչացման զենք ունի»: Բուշի վարչակազմն աշխարհով մեկ աղաղակում էր, թե եթե ՄԱԿ-ի զենքի փորձագետներն Իրաքում զանգվածային ոչնչացման զենք չեն գտնում, ապա դա ապացուցում է ոչ թե այդ զենքի բացակայությունն Իրաքում, այլ դրանք թաքցնելու Սադամի ռեժիմի հմտությունը: Այս մտացածին պատճառաբանությամբ, վկայակոչելով սոսկ իրենց «հետախուզական տեղե-

կությունները», որոնք, իբր գաղտնի լինելով չէին կարող ներկայացվել համաշխարհային հանրությանը, Բուշի վարչակազմը սանձազերծեց ԱՄՆ-ի պատմության մեջ հերթական, առայժմ վերջին կեղտոտ պատերազմը· Կեղտոտ, որովհետև շատ արագ պարզվեց, որ Սադամի ձեռքում զանգվածային ոչնչացման զենքի առկայության մասին «հետախուզական տեղեկությունների» վկայակոչումը մեծագույն խաբեություն էր: Բուշը երբեք չի ունեցել այդպիսի տեղեկություններ, նա դրանք ուղղակի *հնարել* է: Այս մասին աներկիմաստ գրված է Բուշի վարչակազմի պաշտոնաթող նախարարներից մեկի՝ 2004 թվականի հունվարի սկզբին լույս տեսած գրքում, ուր հեղինակը հավաստում է, թե Բուշը դեռ 4 տարի առաջ էր հանձնարարում իր վարչակազմի անդամներին գտնել Իրաքի վրա հարձակվելու պատրվակներ, որովհետև համոզված էր, թե «Սադամը վատ մարդ է»: Ահա և հասավ իր ուզածին տապալեց այդ վատ մարդուն:

Սադամն իսկապես վատ մարդ է, խոսք չկա: Արյունոտ մի բռնակալ, որի խղճին իր ռեժիմի հակառակորդ տասնյակհազարավորների արյունն է: Բայց Սադամը միա՞կ բռնակալն էր աշխարհում: ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը դեռ Իրաքի վրա հարձակվելուց առաջ էր ընդգծում, թե այդ չափանիշներով առաջնորդվելու դեպքում հարկ կլինի ևս պատերազմ հայտարարել աշխարհի երկրների 80 տոկոսին: Պուտինը գտնում էր, որ Իրաքի վրա հարձակվելը Ջորջ Բուշի «խոշոր քաղաքական սխալն է»:

2004 թվականի հունվարի 19-ին իր այդ «սխալը» անուղղակիորեն խոստովանեց նաև Ջորջ Բուշը՝ Կոնգրեսին ուղղված ամենամյա ուղերձում իրաքյան պատերազմը ներկայացնելով իբրև Սադամ Հուսեյնի ռեժիմը տապալելու նպատակով սկսված պատերազմ: «Աշխարհն առանց Սադամի ավելի անվտանգ է դարձել», ասաց Բուշը, կարծես թե մոռացել էր 2 բան ինքն այդ պատերազմը սանձազերծել էր Իրաքում զանգվածային ոչնչացման զենքեր գտնելու, ոչ թե Սադամին տապալելու համար, և ապա իրեն ոչ ոք չէր լիազորել «աշխարհն ավելի անվտանգ դարձնել Սադամից»: Բառացիորեն մի քանի օր անց, 2004 թ. հունվարի 24-ին, Վրաստանի նոր նախագահ Միխեիլ

Սահակաշվիլու հաջորդ օրվա գահակալական արարողություններին մասնակցելու համար ժամանելով Թբիլիսի, ԱՄՆ-ի Պետքարտուղար Քոլին Փաուելը իր հերթին խոստովանեց, թե «Հնարավոր է, որ Իրաքը երբեք զանգվածային ոչնչացման զենք չի ունեցել. .Միգուցե 100-500 տոննա քիմիական զենք ունեցել է, որոնք վաղուց ոչնչացրել էր .» Մոտ 10 օր անց համանման մի խոստովանություն էլ արեց Ջորջ Բուշի անվտանգության հարցերով խորհրդական Քոնդոլիզա Ռայսը իրաքյան պատերազմի սանձազերծման ամենաջերմ կողմնակիցներից ու նույնիսկ գլխավոր կազմակերպիչներից ևս մեկը:

Վերջապես, արդեն 2004 թ. փետրվարի սկզբին Իրաքում զանգվածային ոչնչացման զենքերի բացակայությունն արդեն ուղղակիորեն խոստովանեց Ջորջ Բուշն ինքը, սեփական դեմքը փրկելու նպատակով հանձնարարելով ստեղծել անկախ հանձնաժողով, պարզելու համար, թե «Ինչու՞ են երկրի հետախուզական ծառայություններն այդքան սխալ տեղեկություններ տվել» իրեն: Ինքներդ էլ հասկանում եք, որ այս հանձնաժողովի ստեղծումը մեղքը ուրիշի վրա գցելու, իր միջազգային հանցագործության համար քավության նոխազներ գտնելու նպատակ ունի: Ի դեպ, այդպիսի մի հանձնաժողով էլ Մեծ Բրիտանիայի վարչապետ Էնթոնի Բլեերն է ստեղծել: Թե ում պիտի մատաղ անեն Բուշի ու Բլեերի ոտքերի տակ, այս տողերը գրելու պահին ինձ դեռ հայտնի չէ: Փոխարենը վստահ եմ, որ Իրաքի դեմ Բուշի վարչակազմի սանձազերծած պատերազմը այլ կերպ, քան բացահայտ ագրեսիա չի կարելի անվանել: Իսկ ագրեսիան միջազգային հանցագործություն է, հետևաբար Ջորջ Բուշն ու նրա վարչակազմի անդամները, նույն այդ Քոլին Փաուելը, Քոնդոլիզա Ռայսը և մյուս «բազեները», ինչպես նաև իրաքյան պատերազմում ԱՄՆ-ին սատարող երկրների ղեկավարները, հատկապես Մեծ Բրիտանիայի վարչապետ Էնթոնի Բլեերն ու Իսպանիայի վարչապետ Խոսե Մարի Ազնարը, *միջազգային հանցագործներ* են, ենթակա Հաագայի դատարանին հանձնվելու:

Իհարկե, նրանց այդպիսի տխուր ճակատագիր չի սպաս-

վում՝ Միջազգային իրավունքը պատժում է քաղաքական մժեղներին, իսկ բոռերը միշտ պատռում են օրենքի ցանցը և դուրս են պրծնում՝ Ավելին, Բուշն ու Բլեերը նույնիսկ ներկայացվել են խաղաղության Նոբելյան մրցանակի Եթե մնան իրենց երկրների ղեկավարների պաշտոնում, չի բացառվում, որ այդ մրցանակը նույնիսկ ստանան, որքան էլ դա նման լինի. միջազգային պոռնիկների գլխին կույսի ծաղկեպսակ դնելու անբարոյության: Հերն էլ անիծած. թե Ալֆրեդ Նոբելը դագաղում շուռ կգա: Իսկ շուռ գալու առիթ իսկապես կա: Որքան էլ Բուշն ու Բլեերը փառաբանվեն իբրև «աշխարհը Սադամ Հուսեյնից ազատագրողներ», երբեք չի մոռացվի, որ ամերիկացիներն իրենք, Սադամ Հուսեյնին բռնելով, որոշ երկմտությունից հետո նրան շնորհեցին ...ռազմագերու կարգավիճակ. Իսկ ռազմագերին... հանցագործ չէ, նա ընդամենը կարողացածին չափով պաշտպանել է իր երկիրը, ուրիշ ոչինչ: Հուսեյնին ռազմագերի ճանաչելով, ԱՄՆ-ը անուղղակիորեն խոստովանեց, որ ինքը միջամտել է ուրիշ պետության ներքին գործերին առանց որևէ մեկի խնդրանքի «օգնել» է Իրաքի ժողովրդին տապալելու բռնակալ նախագահին: Իսկ այդպիսի իրավունք, ինչպես հիշում եք, ոչ ոքի տրված չէ: Դա յուրաքանչյուր ինքնիշխան ժողովրդի անկապտելի իրավունքն է ինքնուրույն որոշելու՝ իր ղեկավարը լա՞վն է, թե՞ վատը, պետք է շարունակի՞ պաշտոնավարել, թե՞ ոչ:

**Չմիջամտելու** սկզբունքը, ցավոք, բացասական կողմ էլ ունի: Համաշխարհային պատմությանը քիչ դեպքեր չեն հայտնի, երբ այս կամ այն պետության կազմում թույլ են տրվել և այսօր էլ թույլ են տրվում աղաղակող անարդարություններ, անգամ անագորույն վայրագություններ, և այդ պետությունը, զրահավորվելով իր ներքին գործերին չմիջամտելու միջազգային սկզբունքով, թույլ չի տվել որևէ միջազգային կազմակերպության անցկացնելու իրական վիճակի մոնիտորինգ: Դրանով հատկապես զրահավորվում են տոտալիտար պետությունները այս կերպ համաշխարհային հանրությունից թաքցնելով իրենց քաղաքական ռեժիմների ոճրագործությունները: Շատ երկրների բանտերում, օրինակ թուրքական

բանտերում, մարդու իրավունքների այնպիսի աղաղակող խախտումներ են թույլ տրվում, այնպիսի խոշտանգումներ են կիրառվում, որոնք համեմատելի են միջնադարյան վայրագությունների հետ. Բանտարկյալների արժանապատվության, կյանքի ու առողջության պահպանման տեսակետից հազիվ թե իդեալական կարելի է համարել շատ ու շատ երկրների, այդ թվում նաև Հայաստանի կալանավայրերում տիրող վիճակը: Ավելի աղաղակող անարդարություններ են արձանագրվում ազգային փոքրամասնությունների նկատմամբ տարվող քաղաքականության մեջ: Լիտվայում բացահայտ խտրական մեթոդներ են կիրառվում ռուսալեզու քաղաքացիների նկատմամբ, սկսած քաղաքացու անձնագրի փոխարեն «ոչ քաղաքացու» անձնագիր տրամադրելուց, աշխատանքի իրավունքի սահմանափակումներից, վերջացրած ընտանիքի անդամներին բռնի իրարից բաժանելու վայրենությամբ: Ռուանդայում, ողջ աշխարհի աչքի առաջ, անցյալ դարավերջին տեղի ունեցավ 1 միլիոն թութսիների ցեղասպանությունը հութուների կողմից, որոնք իրենց հերթին տասնյակ-հազարներով դարձան իրենց զոհերի վրեժխնդրության զոհը: Ո՞վ միջամտեց, ո՞վ կանգնեցրեց ահռելի ողբերգությունը: Միջազգային մարդասիրական կազմակերպությունները, լավագույն դեպքում, սննդամթերք, խմելու ջուր և դեղորայք էին հասցնում անապատներում կամ ջունգլիներում ապաստանած փախստականների ճամբարներ սովից, համաճարակներից և մանավանդ ծարավից մեռնող հազարավոր կանանց ու երեխաների տառապանքները թեթևացնելու համար: Միջամտել պե՞տք էր: Այո, պետք էր: Սակայն ե՞րբ միջամտեցին (հիմնականում՝ Ֆրանսիան): Երբ արդեն բանը բանից անցել էր, ողբերգությունը տեղի էր ունեցել:

Մենք մինչև հիմա էլ չենք կարողանում ներել անցյալ դարասկզբի հզորներին Գերմանիային, Ֆրանսիային, Անգլիային և Ռուսաստանին Հայոց Ցեղասպանության ոճիրը չկանխելու համար: Չնայած Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նրանք զբաղված էին ինքնաբզկտմամբ, սակայն, բարի կամքի դեպքում, Հայոց հարցը կարող էին լուծել շատ

ավելի վաղ. Իսկ արդեն բուն պատերազմի տարիներին, ցանկության դեպքում, առնվազն Գերմանիան կարող էր բռնել իր դաշնակից Թուրքիայի ձեռքը և արգելել Հայոց ցեղասպանությունը: Չարեց, և դա նրա հավերժական ամոթն է: Իսկ մի՞թե թուքսիների՝ 1994 թվականի ցեղասպանությունը *ամբողջ աշխարհի ամոթը* չէ: 1915 թվականին, երբ թուրքերը հոշոտում էին մեր ժողովրդին, կապի և տրանսպորտի միջոցները այդքան զարգացած չէին: Թուրքերը կարող էին հերքել իրենց ոճիրը, փարիսեցիաբար պնդել, թե հայերի տեղահանությունն ու աքսորը ոչ թե նրանց բնաջնջման, այլ անվտանգության նկատառումներով է ձեռնարկվել, ճակատային գծից «ապահով վայրեր» տեղափոխելու նպատակ ունի (թեև դեռ այն ժամանակ չէր կարող հարց չառաջանալ, թե ինչու «թրքաց բարեխնամ կառավարությունը» այդքան մտահոգ է իր հայազգի քաղաքացիների «անվտանգությամբ», իսկ թուրքերի նկատմամբ այդքան անհոգատար հայերին տեղափոխում է «անվտանգ վայրեր», ռազմաճակատից հեռու, իսկ թուրքերին... թողնում է կրակի բերանում, ճակատամերձ գոտում): Այս վայրահաչությունը պաշտոնական Անկարան մինչև այսօր էլ շարունակում է: Եվ աշխարհի այն պետությունները, ովքեր դեռ չեն ճանաչել ու չեն դատապարտել Հայոց ցեղասպանության ոճիրը, կարող են ինչ-որ տեղ «արդարանալ», թե իրենք անցյալի իրադարձություններին լավ տեղյակ չեն: Իսկ ժամանակակից պետությունն՞ը: Այսօր երկրի արհեստական արբանյակների ուղեծրից հնարավոր է շատ հանգիստ որոշել Նյու Յորքի փողոցներում քայլող քաղաքացու կոշիկի գույնը: Կամ Լոնդոնի Հայդ-Պարկի նստարանին թերթն աչքի անցկացնող ծերունու հետ էջ առ էջ կարդալ օրվա նյութերը: Դժվար թե այդ կատարյալ տեխնիկան չէր ուղղվել...Ռուանդայի տարածքին, չէր նկարահանվել թուքսիների ողբերգությունը և չէր դրվել այս աշխարհի հզորների սեղանին: Օգուտն ինչ...Երբ իրենց հարկավոր է, ամեն տեսակ պատրվակներ են գտնում այլոց ներքին գործերին միջամտելու համար: Երբ իրենց պետք չէ, չեն լսում նույնիսկ սպանդի ենթարկվող ժողովուրդների

օգնության աղաղակները, եթե դրանք անգամ... խլացնում են Բարձրյալին..

Միջազգային իրավունքի տեսակետից պետությունների հարաբերությունների գլխավոր սկզբունքներից մեկն էլ նույն այդ միջազգային իրավունքի նորմի հավասար կիրառումն է բոլորի վերաբերմամբ: Սա նշանակում է, որ ինչ կարելի կամ չի կարելի մեկին, վերաբերում է նաև բոլոր մյուսներին: Տեսականորեն դա այդպես է, իսկ գործնականում, ավա՜ղ, ճիշտ հակառակն է: Այս գրքում արդեն հիշատակածս հարավսլավական պատերազմում ԱՄՆ-ը Սլոբոդան Միլոշևիչին մեղադրում էր Հարավսլավիային պատկանող Կոսովոյում («Կոսովո Պոլեն» շուրջ 6 դար առաջ տեղի ունեցած թուրք-սերբական արյունահեղ բախման սրբազան հիշողությունն է սերբ ժողովրդի համար) ազգությամբ ալբանացիների էթնիկ զտում անցկացնելու մեջ: ԱՄՆ-ը աչք էր փակում այն բանի դեմ, որ ալբանացիները, որոնք ընդամենը երկրորդ համաշխարհայինի ավարտից հետո են հայտնվել Կոսովոյում, հարևան Ալբանիայի հրահրմամբ անջատողական շարժումներ էին սկսել՝ երկրամասը Սերբիայից պոկելու և իրենց մայր-հայրենիքին միացնելու դիտավորությամբ: Միլոշևիչը իսկապես ճնշումներ սկսեց Կոսովոյի ալբանացիների նկատմամբ ձգտելով այդ կերպ մարել անջատողական շարժումները: Պատասխանը եղավ ԱՄՆ-ի ձեռնարկած ռազմարշավը և Միլոշևիչի տապալումը: Դա այլ բան չէր, եթե ոչ Սերբիայից Կոսովոն պոկելու ալբանացիների նկրտումների բացահայտ ռազմական պաշտպանություն աշխարհի ամենահզոր երկրի կողմից: Արդյո՞ք: Այսօր Կոսովոն, ձևականորեն համարվելով Հարավսլավիայի տարածք, որը իբրև թե վերահսկվում է ՄԱԿ-ի խաղաղարարների կողմից, որոնք այստեղ են մտցվել միջէթնիկական բախումները կանխելու պատճառաբանությամբ, իրականում անջատվել է մայր-հայրենիքից և լիովին անցել ալբան անջատողականների վերահսկողության տակ: Ալբանները, որ 2004 թ. հունվարի տվյալներով Կոսովոյում արդեն 2 միլիոնի են հասել, երկրամասից լիովին դուրս են մղել բնիկ տերերին՝ հարյուրհազարավոր սերբերի: Այն բարբարոսությունները, որ ձեռ-

նարկում են ալբան եկվորները սերբ-բնիկների նկատմամբ, ոչ միայն չեն զիջում, այլև բազմակիորեն գերազանցում են Միլոշևիչի ռեժիմի կողմից իրենց հանդեպ ձեռնարկված դաժանությունները: Այդ դաժանություններն այլևս «էթնիկ զտումներ» չեն, այլ սերբերի ուղղակի ցեղասպանություն իրենց իսկ բնօրրանում: Սակայն բոլորը բերանները ջուր են առել և չեն դատապարտում ալբաններին· Այդ լռությունն առավել անբարոյական է ԱՄՆ-ի կողմից: Ստացվում է, որ «էթնիկ զտումներ» անելը սերբերին արգելված էր, իսկ ալբանացիներին թույլատրվա՞ծ: Երկակի ստանդարտների այս խայտառակ դրսևորումը առավել անբարո է դառնում, երբ խորամուխ ես լինում դրա թաքուն դրդապատճառների մեջ: Սերբերը, ինչ էլ լինի, մնում են Ռուսաստանի քաղաքական ազդեցության պահպանման կռվանը Բալկաններում: Իսկ ԱՄՆ-ը, առերես ռուսներին «դաշնակից» հայտարարելով, ներքուստ, իհարկե, շարունակում է Մոսկվայի քաղաքական ազդեցությունն ամբողջ աշխարհում թուլացնելու դավերը: Բալկաններն այն տարածաշրջանը չեն, ուր ամերիկացիները կարող են ռուսներին «թույլ տալ» ոտքների տեղը պահպանելու շռայլությունը: Ահա գերտերությունների այս աներևույթ մրցակցության զոհն է սերբական Կոսովոն այսօր, ահա ինչու են այնտեղ զանգվածաբար սպանվել կամ այնտեղից գրեթե գլխովին արտաքսվել երկրամասի բնիկ տերերը...

Ի միջի այլոց, Հարավսլավիայի օդային ռմբակոծություններն սկսելու հաջորդ օրն իսկ Հայաստանում ԱՄՆ-ի այն ժամանակվա Արտակարգ ու լիազոր դեսպան Մայքլ Լեմոնը հայ լրագրողների մի մեծ խմբի հրավիրել էր մամուլի ասուլիսի մեզ և մեր միջոցով հայ հասարակական լսարանին բացատրելու, թե Նահանգները հարկադրված է պատժիչ գործողություններ ձեռնարկել Հարավսլավիայի դեմ, որովհետև «Միլոշևիչը չարիք է»: Այդ ասուլիսում տողերիս հեղինակը (այն ժամանակ «Ազգ» օրաթերթի քաղաքական մեկնաբան) պարոն դեսպանին 3 հարց ուղղեց 1. Կարո՞ղ է որևէ օրինակ բերել, երբ չարիքը (եթե նույնիսկ համաձայնենք, որ Միլոշևիչը չարիք է) վերացվել է ավելի մեծ չարիքով, 2. Չի՞ գտնում, արդյոք, պրն դեսպանը, որ

Խորհրդային Միության փլուզումից հետո, որին իրենք համարում էին «չարիքի կայսրություն», այդպիսի համաշխարհային չարիքի կայսրություն է դարձել Ամերիկան ինքը, 3. Ինչու՞ է իր կառավարությունը պաշտպանում ուրիշի հողի վրա իրենց անկախությունը հռչակել փորձող ալբանացիների ապօրինի ձգտումները:

Հերթապահ ժպիտով, ամբողջ 45 րոպե ասուլիսի 90 րոպեից, Մայքլ Լեմոնը պատասխանում էր իմ հարցերին. ցավով համաձայնեց, որ իսկապես «չարիքը չարիքով չի վերացվում», «սակայն, ավաղ, այլ միջոց չկա», իր երկիրը չարիքի կայսրություն համարելուն առարկեց «Աստված մի արասցե» բացականչությամբ, իսկ ինչ Կոսովոյի պատկանելությանն է վերաբերում, երկար-բարակ բացատրում էր, որ ժամանակակից միջազգային իրավունքը չի կարող խորամուխ լինել պատմության մեջ և հստակորեն որոշել, թե որ հողն ում է պատկանում. «Դա շատ դժվար է, մեծ վեճերի տեղիք է տալիս»: Ուստի պետությունները համաձայնել են, որ անկախ այս կամ այն տարածքի պատմական պատկանելությունից և այս պահին այս կամ այն պետության կազմում նրա գտնվելուց «այդ տարածքի վրա ապրող բոլոր քաղաքացիները հավասար իրավունք ունեն նրա վրա ապրելու»: Միլոշևիչն, ահա, «ոտնահարել է Կոսովոյում սերբերի հետ հավասարապես ապրելու ալբանացիների իրավունքները», դրա համար էլ «պետք է պատժվի»: Շատ կուզենայի այժմ, տարիներ հետո, կրկին հանդիպել Մայքլ Լեմոնին և իր իսկ բառերն իրեն հիշեցնելով հարցնել. ո՞վ ձեզ թույլ տվեց «վերացնել» թեկուզև ոչ որպես այդ հողի պատմական տերերի, այլ զուտ իբրև քաղաքացիների՝ «Կոսովոյում ալբանացիների հետ հավասարապես ապրելու» սերբերի իրավունքը:

Մայքլ Լեմոնի այս ասուլիսին մի անգամ ևս պիտի անդրադառնանք, իսկ այժմ ամփոփենք միջպետական հարաբերությունների գլխավոր սկզբունքների թվարկումը.

ա) բոլոր պետությունները հավասար են իրենց արժանապատվությամբ,

բ) արգելվում է ուժի գործադրումը կամ ուժի գործադրման սպառնալիքը,

գ) պետությունները ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը,

դ) չեն միջամտում միմյանց ներքին գործերին,

ե) միջազգային իրավունքը թույլ չի տալիս երկակի ստանդարտներ:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## (Լրագրողը և դիվանագիտությունը)

Պետությունների միջև հարաբերությունները կանոնակարգվում են դարերով բյուրեղացած և բավական մանրամասնորեն մշակված արարողություններով, որոնք իրենց ամբողջության մեջ կոչվում են դիվանագիտական հարաբերություններ: Դրանք սկսվում են արդեն միջազգայնորեն ճանաչված պետության կողմից նորանկախ պետության անկախությունը ճանաչելու մասին հայտարարությամբ: 1991-ի աշնանը և 1992-ի գարնանը, ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո, սկսվեց նախկին խորհրդային հանրապետությունների անկախությունը ճանաչելու բառացիորեն կայծակնային մի գործընթաց: Այդ մի քանի ամիսների ընթացքում Հայաստանի անկախությունը ճանաչելու հայտարարություններ արեցին 100-ից ավելի երկրներ: Այն ժամանակվա մեր ղեկավարները հայաստանյան հասարակական լսարանին այդ հանգամանքը ներկայացնում էին իբրև իրենց «նվաճումը», անձամբ իրենց արտաքին քաղաքականության «ձեռքբերումը»: Միամտություն էր, միգուցե նաև դիտավորյալ շահարկում: Բանն այն է, որ նախկին խորհրդային հանրապետությունների անկախությունների կայծակնային ճանաչումը մեծապես պայմանավորված էր ԽՍՀՄ փլուզումը անդառնալի դարձնելու մղումով: Աշխարհն ինքն էլ անակնկալի էր եկել քաղաքական քարտեզից երբեմնի հսկայի անակնկալ անհետացումից, մի տեսակ, կարծես, դժվարանում էր հավատալ այդ իրողությանը և ներքին վախ ուներ, թե մանավանդ Ռուսաստանում կգտնվեն ուժեր, որոնք կփորձեն ուժով վերականգնել կործանված կայսրությունը: Զուր չէ, որ ԱՄՆ-ում միայն շատ ամիսներ անց կազմակերպվեց աշխարհի

քաղաքական քարտեզից կարմիր գույնը «անհետացնելու» յուրօրինակ հանդիսությունը, որ ցուցադրվում էր համաշխարհային հեռուստաալիքներով. Երբեմնի կայսրությունն ուժով վերականգնելու հնարավորությունից ունեցած վախն էր խորհրդային նախկին հանրապետությունների անկախությունները ճանաչելու շտապողականության ներքին զսպանակը և ոչ թե իրենց անկախությունը հռչակած երկրների արտաքին քաղաքականությունն իրականացնողների «դիվանագիտական վարպետությունը»· Այդ տնաբույծ «վարպետներից» յուրաքանչյուրի փոխարեն եթե նույնիսկ ցախավելի կոթ էլ լիներ, երկրի անկախությունը ճանաչվելու էր:

Ինչևէ, դառնանք մեր շարադրանքին:

Այն բանից հետո, երբ այս կամ այն պետությունը հայտարարում է նորանկախ երկրի պետական անկախությունը ճանաչելու մասին, դրանով մի տեսակ ազդանշան է տալիս, որ դեմ չի լինի նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուն: Ոչ միշտ է այդպես, սակայն մեծ մասամբ այդպես է: Եվ նորանկախ երկիրն սկսում է «շոշափել» դրա հնարավորությունը: Այդ «շոշափումը» կարող է տարբեր ձևերով կատարվել նորանկախ երկրի նախագահը կամ արտգործնախարարը կարող են պարզապես զանգահարել իրենց անկախությունը ճանաչած երկրների պաշտոնակիցներին և պայմանավորվել դիվանագիտական հարաբերություններ հաստատելու նպատակով ուղղակի բանակցություններ սկսելու մասին: Կարող են խնդրել որևէ բարեկամ երկրի իրենց փոխարեն այդ կարգի «հող շոշափել» այս կամ այն մայրաքաղաքում: Նույնը կարող են անել նաև իրենց հետաքրքրող երկրի այս կամ այն հեղինակավոր քաղաքացու կամ կազմակերպության միջոցով, նաև այլ ճանապարհներով: Երբ որևէ կերպ համաձայնություն է ստացվում, պայմանավորվածություն է ձեռք բերվում նաև պաշտոնական բանակցություններ սկսելու մասին: Որպես կանոն, նորանկախ երկիրն ինքն է իր արտգործնախարարին ուղարկում արդեն ճանաչված երկրի մայրաքաղաք այդ բանակցությունները վարելու (ահա ինչու ՀՀ 1-ին արտգործնախարար

Ռաֆֆի Հովհաննիսյանը իր պաշտոնավարման առաջին տարում եղավ մի քանի տասնյակ մայրաքաղաքներում)

Դիվանագիտական հարաբերությունները սովորաբար հաստատվում են միմյանց մայրաքաղաքներում դեսպանատներ բացելու և դեսպաններ փոխանակելու մասին համաձայնագիր (կամ հուշագիր) ստորագրելով: Դեսպանատան տարածքը համարվում է տվյալ պետության տարածքը և այնտեղ մտնելը նույնն է, ինչ օտար երկիր գնալը, սահմանն անցնելը: Դեսպանատան շենքի վրա բարձրացվում է տվյալ երկրի պետական դրոշը: Ընդունող երկիրը պարտավոր է հոգալ օտար դեսպանատան տարածքի պաշտպանությունը: Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հուշագրում կետ առ կետ համաձայնեցվում է դիվանագիտական հարաբերությունների մակարդակը (դեսպանների մակարդակն ամենաբարձրն է, սակայն կան նաև ավելի ցածր մակարդակներ գործերի հավատարմատար, հյուպատոս և այլն), դիվանագիտական ներկայացուցչության (դեսպանատուն, հյուպատոսարան) աշխատողների թվական կազմը, դիվանագիտական անձեռնմխելիությամբ օժտված պաշտոնատարների կազմը և այլն, և այլն: Կազմակերպչական բնույթի հարցեր լուծելուց հետո երկրներից յուրաքանչյուրը մյուսին է ներկայացնում իր կողմից նրա տարածքում աշխատելու համար երաշխավորվող դեսպանի (ճիշտ կլիներ ասել դեսպանության թեկնածուի) անձնական տվյալները: Դիվանագիտական պրակտիկայում դա կոչվում է ագրեման: Երբ այս ագրեմանի պատասխանն ստացվում է, և ընդունող երկիրը առարկություն չի հայտնում տվյալ թեկնածուի անձի վերաբերյալ, առաքող երկրի նախագահի ստորագրությամբ հրամանագիր է հրապարակվում տվյալ անձին այսինչ երկրում արտակարգ ու լիազոր դեսպան նշանակելու մասին: Ի միջի այլոց, դա ոչ միայն պաշտոն է, այլև դիվանագիտական աստիճան: Հեռահաղորդակապի միջոցներով իր առաջիկա աշխատանքի երկրի արտգործնախարարության համաձայնությունն ստանալով նորանշանակ դեսպանը ժամանում է նշանակման վայր: Այնուհետև համաձայնեցված օրը, ներկայանում է աշխատանքային երկրի արտգործնախա-

բարություն, ուր հանձնում է իր պաշտոնական վավերագրերի կրկնօրինակ-պատճենը Այստեղ էլ համաձայնեցվում է տվյալ երկրի նախագահին ներկայանալու ժամկետը. Այնուհետև տեղի է ունենում այդ առաջին և ամենաբարձր մակարդակի ընդունելությունը. Հնարավոր է, որ ընդունող երկրի նախագահը նորանշանակ դեսպանին ընդունի առանձին, հնարավոր է այլ նորանշանակ դեսպանների խմբի հետ: Թե մեկ, թե մյուս դեպքում մշակված է հատուկ արարողակարգ դեսպանը (կամ դեսպաններից յուրաքանչյուրը մեկ առ մեկ) մոտենում է երկրի նախագահին և նրան է հանձնում իր երկրի նախագահի ստորագրած վավերագրերը: Նախագահը (երբեմն նաև փոխնախագահը, բացառիկ դեպքերում այլ պաշտոնյա, սակայն անպայման իր նախագահի անունից ու հանձնարարությամբ) անձամբ պետք է վերցնի նորանշանակ դեսպանի վավերագրերը: Եթե նա այդ չանի, կնշանակի մերժում է տվյալ անձին իր երկրում դեսպան ճանաչելը (հենց դրա համար էլ գոյություն ունի ագրեմանը, որպեսզի նման միջադեպեր չլինեն): Վավերագրերի հանձնումից հետո սկսվում է տվյալ դեսպանի պաշտոնավարումը նշանակման երկրում:

Արտակարգ ու լիազոր դեսպանը իր երկրի, իր կառավարության ներկայացուցիչն է աշխատած երկրում: Նույնիսկ նրա ավտոմեքենայի վրա տեղադրվում է նրա ներկայացրած երկրի պետական փոքրիկ դրոշակը: Նա իր կառավարության անունից ու հանձնարարությամբ աշխատած երկրի պետական կառավարման մարմինների հետ պահպանում է ամեն տեսակ կապեր, նրանց ներկայացնում է իր կառավարության տեսակետները, պաշտոնական բողոքները («նոտա»), հայտարարությունները, օգտվում է հասարակայնության հետ շփվելու հնարավորություններից (հրավիրում է մամուլի ասուլիսներ, մասնակցում է մշակութային միջոցառումներին, կազմակերպում է ընդունելություններ), որոնց ընթացքում, բնականաբար, նույնպես արտահայտում է իր երկրի պաշտոնական տեսակետները այս կամ այն խնդրի վերաբերյալ: Բնականաբար, դեսպանի անձն անձեռնմխելի է: Դա կոչվում է «դիվանագիտական անձեռնմխելիություն»: Նրա անձին հասցված

վիրավորանքը դիտվում է իբրև իր ներկայացրած երկրին հասցված վիրավորանք: Դեռ միջին դարերում դեսպանի անձին հասցված նույնիսկ ոչ կանխամտածված վիրավորանքի համար հանցավորին գլխատում էին (կարդացեք Հենրիկ Սենկևիչի «Խաչակիրներ» վեպը): Ժամանակակից միջպետական հարաբերություններում դիվանագիտական անձեռնմխելիությամբ օժտվում են նաև դեսպանատների այլ պաշտոնատարներ: Նրանց տրվում է հատուկ դիվանագիտական անձնագիր, որը նաև անձեռնմխելիության վկայագիր է: Այդպիսի անձնագիր ունեցող դիվանագետները իրենց աշխատած երկրներում ենթակա չեն ձերբակալման, կալանավորման, խուզարկության: Նրանց անձեռնմխելիությունը տարածվում է նաև իրենց բնակարանների, ավտոմեքենաների, անգամ ուղեբեռների վրա, որոնք ենթակա չեն զննման նույնիսկ օդանավակայաններում: Դեսպանը և դեսպանատան աշխատակիցները չեն կարող զբաղվել իրենց դիվանագիտական պարտականություններին անհարիր գործունեությամբ (ասենք՝ լրտեսությամբ): Եթե դիվանագետը բռնվում է այդպիսի գործունեություն կատարելու մեջ, ապա ընդունող երկիրը նրան կարող է «պերսոնա նոն գրատա» (անցանկալի անձ) հայտարարել և 24-48 ժամ ժամանակ տրամադրել երկրից հեռանալու համար: Հասկանալի է, որ դիվանագետը չի կարող խախտել ընդունող երկրի օրենքները, էլ չեմ խոսում քրեական հանցագործություններ կատարելու մասին: Այդպիսի դեպքերը հազվադեպ են, դիվանագետները սովորաբար զուսպ ու հավասարակշռված մարդիկ են և հասարակության մեջ (անշուշտ, նաև օտար երկրում) իրենց պահել գիտեն: Սակայն նրանք էլ մարդիկ են և երբեմն-երբեմն «սայթաքում» են:

Մի երկու տարի առաջ ԱՄՆ-ում Վրաստանի դեսպանատան 1-ին քարտուղարը, հարբած վիճակում ավտոմեքենա վարելիս, Վաշինգտոնի փողոցներից մեկում օրը ցերեկով վրաերթի էր ենթարկել և մահացու վիրավորել 16-ամյա մի ամերիկուհու: Ոստիկանությունը, համապատասխան հետաքննությունից և արձանագրություն կազմելուց հետո, ստիպված բաց էր թողել դիվանագիտական անձնագիրը ներկայացրած և անձեռնմխե-

լիությամբ օժտված վայ-դիվանագետին: Սակայն ամերիկյան հասարակական կարծիքը չափազանց վրդովվել էր, թերթերը պահանջում էին մարդասպանին դատել ԱՄՆ-ի դատարանում և ԱՄՆ-ի օրենքներով· Նախագահ Քլինթոնը իր երկրի հասարակական կարծիքի ճնշման տակ դիմեց Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեին խնդրելով հատուկ հրամանագիր արձակել վրաց դիվանագետին դիվանագիտական անձեռնմխելիությունից զրկելու մասին: Շևարդնաձեն, իբրև բարի կամքի դրսևորում, ընդառաջեց ձախողակ հարբեցողին դրանից անմիջապես հետո ձերբակալեցին, նա կանգնեց ամերիկյան դատարանի առաջ, և որքան հիշում եմ դատապարտվեց 20 տարվա ազատազրկման: Իրականում Շևարդնաձեն ոչ թե «բարի կամք» դրսևորեց, այլ արժանապատվության կատարյալ բացակայություն: Միջազգային պրակտիկայում ընդունված չէ օտար երկրում թեկուզև ծանր քրեական հանցանք կատարած սեփական դիվանագետներին այդ երկրի արդարադատությանը հանձնել: Նրան ետ են կանչում և դատում են (կամ չեն դատում) հայրենի օրենքներով: Անկասկած, ԱՄՆ-ը այդպես էլ կվարվեր: Բայց, ինչպես ասում են, ինչ թույլատրված է Զևսին արգելված է... եզին...

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պետությունների միջև ուղղակի և չմիջնորդավորված երկխոսություն պաշտպանելու լավագույն միջոցն է: Եթե 2 պետություն այդպիսի հարաբերություններ չունեն, անհրաժեշտության դեպքերում դիմում են երրորդ երկրի օգնությանը: Օրինակ, Թուրքիան և Հայաստանը, որոնք այս գրքույկը գրելու պահին դեռևս դիվանագիտական հարաբերություններ չունեն, հարկը պահանջածին կարող են միմյանց ինչ-որ բան փոխանցել, ասենք, Վրաստանի միջոցով, որի հետ երկուսն էլ ոչ միայն դիվանագիտական, այլև բարեկամական հարաբերություններ են պահպանում· Իսկ ինչու՞ Վրաստանի միջոցով: Ինչու՞ Թուրքիայի հետ, որը 1991-ին առաջիններից մեկը հայտարարեց Հայաստանի անկախությունը ճանաչելու մասին, մենք մինչև այժմ դիվանագիտական հարաբերություններ չունենք: Ավաղ, Թուրքիան բոլոր այս տարիներին խախտում է պետությունների

միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու գլխավոր սկզբունքներից մեկը նախապայմաններ առաջադրելու անթույլատրելիության սկզբունքը:

Ինչու՞ է միջազգային իրավունքը պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելիս նախապայմաններ առաջադրելը համարում անթույլատրելի: Որովհետև այդպիսի հարաբերությունների հաստատումը մեկի կողմից մյուսին արված զիջում կամ «լավություն» չէ, այն հավասարապես պետք է երկուսին էլ. որպես պաշտոնական մակարդակով երկխոսություն պահպանելու միջոց: Մինչդեռ Թուրքիան տարիներ շարունակ Հայաստանին ներկայացնում է 3 նախապայման.

ա) հրաժարվել Հայոց Ցեղասպանության ճանաչման պահանջից,

բ) հրաժարվել Թուրքիայի նկատմամբ հողային պահանջատիրությունից,

գ) հայոց զորքերը դուրս բերել Ադրբեջանի տարածքից:

Բոլոր այս նախապայմանները ոչ միայն անթույլատրելի են, այլև անհիմն:

1. Ցեղասպանության ճանաչման պահանջից մենք երբեք չենք հրաժարվի ո՛չ որպես պետություն, ոչ որպես ժողովուրդ: Ցեղասպանությունը անհերքելի իրողություն է, և եթե իրենք դեռ այնքան բարբարոս են, որ դա չեն ընդունում, ապա դա իրե՛նց խնդիրն է: Աշխարհի բազում պետություններ, միջազգային կազմակերպություններ, քաղաքների ու մարզերի օրենսդիր մարմիններ ճանաչել ու դատապարտել են թուրքերի բարբարոսությունը, և եթե իրենց դուր է գալիս ապրել այդպիսի թքոտված երեսով թող ապրեն: Վաղ թե ուշ մեզնից ծնկաչոք ներում են խնդրելու, քանզի նույնիսկ թուրքը չի կարող հավերժորեն խույս տալ քաղաքակրթության բարերար ազդեցությունից և մնալ...թուրք:

2. Թուրքիայի նկատմամբ հողային պահանջատիրության հայտարարություն, պետական մակարդակով, Հայաստանը երբեք չի արել : Այս գրքի 1-ին գլխի մեջ այդ հարցին անդրադարձել ենք:

3. Ադրբեջանից հայկական զորքերը դուրս բերելու պահանջը անհեթեթ է արդեն այնքանով, որ վերաբերում է երրորդ երկրի, իսկ դիվանագիտական հարաբերությունները մեր երկուսի խնդիրն են:

Պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը շատ այլ նրբություններ էլ ունի, սակայն այսքանը իմանալը, կարծում եմ, լիովին բավական է, որպեսզի դուք սկսեք լրագրող-միջազգայնագետի և արտաքին հարաբերությունները լուսաբանողի ձեր առաջին քայլերը:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Սկսենք ամենապարզից լրագրական ռեպորտաժից:

Դիտարկենք այսպիսի մի հնարավորություն խմբագիրը ձեզ հանձնարարել է մասնակցել որևէ երկրի դեսպանի մամլո ասուլիսին և լուսաբանել այն: Ի՞նչ պետք է անեք դուք առաջին հերթին: Պետք է ճշտեք ասուլիսի անցկացման օրը, ժամը, տեղը և թեման. Օրն ու ժամը պետք են չուշանալու համար, իսկ տեղը նաև այն պատճառով, որ եթե ասուլիսը տրվում է դեսպանի նստավայրում, այսինքն օտար երկրի դեսպանատանը, նախօրոք իմանաք, որ ձեզ, պատկերավոր ասած, վիճակվելու է «անցնել օտար երկրի պետական սահմանը»: Իսկ այդ պարագայում ձեզ անպայման անհրաժեշտ է ունենալ անձը հաստատող փաստաթուղթ, ցանկալի է անձնագիր: Սովորական օրերին, իհարկե, դուք ձեր երկրում անձնագրով չեք շրջում, այն ձեզ ուղղակի պետք չէ: Եթե օտար դեսպանը ասուլիս տար ոչ թե իր նստավայրում, այլ, ասենք, Երևանի որևէ այլ Հայաստանի Հանրապետությանը, մեր որևէ կազմակերպությանը, մշակութային միությանը պատկանող շենքում (օրինակ, Թեքեյան մշակութային միության դահլիճում), անձնագիրը ձեզ դարձյալ պետք չէր գա: Իսկ այս պարագայում պատրաստ եղեք ամենախիստ ստուգման: Հատկապես ԱՄՆ-ի դեսպանատանը ամենայն բծախնդրությամբ կստուգեն ոչ միայն ձեր անձը հաստատող փաստաթուղթը, կանցկացնեն մետաղական նյութերի առկայությունն ստուգող էլեկտրոնային դռնակով, ինչպիսին դուք, անշուշտ, տեսել եք օդանավակայաններում, այլև ուղղակի կխուզարկեն ձեր հագուստները, նույնիսկ կանացի պայուսակները: Չպետք է վիրավորվել դուք «օտարի հողում եք» և պարտավոր եք ենթարկվել նրանց օրենքներին: Իսկ անվտան-

գությանն առնչվող օրենքները, 2001 թ սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումից հետո, ԱՄՆ-ում շատ նկատելիորեն խստացվել են: Աչքներն այնքան է վախեցել, որ երբեմն հասնում են ծայրահեղությունների իրենց երկիր (նաև դեսպանատուն) մուտք գործող յուրաքանչյուր օտար քաղաքացու մեջ պոտենցիալ ահաբեկիչ են տեսնում Հաճելի վերաբերմունք չէ, անշուշտ, բայց հասկանալ կարելի է դեռ 2500 տարի առաջ հռոմեացի իմաստուններից մեկն է ասել, թե նա, ումից շատերն են վախենում, ինքն էլ շատերից պիտի վախենա...

Ինչևէ, վերադառնանք մեր խոսքին օտար դեսպանի հրավիրած ասուլիսին: Թեմայի վաղօրոք իմանալը ձեզ կօգնի նախապես համապատասխան գրականություն կարդալ և լավագույնս նախապատրաստվել դրան: Սակայն նկատի ունեցեք, որ ասուլիսի հրավիրողը ոչ միշտ է նախապես տեղյակ պահում թեմային, որը կարող է ձեզ համար միանգամայն անսպասելի լինել:

Ահա և եկել է ասուլիսի գնալու օրն ու ժամը: Առաջին հերթին աշխատեք չուշանալ, հակառակ պարագայում կարող են նաև ներս չթողնել: Խմբագրությունից դուրս գալուց առաջ անպայման ստուգեք սարքի՞ն է, արդյոք, ձեր ձայնագրիչը, մարտկոցները լիցքավորվա՞ծ են, ինքնահոս գրիչ և ծոցատետր ունե՞ք ձեր պայուսակում կամ գրպանում: Հիշեք՝ երբեք չի կարելի հույս դնել միայն ձայնագրիչի վրա: Ձեր լավագույն և ամենահուսալի օգնականը սովորական թուղթ ու գրիչն է, իսկ ձայնագրիչը հարկավոր է միայն այն բանի համար, որպեսզի բառացի մեջբերում անելիս դիմեք դրա օգնությանը (եթե չեք հասցրել սղագրել կամ ձեր սղագրությունը թերի է):

Եվ այսպես, դուք ասուլիսի դահլիճում եք: Դեսպանը սովորաբար ներկայանում է ճիշտ ժամին, իր մամուլի պատասխանատուի կամ հասարակայնության հետ կապերի բաժնի պետի ու թարգմանչի ուղեկցությամբ: Անմիջապես հայտարարվում է ասուլիսին հատկացվող ժամանակը և թեման: Այնուհետև խոսք է վերցնում դեսպանը և կատարում է համառոտ հայտարարություն, շարադրում է իր կառավարության տեսակետները խնդրո առարկա հարցի մասին: Դրանից հետո թույլա-

տրվում է դեսպանին հարցեր ուղղել. Չգրված մի կանոնով յուրաքանչյուր լրագրողի տրվում է մեկ կամ երկու հարցի իրավունք, որպեսզի մյուսներին էլ հերթ հասնի: Դուք ձեռք եք բարձրացնում, և մամուլի պատասխանատուն հերթով ձայն է տալիս լրագրողներին: Եթե դուք այդպիսի իրավունք ստանաք, անպայման ներկայացեք ասեք ձեր անուն-ազգանունը և ձեր ներկայացրած լրատվամիջոցը: Եղեք անթերի քաղաքավարի, ասուլիս տվողին դիմեք ընդգծված հարգանքով: Հետևեք, որ ձեր հարցերը լինեն կարճ, հստակ և պարունակեն հենց հարց, ոչ թե տեսակետ: Մի մոռացեք էթիկայի մասին և հարցը, որքան էլ սուր լինի, ձևակերպեք առանց վիրավորական արտահայտությունների: Հարցից հետո անպայման շնորհակալություն հայտնեք: Ինչ պատասխան էլ տա ասուլիս անցկացնողը, տվյալ դեպքում օտար դեսպանը, մի առարկեք նրան և, առավել ևս, մի բորբոքվեք ու վեճի մի՛ բռնվեք նրա հետ: Դուք դրա իրավունքը պարզապես չունեք, որովհետև ասուլիսը բանավեճ չէ, և դուք էլ այդ բանավեճին մասնակցելու հրավեր չեք ստացել: Եթե դեսպանի պատասխանը ձեզ չի բավարարում, մի հայտարարեք, թե նա խուսափում է ուղիղ պատասխանից կամ չի հասկացել ձեր հարցը: Դեսպանները շատ ուշադիր և քաղաքավարի մարդիկ են: Նրանք սովորաբար շատ լավ հասկանում են ձեր հարցը, նաև՝ նրա ենթատեքստը: Եվ եթե ձևացնում են, թե ձեզ չեն հասկացել, ապա դա ուղղակի պատասխան տալուց խուսափելու հնարք է: Դրա համար էլ կարող են «շեղվել» ձեր հարցից, երբեմն նույնիսկ խոսել ձեր հարցի հետ գրեթե կապ չունեցող բանի մասին: Մի՛ քմծիծաղեք, դժգոհության այլ նշաններ ցույց մի՛ տվեք: Չէ՞ որ ավելի լավ է նա «անհասկացող» ձևանա, քան ուղղակի վիրավորի ձեզ հայտարարելով, որ այդ կարգի անպատշաճ հարցի պատասխանել չի ցանկանում:

Հիշեք, որ ասուլիսի վերաբերյալ ձեր դրական կամ բացասական կարծիքը, դեսպանի արտահայտած մտքերի վիճարկումը դուք միանգամայն ազատորեն կարող եք անել ձեր հրապարակման մեջ: Գրեք ինչ ուզում եք, ինչպես ուզում եք, թեկուզև ամենաթունդ արտահայտություններով ու գնահա-

տականներով Սակայն օտար դեսպանատանը ձեզ պահեք զուսպ, կիրթ ու քաղաքավարի·

Իմ պրակտիկայից բերեմ մի օրինակ, թե ինչպես լուսաբանեցի Հայաստանում ԱՄՆ-ի արտակարգ ու լիազոր դեսպան Մայքլ Լեմոնի այս գրքի 1-ին գլխի վերջում հիշատակածս ասուլիսը: Ես դրան նվիրեցի 2 հրապարակում առաջինը լույս տեսավ զուտ իբրև ռեպորտաժ, օբյեկտիվ տեղեկատվություն ինչի՞ն էր նվիրված ԱՄՆ դեսպանի ասուլիսը, ինքն ի՞նչ ասաց, ի՞նչ հարցեր և ի՞նչ պատասխաններ հնչեցին: Վերջում ընթերցողին խոստացա մի անգամ էլ անդրադառնալ թեմային արդեն իմ մեկնաբանություններով: Եվ հաջորդ օրն իսկ հրապարակեցի մի հոդված «Մեր հայրենիքն այնտեղ է, ուր 5000 տարի ննջում են մեր նախնիները» վերնագրով: Այստեղ, կրկին հիշեցնելով Մայքլ Լեմոնի երեկվա ասուլիսը և մեջբերելով նրա այն պնդումը, թե ժամանակակից միջազգային իրավունքի տեսակետից «հնարավոր չէ որոշել, թե որ հողը պատմականորեն ում է պատկանել», ուստի և ամենակարևորն է, որ «այդ հողի վրա ապրող բոլոր քաղաքացիները հավասար իրավունք ունենան դրա վրա ապրելու», ես հրապարակայնորեն հարց ուղղեցի ԱՄՆ դեսպանին՝ իսկ ինչո՞ւ իրենց դաշնակից Թուրքիան մինչև այսօր հայերին մերժում է «իրենց հետ միևնույն հողի վրա իբրև քաղաքացիներ հավասար ապրելու իրավունքը»: Զարգացնելով թեման, ես ուղղակի նշել էի, թե Մայքլ Լեմոնը չի հասկանում, որ սերբերի համար Կոսովո Պոլեն «տարածք» չէ, այլ բնապատմական հայրենիք: Եվ չի հասկանում այն պատճառով, որ ինքը զուրկ է հայրենիքի զգացողությունից, ներկայացնում է մի պետություն, որն ստեղծվել է հնդկացիական ցեղերի ոսկորների վրա՝ Եվրոպայի բոլոր անկյունների թոկից փախածների կողմից: Նրանք, այդ թոկից փախածները, մարդու իրավունքները հռչակեցին բարձրագույն սկզբունք, համախմբվեցին այդ սկզբունքի շուրջ, որպեսզի իրար չհոշոտեն, և ի պատիվ իրենց՝ ստեղծեցին բավական զորեղ պետություն: Մենք, հայերս, այդպիսին լինել չենք կարող: Մենք 5000 տարի ապրել ենք մեր բնապատմական հայրենիքում, հոգու միլիոնավոր անտես թելերով կապված ենք մեր հող ու

ջրին, և մեզ համար հայրենիքն անհամեմատ ավելի բարձր արժեք է, քան ամեն կարգի «մարդու իրավունք»: Հեգնանքով նշել էի նաև, որ մեծահոգաբար ներողամիտ պիտի գտնվենք հայրենիքի զգացումից զուրկ այդ պարոնի հանդեպ, դա նրա մեղքը չէ, այլ թերությունը, բայց չենք կարող հանդուրժել, երբ նա իր այդ թերությունը փորձում է մեր վզին փաթաթել իբրև.. առավելություն:

Շիկացած կրքով էի գրել, թերևս կարելի էր այդքան դաժան չլինել: Բայց եղածը եղել է, հետին թվով ոչինչ սրբագրել չեմ կարող: Իսկ այս օրինակը բերեցի, որպեսզի համոզվեք ինչի՞ նման կլիներ, եթե այս ամենն ասվեր...բուն ասուլիսի ընթացքում· Կլիներ պարզ անքաղաքավարություն, եթե ավելի խիստ չասեմ:

Սակայն վերադառնանք ձեզ, ձեր ենթադրյալ մասնակցությանը համանման մի ասուլիսի: Հասնելով խմբագրություն ի՞նչ պիտի անեք դուք:

Նախ և առաջ խմբագրի հետ պիտի ճշտեք, թե ձեզ լրագրողական որքան տարածք է տրվելու և որ էջում: Հայաստանյան մամուլում օտար դեսպանների ասուլիսների մասին հրապարակումները սովորաբար զետեղվում են 1-ին, 2-րդ կամ 3-րդ էջերում: Լրագրողական այդ կարգի ռեպորտաժները հազվադեպ են գերազանցում 1-1,5 համակարգչային էջի ծավալները: Ուրեմն, դուք այդ ծավալի մեջ պարտավոր եք ընթերցողին տեղյակ պահել ամենագլխավորի մասին թեման, դեսպանի հիմնական մտքերը, ամենակարևոր և ամենաուշագրավ հարցերը և պատասխանները: Երկրորդական բաների վրա ուշադրություն մի դարձրեք: Գուցե կան մարդիկ, որոնց իսկապես կարող էր հետաքրքրել, թե դեսպանատան շենքը քանի հարկից էր, աստիճանները մարմարի՞ց էին, թե՞ փայտից, ուղեգորգերն ինչ գույնի էին, կահույքը շքե՞ղ էր, դեսպանի սեղանին հանքային ջուր կա՞ր, թե՞ ոչ և այլն, և այլն: Լրագրական տարածքն ափսոս է այդպիսի բաներով լցնելու համար: Դուք դա կարող եք անել այլ առիթով, եթե, ասենք, մասնակցեք նույն դեսպանատանը կայացած որևէ պաշտոնական ընդունելության: Այդ դեպքում, դարձյալ չափի մեջ, դուք կարող եք

հիշատակել նույնիսկ սեղանների առատությունը և հրավիրված տիկինների հագուկապը: Սակայն ասուլիսի նպատակն այդ չէ, նրա լուսաբանումը այլ պահանջների պիտի բավարարի, ընթերցողների մեծամասնությունը ձեզանից ավելի լուրջ տեղեկատվություն է ակնկալում, քան կահույքի փայլն է: Ամենագլխավորն այն է, որ ընթերցողը ամբողջական պատկերացում կազմի ասուլիսի մասին: Եթե դրան հասնելու համար ավելի հարմար է հիշատակել ոչ թե ձեր, այլ մեկ ուրիշի ավելի հաջող հարցերը, ազնիվ կլինի անձնական փառասիրության մասին մոռանալ և հիշատակել հենց ձեր այդ գործընկերոջ, և ոչ թե անպայման ձեր հարցերը (ընդսմին, եթե չեք ուզում, կարող եք այդ գործընկերոջ անունը և լրատվամիջոցը չնշել, կարելի է գրել «լրագրողներից մեկի այսինչ հարցին դեսպանն այսպես պատասխանեց»): Ամենից առաջ ընթերցողի շահը: Չէ՞ որ նա իրավունք ունի ստանալ օբյեկտիվ տեղեկատվություն, այդ թվում նաև ձեր հրապարակումից: Ընթերցողն ասուլիսում չի եղել, դուք եղել եք: Ուրեմն այնպիսի ռեպորտաժ պատրաստեք, որ նրան թվա, թե ինքն էլ ներկա է եղել դրան:

Հարկավոր է **հստակորեն զանազանել ասուլիսը և ճեպազրույցը (բրիֆինգ)**: Սրանք արտաքուստ նման են, սակայն էությամբ տարբեր. ճեպազրույցները տրվում են բառի ուղղակի իմաստով՝ ոտքի վրա, լավագույն դեպքում 5-10 րոպեի շրջանակներում: Որպես կանոն՝ ճեպազրույց անցկացնողին հարցեր ուղղել չի թույլատրվում, սակայն լինում են այդպիսի դեպքեր ևս: Երբեմն նման հարցերը անուշադրության են առնվում, սակայն լինում է նաև, որ արժանանում են պատասխանի: Այս վերջինը ավելի հաճախ այն դեպքերում, եթե հայտնվում եք ճեպազրույց անցկացնողի հետ դեմ առ դեմ և նրան եք դիմում իր մայրենի լեզվով, առանց թարգմանչի:

Ինձ վիճակվել է մասնակցել ոչ քիչ այդպիսի ճեպազրույցների, հատկապես ՀՀ նախագահական պալատում, ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների Երևան այցելությունների և ՀՀ նախագահի հետ նրանց վարած բանակցությունների առիթներով: Դա նույնիսկ ֆիզիկապես շատ հոգնեցուցիչ է: Նախ, լրագրողները հաճախ հնարավոր ճեպազրույց տվողին

սպասում են հատուկ նախասրահում կամ պատշգամբում, ոտքի վրա ժամ, ժամուկես (մի անգամ եղել է նաև 3 ժամ), որովհետև բանակցությունները սովորաբար երկարում են (զանազան պատճառներով) Այնուհետ հոգնեցուցիչ բանակցություններից դուրս եկող դիվանագետները շտապում են հեռանալ և հազիվ թե մեծ ցանկություն ունեն հանդիպելու իրենց դիմավորող լրագրողների բազմությանը: Այդպիսի դեպքերում սովորաբար լրագրողները «գրոհում են» այն դիվանագետին, որի լեզուն լավ գիտեն: Բայց եռյակն ինքն է որոշում, թե իրենցից ով է այս անգամ ճեպազրույց տալու: Մյուս երկուսը արագ հեռանում են, իսկ «դատապարտվածը» դանդաղում է, ապա արտաբերում ընդամենը մի քանի նախադասություն: Բախտդ բերեց մոտ կանգնած եղար քո ձայնագրիչը կորսա նրա ասածները: Բախտդ չբերեց՝ գրեթե ոչինչ չես լսի, կձայնագրես խշշոց, իրենց պահել չիմացող առանձին գործընկերներիդ անհարկի աղմուկը, լուսանկարչական ապարատների չխկչխկոցը, մանավանդ, եթե դիվանագետը ցածր ձայն ունի կամ այնքան է հոգնած, որ շատ ցածրաձայն է խոսում...Մի քանի ժամվա սպասումիդ վարձատրությունն այդ մի քանի րուպեն է, որ սովորաբար ավարտվում է ճեպազրույց վարողի «այսքանը, պարոնայք» բացականչությամբ և արագ քայլքով դեպի իրեն սպասող ավտոմեքենան:

Ինչպե՞ս դուրս գալ այն վիճակից, երբ հեռվում ես հայտնվել և գրեթե ոչինչ չես լսել: Լրագրողները հնարամիտ մարդիկ են, տեղն ու տեղը ավելի հաջողակ գտնված իրենց գործընկերոջ ձայնագրիչից վերաձայնագրում են ողջ ճեպազրույցը և շտապում խմբագրություն: Չէ՞ որ, ինչքան էլ կարճ լինի քո պատրաստած տեղեկատվությունը, զետեղվելու է 1-ին էջում: Իսկ 1-ին էջը բոլոր խմբագրություններում վերջինն է «փակվում»: Այսինքն, քեզ ու քո նյութին այնտեղ կսպասեն մինչև ուշ գիշեր, որքան էլ ճեպազրույցն ուշ վերջանա...

Դիտարկենք մեկ այլ հնարավորություն: Խմբագրից հանձնարարություն եք ստացել Հայաստանում հավատարմագրված որևէ դեսպանից, օրինակ Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ ու լիազոր դեսպան Մոհամմադ

Ֆարհադ Քոլեյնիից (ինձ վիճակվել է այդ անել) հարցազրույց վերցնել տարածաշրջանային զարգացումների, մեր երկրների հարաբերությունների և համանման խնդիրների մասին:

Ինչ կա որ վերցրիք հեռախոսը, զանգահարեցիք դեսպանին, շատ «երջանկացավ», որ իրեն արժանացրել եք այդքան մեծ պատվի՞...

Ամենևին: Հեռախոսն, իհարկե, վերցրի և զանգահարեցի ...Հայաստանում ԻԻՀ դեսպանատան մամուլի և հասարակայնության հետ կապերի պատասխանատուին: Ներկայացա, ասացի, որ մեր ամսագիրը («Հայացք Երևանից») անչափ շնորհակալ կլիներ պրն դեսպանին, եթե նա համաձայներ մեզ հարցազրույց տալ: Արագորեն թվարկեցի հարցերի այն մոտավոր շրջանակը, որի շուրջ կուզենայի զրուցել դեսպանի հետ: Խնդրեցի ինձ հետ հեռախոսով խոսող պարոնին թույլատրել այցելելու դեսպանատուն և ներկայացնելու մեր ամսագրի մի քանի համարները, որպեսզի դեսպանը համոզվի, որ խոսքը լուրջ, հեղինակավոր և պատշաճ մակարդակով հրատարակվող ամսագրի մասին է: Ավելացրի, որ ամսագիրը մի քանի հազար բաժանորդներ ունի ոչ միայն Հայաստանում, այլև ԱՄՆ-ում: Մի երկու խոսք ասացի նաև իմ մասին լրագրողական աշխատանքի և քաղաքական մեկնաբանի տասնամյակների փորձս ընդգծելով, որպեսզի չմտածի, թե «դեղնակտուց» մեկն եմ: Ինչպես երևում է կարողացա այդ պարոնին հետաքրքրել: Խնդրեց էլեկտրոնային փոստով ուղարկել դեսպանին հասցեագրվելիք հարցերը և դեսպանատան շենքի անցագրային կետ բերել մեր ամսագրի համարները: Կատարեցի: Մի երկու օրից զանգահարեց խմբագրություն.«Ձեր հարցերը և ամսագիրը հետաքրքրել են Դեսպանին: Նա համաձայնել է ձեզ ընդունել, եկեք վաղը, այսինչ ժամին»:

Գնացի: Դիմավորեց թարգմանը՝ Ռոբերտ անունով թեհրանահայ մի նիհար, բարձրահասակ, սիրալիր ու հաճելի երիտասարդ: Անմիջապես ուղեկցեց դեսպանի աշխատասենյակ: Քոլեյնին ինձ և մեր ամսագրի լուսանկարիչ Հակոբ Բերբերյանին դիմավորեց տեղից բարձրանալով և ձեռք մեկնելով: Ինձնից մոտ 10 տարով երիտասարդ էր, առանց

փողկապի, բայց կոստյումով Ներկայացա և ներկայացրի մեր լուսանկարչին, շնորհակալություն հայտնեցի «նորին գերազանցություն պրն Դեսպանին մեր ամսագրին հարցազրույց տալու նրա սիրալիր համաձայնության համար», խնդրեցի թույլատրել, որ լուսանկարիչը ամսագրում զետեղելու համար լուսանկարի իրեն աշխատասեղանի մոտ, ինչպես և ինձ հետ զրուցելիս, ապա ավելացրի, որ իր ժամանակը խնայելու համար անմիջապես պատրաստ եմ սկսել հարցազրույցը Հավանաբար, իմ ընդգծված հարգալից ու գործարար տոնը լավ տպավորություն թողեց: Քոլեյնին ժպտաց, ասաց, որ պատրաստ է «իր հարգելի հյուրերին տրամադրել այնքան ժամանակ, որքան կպահանջվի», հրավիրեց նստել բազմոցին, բավական ցածր մի սեղանի մոտ, որի վրա արդեն դրված էր նախապես իմ ուղարկած հարցերի պարսկերեն թարգմանության տեքստը: Այդ կռահեցի այն բանից, որ իմ առաջին մի քանի հարցերի թարգմանությունը լսելիս դեսպանը նայում էր այդ թղթին, ասես ստուգում էր, թե չե՞մ շեղվում, արդյոք, նախնական պայմանավորվածությունից: Տեսնելով, որ այդպիսի արկածախնդիր մեկը չեմ և անպատեհ բաներ չեմ անում, չեմ բանավիճում և հազվադեպ եմ ճշգրտող հարց տալիս, դեսպանը ավելի սիրալիր դարձավ և դադարեց թարգմանությանը նայել:

Խոսակցության ամբողջ ընթացքում, գրառումներ անելով, ես նայում էի ուղիղ իմ դիմաց, բազկաթոռին նստած զրուցակցիս դեմքին, հազվադեպ հայացք նետելով թարգմանչին: Հիշեք, դա մանրուք չէ. ձեր զրուցակիցը թարգմանը չէ, դեսպանն է: Թարգմանին պիտի ուղղված լինի ձեր ականջը (ձայնագրիչը) և ոչ աչքը: Դա շատ կարևոր է նաև նրա համար, որ դուք, մանավանդ միջազգային կյանքի կամ միջպետական հարաբերությունների մասին սուր հարց տալիս, կարողանաք ոչ միայն լսել պատասխանը, այլև տեսնել զրուցակցի դիմախաղը: Օրինակ, երբ ես հարցրի, թե «Ի՞նչ դիրք կբռնի Իրանի Կառավարությունը, եթե Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման շրջանակներում միջազգային հանրությունը պահանջի Ադրբեջանին Մեղրիի վրայով տարանցիկ միջանցք տրամադրել դեպի Նախիջևան, և այդ միջանցքի անվտան-

գության ապահովման պատրվակով խաղաղարար զորք մտցնի հայ-իրանական սահմանի այդ հատվածը», զրուցակիցս ուսերը թոթվեց և ակնհայտ հուզմունքով նկատեց

-Հայաստանը ինչու՞ պիտի համաձայնի իր տարածք միջազգային խաղաղարարներ մտցնելուն. Ձեր բանակը ուժեղ բանակ է:

Այս ասելիս դեսպանը սևեռուն նայում էր ուղիղ իմ բիբերին, կարծես ձգտում էր հասկանալ կռահեցի՞, որ ինքը իմ միջոցով բացահայտորեն հրահրում էր ոչ այնքան մեր ամսագրի ընթերցողներին, որքան Հայաստանի իշխանություններին չհամաձայնելու այդպիսի առաջարկի: Համոզվելով, որ իր խոսքերը տեղ են հասել, դեսպանն արդեն ակնհայտորեն թեթևացած, արդեն առանց ներքին լարման, զուտ որպես մեր բանակի ուժեղության մասին իր ռեպլիկի լրացում, ավելացրեց.

-Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը իր սահմանի վրա թույլ չի տա որևէ օտար զորքի ներկայությունը:

Սա շա՜տ խորիմաստ հավելում էր: Այս բառերի տակ ակնհայտ խոստում կար, որ եթե Հայաստանը ենթարկվի այդպիսի միջազգային ճնշումների (իսկ այն օրերի մամուլի հրապարակումները լի էին այդպիսի ճնշումների մասին հավաստիացումներով), ապա կարող է ապավինել Իրանի աջակցությանը, այդ թվում ռազմական աջակցությանը: Չէ՞ որ իր սահմանի վրա «օտար զորքի ներկայությունը» չհանդուրժելու մասին ակնարկը նշանակում էր, որ Իրանը այդ սահմանի վրա գտնվող Հայաստանի և Ռուսաստանի զորքերին «օտար զորք» չի համարում: Վերջապես, սա նաև մի թաքուն սպառնալիք էր Մեղրու հատվածում սադրանքներ մտմտացող ոչ բարեկամ երկրներին (Թուրքիա, Ադրբեջան, չի բացառվում նաև ԱՄՆ), որ եթե նույնիսկ Հայաստանը չդիմադրի, ապա Իրանն ինքը զորք կմտցնի Մեղրու հատված, որովհետև Աստված մի արասցե Հայաստանի կապիտուլյացիայի պարագայում հայ-իրանական սահմանի այդ հատվածում «օտար զորքի ներկայություն թույլ չտալու» այլ հնարավորություն պարզապես չի կարող գոյություն ունենալ: Լսելով դեսպանի այս պատասխանը, ակամայից

թեթևացած շունչ քաշեցի, աչքերիս մեջ, երևի, ուրախ փայլ երևաց (այն ժամանակ շատ էր շահարկվում միջազգային ճնշման տակ ԼՂՀ-ի դիմաց Մեղրին իբրև թե Ադրբեջանին «զիջելու» մասին ընթացող անդրկուլիսային սակարկությունների հարցը, և այդ ենթադրյալ վտանգից խուսափելու համար ես պատրաստ էի «կառչել» նույնիսկ... իրանական աջակցությունից): Քոլեյնին, ակնհայտորեն դիտողունակ մարդ, գոհունակությամբ ժպտաց իրեն ճիշտ էին հասկացել...

Ավարտելով նախապես մշակված 8 հարցերը, հեռանալու պատրաստակամություն ցուցաբերեցի: Դեսպանը ժպտաց, ասաց, որ ուզում է մեզ հյուրասիրել: «Թե՞յ, թե՞ սուրճ», հարցրեց: Սուրճ խնդրեցի: Քիչ անց պարսկական ազգային տարազ հագած սպասուհին (ի միջի այլոց երևանաբնակ հայուհի, ՀՀ քաղաքացի) դեսպանի և թարգմանի համար թեյ, իսկ ինձ ու Հակոբի համար մի-մի բաժակ սուրճ բերեց: Նաև քաղցրավենիք շոկոլադ, հալվա, հյութեր, հանքային ջուր, մրգեղեն և այլն: Անջատված ձայնագրիչի և գրպանս դրված ինքնահոսի ու ծոցատետրի բացակայությամբ Քոլեյնին շատ ավելի խոսքաշեն, նույնիսկ բարեհամբույր դարձավ: Արդեն քաղաքական թեմաներով չէինք խոսում, պարզ-մարդկային զրույց էինք վարում: Քանի որ հարցազրույցի քաղաքական մասը լիովին հրապարակված է, իսկ այդ «պարզ-մարդկային» մասը՝ ոչ, այստեղ հարմար եմ գտնում մի երկու բնորոշ մանրամասն նշել:

Հարցրի, թե ազատ ժամանակ ունենու՞մ է: Հաստատեց, թե ոչ այնքան, և այդպիսի դեպքերում սիրում է պարսկական, նաև հայկական ժողովրդական երաժշտություն լսել, քանզի «մեր ժողովրդական մեղեդիները իրար շատ հարազատ են»: Այնուհետև անցանք լեզուների հարազատությանը, հերթով միևնույն արմատից ծագող հայերեն ու պարսկերեն բառեր էինք ասում, ամեն այդպիսի գտնված բառի համար սրտանց ուրախանալով: Բավական խոսեցինք նաև միջնադարյան պարսկական պոեզիայի, իմամ Խոմեյնու հայերեն թարգմանված բանաստեղծությունների՝ այն օրերին Երևանում լույս տեսած ժողովածուի մասին: Գիտակ էր, ես էլ, փառք Աստծո, անտեղյակ չէի (միշտ սիրել եմ պարսկական միջնադարյան պոեզիան), և

մենք այնքան մտերմացանք, որ թույլտվություն խնդրեցի անձնական բնույթի հարցեր տալ՝ Ահա մեր զրույցի այդ հատվածը հիշողությամբ.

-Քանի՞ կին ունեք, պարոն Դեսպան (նկատեցի՞ք, արդեն առանց «ձերդ գերազանցության»):

-Մի սիրտ ունեմ, մի կնոջ եմ տվել:

-Ձեր կինը հիմա Երևանու՞մ է:

-Ոչ, ամենափոքր աղջիկս Թեհրանում հիմա համալսարանի ավարտական քննություններ է հանձնում, կավարտի մոր հետ կգան:

-Իսկ քանի՞ երեխա ունեք, տղա՞, աղջի՞կ:

-Երեք աղջիկ ունեմ, տղա չունեմ:

-Ոչինչ, պարոն Դեսպան, ես կանխատեսման որոշ շնորհք ունեմ, չգիտեմ՝ 4-րդն ինչ եք ունենալու, բայց 5-րդը հաստատ տղա է լինելու, շարունակեք զավակներ ունենալ...

Զրուցակիցս սրտանց քրքջաց. «Ոչ-ոչ, մեզ համար արդեն ուշ է...»:

ԻԻՀ դեսպանատանը ես մնացի մոտ երեք ժամ աներևակայելի մեծ մի ժամանակահատված շարքային լրագրողի և անձամբ դեսպանի շփման համար: Բաժանվեցինք որպես բարեկամներ, էլի մի քանի բաժակ թեյ ու սուրճ դատարկելուց հետո: Հրաժեշտին ինձ էլ, Հակոբին էլ գրիչ նվիրեց, թույլատրեց նույնիսկ դրսից լուսանկարել դեսպանատան շենքի մի մասը Երևանի ընդհանուր համայնապատկերի վրա...

Այս ամենն այսքան մանրամասն նկարագրեցի, որպեսզի իմանաք օտար դեսպանն էլ մարդ-արարած է, կարող է լինել թե՛ ընդգծված-պաշտոնական, թե՛ մտերմիկ-բարեկամական: Սակայն նույնիսկ ամենաբարեկամական հարաբերությունները օտար դեսպանի հետ ոչ մի նշանակություն չունեն, երբ խոսքը վերաբերում է նրա պաշտոնական պարտականությունների կատարմանը: Նույն Քոլեյնիի հետ ճակատագիրն ինձ հանդիպեցրեց ևս մեկ անգամ, արդեն տարիներ անց, երբ աշխատում էի «Արմենիա» հեռուստաընկերությունում և վարում էի «Հոթ լայն» քաղաքական ծրագիրը: Իրանի Իսլամական Հանրապետության 25-րդ տարեդարձի կապակցությամբ, որը

լրանում էր 2004 թ. փետրվարի 11-ին, ծրագրավորել էի հաղորդման հրավիրել Քոլեյնիին, որն արդեն 11 տարի պաշտոնավարում էր Հայաստանում, դրանցից 8 տարին արտակարգ ու լիազոր դեսպանի կարգավիճակով: Հաղորդումից մի քանի օր առաջ զանգահարեցի Հայաստանում Իրանի դեսպանատան մամուլի պատասխանատուին, ներկայացա, հայտնեցի դեսպանին եթերի հրավիրելու մտադրությունս: Խնդրեց ֆաքսով ուղարկել և հրավերը, և հարցերը: Փետրվարի 9-ին ուղարկեցի այսպիսի ֆաքս. **«Հանուն ամենակարող և բարեգութ Աստծո: «Արմենիա» հեռուստաընկերության քաղաքական մեկնաբան Ռաֆիկ Հովհաննիսյանից՝ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության Արտակարգ ու լիազոր Դեսպան Մոհամմադ Ֆարհադ Քոլեյնիին.**

*Ձերդ գերազանցություն, մեծարգո պարոն Դեսպան, Իրանի իսլամական հեղափոխության փառապանծ հաղթանակի 25-րդ տարեդարձի կապակցությամբ պատիվ ունեմ Ձեզ հրավիրելու Ձեր պետության ու ժողովրդի մեծ տոնին նվիրված հատուկ թողարկմանը «Արմենիա» հեռուստաընկերության «Հոթ լայն» ծրագրի եթերում: Հաղորդման տևողությունը 25 րոպե է: Ենթադրվում է այսպիսի սցենար. հաղորդումը բացում եմ ես, ներկայացնում Ձեզ և Ձեր թարգմանչին, շնորհակալություն հայտնում իմ հրավերն ընդունելու համար և շնորհավորանքի կարճ խոսքից հետո Ձեզ խնդրում եմ ներկայացնել հեղափոխության հաղթանակից հետո անցած 25 տարիների նվաճումները, նաև դժվարությունները, եթե Դուք հարմար կհամարեք: Ձեր խոսքի ընթացքում հնարավոր է, որ ես կարճ միջամտություններով Ձեզ խնդրեմ անդրադառնալ հայ-իրանական հարաբերությունների ներկա վիճակին ու հեռանկարներին, շնորհակալություն հայտնելով ձեր երկրում հայազգի քաղաքացիների նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար՝ նաև խնդրեմ անդրադառնալ այսօր Իրանի կյանքում հայ համայնքի խաղացած դերին: Իմ պատկերացմամբ, հաղորդումը կլինի երկու եղբայր ու բարեկամ ժողովուրդների և պետությունների համագործակցության մասին ջերմ զրույց: Եթե Դուք հնարավոր կհամարեք այս*

*հրավերն ընդունել, ապա խնդրում եմ «Արմենիա» հեռուստաընկերությունում լինել փետրվարի 11-ին, ժամը 16-ին: Հաղորդումը տեսագրվում է ուղիղ եթերի ռեժիմով և հեռարձակվում նույն օրը ժամը 22-30-ին: Կանխավ շնորհակալությամբ և խորին հարգանքով Ռաֆիկ Հովհաննիսյան. 9 02. 04 Երևան»*

Մեկ օր անց զանգահարեց դեսպանատան մամուլի պատասխանատուն, թեհրանահայ մի աղջիկ, և ասաց, որ դեսպանն իմ հրավերը ընդունել է, նշված ժամին կլինի տեղում: Իսկապես եկավ, հաղորդումը տեսագրեցինք ու եթեր տվեցինք. շատ ջերմ զրույց էր, որից Քոլեյնին, ինչպես երևում է, շատ գոհ մնաց: «Արմենիան», ի դեպ, միակ հեռուստակայանն էր, որի կենդանի եթերում Իրանի դեսպանն այդ օրը երևաց ամբողջ 25 րոպե: Հանրային հեռուստատեսությունը հաղորդեց Քոլեյնիի ընդամենը 5-րոպեանոց պաշտոնական ելույթը, մյուս հեռուստակայանները բավարարվեցին 1-2-րոպեանոց տեղեկատվական ռեպորտաժներով, իսկ ահա մեր զրույցը շատ ավելի անմիջական էր, անհամեմատ ավելի լայն ընդգրկումով: Տեսագրության ավարտին ակնհայտորեն գոհ մնացած դեսպանը հրավիրեց երեկոյան 19-ին լինել իրենց դեսպանատանը մասնակցելու տոնի առթիվ կազմակերպված ընդունելությանը (բանկետին): Քաղաքավարի հրաժարվեցի. «Անչափ շնորհակալ եմ, ձերդ գերազանցություն, սիրով կգայի, սակայն վերջերս սրտի վիրահատություն եմ տարել, ծանրաբեռնվել չեմ կարող...»: «Ձեր բացակայությունը կզգացվի», արձագանքեց Քոլեյնին, ապա սկսեց հետաքրքրվել Հայաստանում որտե՞ղ են ինձ վիրահատել, ո՞ր հիվանդանոցում, ո՞ր բժիշկը: Որսալով զարմացած հայացքս, ասաց. «Ես էլ եմ անցյալ տարի ինֆարկտ տարել». Հետո հավելեց, որ ինձ հիշում է դեռ մեր առաջին հանդիպումից, որովհետև դեսպանի կարգավիճակով իրենից առաջին հարցազրույց վերցրած լրագրողը ես եմ եղել... Դարձյալ բաժանվեցինք որպես լավ բարեկամներ, նույնիսկ երբ ճանապարհում էի՝ ձգտում էր թույլ չտալ, որ աստիճաններից իջնեմ, անունով էր դիմում և շեշտեց, թե ինքն ինձ համար ոչ որպես դեսպան, այլ որպես Քոլեյնի՝ բարեկա՛մ է:

Հուսով եմ, այս պատմությունից ձեզ համար օգտակար դասեր քաղեցիք, և անցնեմ մի այլ պատմության, ի՞նչ է սպասվում լրագրողին, եթե նրան վիճակվել է ուղեկցել իր երկրի ղեկավարին նրա արտասահմանյան պաշտոնական ուղևորության ժամանակ:

Ինձ, օրինակ, վիճակվել է լինել ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի Մոսկվա կատարած պաշտոնական ուղևորություններից մեկը լուսաբանող լրագրողների խմբում. Մեր փոքրիկ խմբի ղեկավարը վարչապետի մամլո քարտուղար Մարտին Հուրիխանյանն էր:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի «հատուկ թռիչքների» սպասասրահում, այնուհետև ՀՀ նախագահի անձնական ՏՈՒ-134 ինքնաթիռում մոտ 6 ժամ սպասում էինք թռիչքի վարչապետը չէր ժամանում: Երեկոյան 7-ի մոտ վերջապես թռանք, առանց իրեն տեսնելու, իհարկե, քանի որ ինքն ու Մոսկվայում կայանալիք ԱՊՀ երկրների կառավարությունների ղեկավարների հերթական Գագաթաժողովին (սամմիտ) մասնակցող հայաստանյան պատվիրակության մյուս անդամները գտնվում էին 1-ին կարգի սրահում, մենք 2-րդ կարգում: Մոսկվայի «Շերեմետևո» օդանավակայանից ՀՀ դեսպանության տրամադրած միկրոավտոբուսով 2 ժամից հասանք մեր դեսպանատան հյուրանոցը և... մեռելի պես քնեցինք:

Առավոտյան, հազիվ նախաճաշած, մեկնեցինք «Պրեզիդենտ-հոթել», դարձյալ մեր դեսպանատան տրամադրած նույն միկրոավտոբուսով: Անցանք անվտանգության 4 գոտիների մանրակրկիտ ստուգումների դժոխքով և հայտնվեցինք հոթելի գլխավոր նախասրահում արդեն այն ժամանակ, երբ Գագաթաժողովն արդեն... սկսվել էր:

Իհարկե, նախօրոք տեղյակ էինք Գագաթաժողովի օրակարգին: Մարտին Հուրիխանյանը դեռ Երևանում մեզ տրամադրել էր այդ փաստաթուղթը: Բայց մենք, իհարկե, չգիտեինք և չէինք էլ կարող իմանալ, թե 21 հարցերից բաղկացած հսկայական օրակարգի որ հարցը ինչպես է քննարկվում, կառավարություններից յուրաքանչյուրն ինչ մոտեցում ունի այս կամ այն խնդրին (դրանք գերազանցապես տնտե-

սական բնույթի էին)։ Մեր հոգեմաշ սպասումի երեք ժամը (իսկ Գագաթաժողովը հենց այդքան տևեց) լցնում էինք ԱՊՀ այլ երկրներից ժամանած մեր գործընկերների հետ ծանոթություններ հաստատելով, պարապ զրույցներով և Գագաթաժողովի անցկացման սրահից երբեմն-երբեմն շատ կարճ ժամանակով դուրս եկող այս կամ այն պաշտոնատարին «գրոհելով»:

Հիշում եմ Ղազախստանի վարչապետ, նիհար, բարձրահասակ Կաժիգելդիին միջինասիական երկրների լրագրողների սեղմ օղակի մեջ (այժմ նա, որքան գիտեմ, քաղաքական վտարանդի է): Խեղճ մարդը, երևի, սրահից դուրս էր եկել փոքր կարիք հոգալու, իսկ նրան ուղիղ 30 րոպե թույլ չէին տալիս ոտքը ոտքի առաջ դնել, և չնայած երիտասարդ տարիքին Կաժիգելդին ակնհայտորեն նեղվում էր...Ի հավելումն, նա խոսում էր Գագաթաժողովում քննարկված այն հարցերի մասին, որոնք կոնկրետ Հայաստանի համար հետաքրքրություն չէին ներկայացնում: Սակայն տեղեկատվության կատարյալ բացակայության պայմաններում դա էլ ինչ-որ բան էր: Ռուսական առածն ասում է՝ «Ձուկ չեղած տեղը դոդոշն էլ սոխակ է»:

Ինչևէ, Գագաթաժողովն ավարտվեց կեսօրվա ժամը 13-ին, դրանից հետո վարչապետները բոլորովին այլ մի դռնով հեռացել էին խորին հիասթափության մեջ գցելով հատկապես մեր հեռուստա և ֆոտո-լրագրող գործընկերներին: Փոխարենն ասվեց, որ ՌԴ վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը Գագաթաժողովի արդյունքների մասին ասուլիս է տալու, հրամմեցեք այսինչ դահլիճ:

«Հրամմեցինք»: Չեռնոմիրդինը մեզ հատկացրեց 30 րոպե, որից 20-ն ինքն էր խոսում ճիշտ և ճիշտ ռուսական էստրադայի տաղանդավոր երիտասարդ վարպետ Մաքսիմ Գալկինի պարոդիաներից ձեզ ծանոթ անհասկանալի ռուսերենով: Այնուհետև, կարծեմ, պատասխանեց Ուկրաինայի և Մոլդովայի լրագրողների մեկական հարցերին ու հեռացավ:

Այս ասուլիսն էլ չհագեցրեց տեղեկատվական սովը: Արժե՞ր այսքանի համար... Մոսկվա հասնել: Մանավանդ, դրանից անմիջապես հետո դարձյալ ուղևորվեցինք օդանավակայան, դարձյալ սպասասրահում և ինքնաթիռում ժամերով

սպասեցինք վարչապետ Բագրատյանին և թռանք այնքան ուշ, որ խմբագրություն հասնելու և նյութ գրելու մասին խոսք լինել չէր կարող.

Ամբողջ ցավն այն է, որ դեռ Երևանում Գագաթաժողովի օրակարգի մասին նյութ էի հանձնել տակը գրելով «Մոսկվա, հեռախոսով»: Խմբագրի տեղակալի հետ պայմանավորվել էի, որ եթե չհաջողվի Մոսկվայից հեռախոսով ավելի հետաքրքիր բան հաղորդել (ինչպես և եղավ), ապա այդ թղթակցությունը թող զետեղի 1-ին էջում: Դրանից մեր ընթերցողը, նախ, կիմանար, որ Մոսկվայում այդպիսի Գագաթաժողով է գումարվել, որին մասնակցում է նաև Հայաստանի պատվիրակությունը (կազմը նշել էի), կծանոթանար օրակարգի հիմնական հարցերին, ինչն ինքնին որպես տեղեկատվություն հետաքրքիր էր, վերջապես կսպասեր հետագա նորությունների, ինչը... խոստանում էի:

Բայց ինչպե՞ս էի կատարելու ընթերցողին տված այդ խոստումս: Գայի Երևան և պատմեի այն ամենը, ինչ ծե՞զ նկարագրեցի քիչ վերը: Օրաթերթի ընթերցողների ո՞ր տոկոսին դա կարող էր հետաքրքրել: Ելք էի որոնում և, կարծես, գտա. խնդրեցի Մարտին Հուրիխանյանին վարչապետ Բագրատյանին համոզել, որ ինքնաթիռում մեզ...հարցազրույց տա: Երևան հասնելուց 1 ժամ առաջ, վերջապես, մեզ հրավիրեցին 1-ին սրահ, ուր կլոր սեղանի շուրջ Հայաստանի պատվիրակության անդամները զրուցում և...ծխում էին: Սեղանին մրգեղեն կար, որին ոչ ոք ձեռք չտվեց: Հրանտ Բագրատյանը, ինքնաթիռի շարժիչների միալար գվվոցի տակ, ինքն էլ միալար, ցածր ձայնով, սակայն շատ մանրամասնորեն պատմեց Գագաթաժողովի ընթացքի, մեզ հետաքրքրող հարցերի քննարկման ժամանակ այս կամ այն պատվիրակության ղեկավարի բռնած դիրքի, որոշումների ընդունման կամ մերժման ընթացակարգի մասին:

Ինքը, Բագրատյանը, հրաժարվել էր ստորագրել երկու փաստաթուղթ: «Իսկ ձեր հրաժարվելը վատ չընդունվե՞ց, պարոն վարչապետ» հարցին Հրանտ Բագրատյանը պատասխանեց, թե ԱՊՀ-ն միջպետական հարաբերությունները

կանոնակարգող կազմակերպություն է, և նրան անդամակցող պետություններից յուրաքանչյուրը որևէ փաստաթուղթ ստորագրելիս նախ և առաջ առաջնորդվում է սեփական շահերով ԱՊՀ-ն չի կարող հարկադրել որևէ անդամ-պետության կատարելու սեփական շահերին դեմ քայլ: Տվյալ դեպքում հարցը վերաբերում էր երկիր ներկրվող-արտահանվող ապրանքների վրա դրվող մաքսային տոկոսադրույքների ինչ-որ միասնական նախագծի, որն, ըստ Բագրատյանի, մեզ ձեռնտու չէր .

Հրանտ Բագրատյանի այս «ինքնաթիռային ասուլիսը» լիուլի բավական էր առնվազն ինձ համար: Այս կերպ Հայաստանի վարչապետն իմ ընթերցողների առաջ փրկեց. . իմ վարկը, այլապես նրանց մեծ մասը պիտի հեգներ, թե «ինչու՞ հասար Մոսկվա»: Այժմ այդ հարցին կարող էի պարզերես պատասխանել թեկուզև Հայաստանի վարչապետի «ինքնաթիռային ասուլիսին» ներկա գտնվելու համար· Չէ՞ որ եթե Մոսկվա չգնայի, այդ թեկուզև անսովոր ասուլիսից կզրկվեի, իսկ վարչապետները, ավա՜ղ, այնքան էլ հաճախ չեն ասուլիսներ հրավիրում...

Ի՞նչ դաս կարելի է քաղել վերոհիշյալ պատմությունից: Նախ այն, որ սեփական երկրի ղեկավարին ուղեկցելը նրա պաշտոնական ուղևորությունների ժամանակ միշտ էլ պատիվ է թե տվյալ լրագրողի, թե լրատվամիջոցի համար: Սակայն դա չափազանց հոգնեցուցիչ բան է, և եթե ձեր առողջությունն ամուր չէ, ձեր ջղերը չեն դիմանում անվերջ սպասումների և ստուգումների ռեժիմին, ավելի լավ է հրաժարվեք այդպիսի ուղևորությունից: Երկրորդ ղեկավարին ուղեկցելը լրագրողի համար մեծ մասամբ չի նշանակում նրան անմիջականորեն շփվելու հնարավորություն: Հիշեք, դուք պաշտոնական պատվիրակության անդամ չեք, ընդունող երկիրը որևէ պարտավորություն չի ստանձնել ձեր նկատմամբ, պատասխանատու չէ ձեր սննդի, հանգստի, ձեր խմբագրության հետ հեռախոսակապ հաստատելու և նույնիսկ ձեր անվտանգության համար, եթե դուք արարողակարգով նշված ժամկետում պահանջվող տեղում չեք գտնվում: Ձեր հանդեպ այդպիսի պարտավորություններ չի կրում նաև ձեր երկրի պաշտոնական պատ-

վիրակության որևէ անդամը. Ձեզ կարող է օգնել միայն մամուլի պատասխանատուն, որը նույնպես պաշտոնական պատվիրակության անդամ չէ, սակայն, ի տարբերություն ձեզ, իրավունք ունի շփվել պաշտոնական պատվիրակության անդամների, այդ թվում նաև ղեկավարի հետ:

Եվ վերջին դասը նախապես (այն էլ դեռ մեկնումից առաջ, Երևանու՛մ) ընթերցողին որևէ միջազգային համաժողովից «ավելի մանրամասն տեղեկություններ հաղորդելու» խոստումներ մի տվեք. Նախ դա, որքան էլ անմեղ թվա, կեղծիք է: Նյութը գրել սեփական խմբագրությունում և տակն ստորագրել «Մոսկվա, հեռախոսով», պարզապես ամոթ է (իմ լրագրողական պրակտիկայում սա միակ նման դեպքն է, և ես դա պատմեցի, որպեսզի ձեր պրակտիկայում նույնիսկ 1 այդպիսի դեպք չլինի): Եվ երկրորդ, խոստանալով նոր, «ավելի մանրամասն տեղեկություններ», դուք չեք կարող 100 տոկոսանոց երաշխիք ունենալ, որ այդպիսի տեղեկություններ հավաքելու միջոց իսկապես կգտնեք...

Լրագրողը և դիվանագիտությունը կարող են այլ «հանդիպումներ» էլ ունենալ: Իմ պրակտիկայից պատմեմ ևս մի դրվագ:

2003 թվականի նոյեմբերի առաջին օրերին զանգահարեց Հայաստանում Սիրիայի Հանրապետության դեսպանի ավագ թարգման Հովհաննես Ասատրյանը, որին ավելի վաղ լավ ծանոթ էի:

- Դեսպանը խնդրում է՝ մի քանի րոպեով իրեն այցելես:

Ներկա դեսպանին ծանոթ չէի, գիտեի նրա նախորդին՝ Համիդ Հասանին, որի հրավերով եղել էի իրենց ազգային տոների առթիվ կազմակերպված ընդունելություններին:

-Ի՞նչ կա, Հովհաննե՛ս, Սիրիայի հերթական ազգային տոնը դեռ բավական հեռու է...

-Խնդրում եմ արի, բան ունի քեզ ասելու...

Գնացի: Հովհաննեսը ներկայացրեց: Միջահասակ, ալեխառն, ժպտուն աչքերով, համակրելի մարդ է Հայաստանում Սիրիայի Հանրապետության արտակարգ ու լիազոր դեսպան Ղասսան Ռասլանը: Շատ լավ խոսում է ռուսերեն, մինչ Երևան

գալը եղել է Սիրիայի դեսպանը Ռուսաստանում. 19-րդ դարի ռուս գրականության մասնագետ է և այդ թեմայով դիսերտացիա է պաշտպանել Մոսկվայի համալսարանում:

Շատ ջերմ ընդունեց, առանց պաշտոնականությունների: Ասաց, որ մշտապես հետևում է «Արմենիա» հեռուստաընկերության եթերում իմ «Շաբաթը» վերլուծական-հեղինակային ծրագրին, երբեմն-երբեմն նաև «Ազգ» օրաթերթում տպագրածս հոդվածներին, ինձ համարում է «Մերձավոր արևելքի իրադարձությունները օբյեկտիվորեն լուսաբանող լավագույն մեկնաբաններից մեկը Հայաստանում» և իր կառավարության անունից լիազորված է մեկ շաբաթով ինձ հրավիրել Դամասկոս «Բարենորոգչական շարժման 33-րդ տարեդարձին նվիրված հանդիսություններին մասնակցելու»: Ուղևորության ամբողջ ծախսը հոգալու է սիրիական կողմը, ինձ վրա որևէ պարտավորություն չի դրվում, վերադարձիս կարող եմ տպավորություններ գրել, կարող եմ և չգրել, ընդսմին, շատ հնարավոր է, որ իմ տպավորությունները իրենց համար նպաստավոր չլինեն, բայց ես ազատ մարդ եմ...

-Շնորհակալ եմ, բայց ես անգլերեն չգիտեմ, արաբերենի մասին էլ խոսք չկա:

-Օդանավակայանում ձեզ կդիմավորի թարգմանը, որը կամ հայ կլինի, կամ ռուսերեն ազատ խոսող արաբ: Սիրիայում գտնվելու բոլոր օրերին նա ձեր կողքին կլինի:

Մի խոսքով մեկնեցի: Իջնում եմ Դամասկոսի օդանավակայանում, իսկ դիմավորող... չկա: Մի գիշեր մնացի «Ապագայի աշտարակ» անունով բավական տանելի մի հյուրանոցում, հաջորդ առավոտյան Դամասկոսի «Ռուսական մշակույթի կենտրոնի» աշխատակիցների օգնությամբ կապվեցի Սիրիայի մեր դեսպանատուն և դեսպանատան 1-ին քարտուղար Հրաչ Փոլադյանի սիրալիր օգնությամբ, վերջապես, «Շամ» կոչվող հինգաստղանի հյուրանոցի շքասրահում գտա իմ հյուրընկալներին Սիրիայի տեղեկատվության և էմիգրացիայի նախարարությունների պաշտոնատարներին:

-Նաբիլ Օմրան,-ներկայացավ իմ բարձրահասակ թարգմանը,-հազար ներողություն, որ երեկ չկարողացա դիմավորել...

Նաբիլը հիանալի տղա դուրս եկավ ժամանակին սովորել էր Խորհրդային Միությունում, Լենինգրադի համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետն էր ավարտել, այնտեղ էլ ամուսնացել էր ռուս աղջկա Տանյայի հետ և նրա հետ էլ աշխատում էր Սիրիայի ռադիոյի ռուսերեն հաղորդումների խմբագրությունում, որն ինքն էլ վարում էր.

-Ես գրում եմ, Տանյան մի վերջին անգամ ստուգում է քերականական ճշտությունը, նոր միայն եթեր եմ դուրս գալիս,- վրա էր տալիս իմ թարգմանը, մինչ ես իրերս էի տեղավորում:

Նաբիլն իմ «լեզուն» եղավ ամբողջ մի շաբաթ ուր էլ լինեի: Հայաստանից մենակ ես էի, իսկ հյուրանոցում պարզվեց, որ նույն կարգի հրավերներ էին ստացել ևս 16 երկրների 17 լրագրող Ռուսաստանից 2 հոգի (Վադիմ Լագուտինը ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ից և Վլադիմիր Դոնցովը ԱԳՆ դիվանագիտական ակադեմիայից), մյուսներից մեկական:

Այդ թվում Իրանից, Թուրքիայից, Թունիսից, Ալժիրից, Պակիստանից, Հորդանանից, Սաուդյան Արաբիայից...

Նոյեմբերի 16-ին Դամասկոսի պետական համալսարանի նիստերի ոչ այնքան մեծ դահլիճում կայացավ այն գլխավոր միջոցառումը, որի համար մեզ Սիրիա էին հրավիրել Բարենորոգչական շարժման 33-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստը: Այս Շարժմանը, որն սկսվել է հանգուցյալ նախագահ Հաֆեզ ալ Ասադի նախաձեռնությամբ, Սիրիայում մեծ նշանակություն է տրվում: Տոնակատարությունը ոչ միայն չէր զիջում, այլև գերազանցում էր խորհրդային տարիներից լավ ծանոթ և արդեն կարծես վաղուց մոռացված նույն կարգի հանդիսավոր նիստերը: Մինչև դահլիճ գորգերով ծածկված փողոցի երկու կողմից պատվո պահակի պես ծգված զինվորներ, կապույտ փողկապավոր պիոներների շարքեր, ծափահարող հարյուրավոր մարդիկ, քայլերգեր թնդացնող փողային նվագախումբ...Դահլիճում պատվավոր նախագահություն, հյուրերս դահլիճի առաջին շարքում, զեկուցում, ուր մատնանշվում էին Բարենորոգչական շարժման 33 տարիներին Սիրիայի ձեռք բերած նվաճումները, որոտընդոստ ծափահարություններ, երբ զեկուցման մեջ հիշատակվում էին նախկին և

ներկա նախագահների անունները, մոտ 300 հոգուց բաղկացած երիտասարդների մի խումբ, որ այդպիսի դեպքերում հետին շարքերից, հոտընկայս, ռուսական չաստուշկաների կարգի քաղաքական քառատողեր էր երգում, այն տարբերությամբ միայն, որ այդ քառատողերի յուրաքանչյուր տողը նախ երգում էր մենակատարը, հետո կրկնում էր երգչախումբը...

Նույն երեկո մեր խումբը հյուրընկալվեց վարչապետ Մոհամմադ Նաժի Օտրիի կողմից: Օտրին խոսեց շուրջ 50 րոպե, ևս 1 ժամից ավելի պատասխանում էր լրագրողներիս հարցերին, այդ թվում՝ ազատ անգլերենով, որով նրան դիմեց մեր պակիստանցի գործընկերը: Մեկ օր անց կառավարող ԲԱԱՍ կուսակցության «Ալ Բաաս» պաշտոնաթերթի խմբագրությունում հանդիպում ունեցանք երկրի 1-ին փոխնախագահ Աբդել ալ-Հալիմ Խադդամի հետ: Երկու ասուլիսների մասին էլ պատմել եմ «Ազգ» օրաթերթի 2003 թվականի դեկտեմբերի 1-ի և 4-ի համարներում շարունակաբար և միևնույն «Կհաջողվի՞ փակ պահել դժոխքի դարբասները Մերձավոր Արևելքում» վերնագրով լույս տեսած իմ հրապարակումներում: Սիրիայում այլ պաշտոնական հանդիպումներ էլ եղան կառավարության մի շարք անդամների հետ, մեզ տարան իսրայելա-սիրիական սահման Գոլանի բարձունքներ, ուր տեսա 1967 թ. պատերազմում իսրայելցիների կողմից գետնին հավասարեցված Կունետրա քաղաքի սահմռկեցուցիչ ավերակները, որ պահում են որպես մարդկային բարբարոսության հուշարձան...

Իբրև զբոսաշրջիկ չէի գնացել և քիչ ժամանակ ունեցա Դամասկոսին ծանոթանալու, թեև այդ կարճ ժամանակում էլ հսկայական տպավորություններ ստացա: Բայց իմ նպատակը ձեզ այդ մասին պատմելը չէ: Իմ սիրիական ուղևորությունից կուզենայի, որ դուք մի քանի դաս քաղեք.

Արտասահման մեկնելիս նկատի ունեցեք, որ ձեզ կարող են նաև...չդիմավորել: Հաշվի առեք այդ հնարավորությունը և նախատեսեք ձեր գործողությունները այդ պարագայում:

Երևանից դուրս գալուց առաջ անպայման իմացեք այն երկրի Հայաստանի դեսպանատան հասցեն և հեռախոսները, ուր մեկնում եք: Հիշեք, ձեր ամենահզոր պաշտպանն օտար

երկրում ՀՀ դեսպանն է, եթե նույնիսկ մեկնել եք ոչ որպես այդ երկրի կառավարության պաշտոնական հյուր, այլ մասնավոր անձ (ի դեպ, այստեղ կուզենայի սրտագին շնորհակալություն հայտնել այն ժամանակ Սիրիայի մեր դեսպան Լևոն Սարգսյանին սիրալիր ընդունելության, ինչպես նաև դեսպանատան բոլոր աշխատակիցներին ուշադիր և հոգատար վերաբերմունքի համար):

Հաջորդ դասը օտար երկրի պաշտոնական արարողություններին մասնակցելիս մի արտահայտեք զարմանք, առավել ևս մի հեգնեք, թե «մեզ համար դա արդեն անցած փուլ է»: Այդպիսի բան իրեն թույլ տվեց իմ ռուս գործընկերներից մեկը, և դա ռուսերեն հասկացող մեր թարգմանների համար շատ տհաճ էր:

Մի շատ կարևոր բան ևս հարգալից եղեք ձեր գտնված երկրի ազգային սրբությունների, ավանդույթների, նիստուկացի, մշակութային արժեքների նկատմամբ, եթե նույնիսկ դրանք ձեզ դուր չեն գալիս: Մի մերժեք իրենց համար մեծ արժեք ներկայացնող որևէ պատմական վայր, մշակութային հուշարձան կամ թանգարան այցելելու հրավերը: Նախ, դրանցում միշտ հետաքրքրական որևէ բան կլինի և ապա հաճելի կլինի ձեր հյուրընկալներին: Իմ թարգմանն, օրինակ, Գոլանի բարձունքից (իրենց լեզվով Ջոլան է, Գոլան չէ) անսահման հրճվանքով ցույց էր տալիս հեռու հորիզոնում երևացող համեստ մի լեռ՝ Ջաբալ-աշ-Շեյխը: Թարգմանաբար լեռան անունը նշանակում է «Ծերունու (Շեյխի) գլուխ», նկատի առնելով, որ ծովի մակերևույթից շուրջ 3 հազար մետր բարձր այդ լեռնազանգվածի վրա...ձյան նստվածքներ են երևում: Տաք, խորշակյալ Արևելքի համար ձյունը հրաշքի պես մի բան է: Եվ իրենք ժամերով կարող են նայել հեռու հորիզոնի այդ հրաշքին: Ինձ լեռնային Հայաստանի բնակչիս համար, որ ամեն օր հնարավորություն ունի տեսնելու Արարատի ճերմակ հավերժությունը, որ երիտասարդ տարիներին ոտք է դրել հայաստանյան ոչ քիչ այդպիսի գագաթների, Ջաբալ -աշ- Շեյխը, մեղմ ասած, առանձին տպավորություն չթողնող շարքային մի լեռ էր: Բայց ես հարկ համարեցի լուսանկարել այդ լեռը և թարգմանիս էլ լուսանկարեցի լեռան համայ-

չունենալ եվ եթե դուք, նախապես իմանալով, որ այսինչ ժամին ենթադրվում է, ասենք, Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի հանդիպումը Հայ-ռուսական (սլավոնական) պետական համալսարանի ուսանողության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ ժամանակից շուտ շտապեք համալսարան, տեղ գրավեք դահլիճում, ապա չի բացառվում, որ. . օրն անպտուղ ու անիմաստ կերպով այդ դահլիճում էլ անց կացնեք Կուչման այդպես էլ չգա: Ոչ, ոչ, նա ամենևին չի ցանկացել վիրավորել որևէ մեկին, առավել ևս Հայաստանում արդեն մեծ համբավի հասած սլավոնական պետական համալսարանի պրոֆեսորներին և ուսանողներին: Նրա ժամանակը, ավա՜ղ, չի բավարարել առավել կարևոր պետական գործերը, ասենք նախագահ Քոչարյանի հետ բանակցությունները, ապա նաև ՀՀ ԱԺ արտահերթ նիստում նրա ելույթն ու հանդիպումը օրենսդիրների հետ անհամեմատ ավելի երկար են տևել, քան նախատեսված էր...

Ժամանակացույցի այդ կարգի խախտումները կարող են նաև միանգամայն անսպասելի պատճառներով լինել: Ինձ հավաստի հայտնի է այսպիսի մի պատմություն. տարիներ առաջ Երևան էր ժամանել Ղրղզստանի նախագահ Ասկար Ակաևը: ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ուղեկցությամբ նա բարձրացավ Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Արարողակարգով նախատեսված միջոցառում էր, որ շատ տեսած կլինեք հեռուստատեսությամբ՝ զինվորական պահակախումբ, ծաղկեպսակ, հարգալից խոնարհում անմար կրակին... Այդ տարի, մի քանի ամիս առաջ, Ծիծեռնակաբերդի համալիրում շահագործման էր հանձնվել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի շենքը, իր դեռ այնքան էլ ոչ շատ հարուստ ցուցանմուշներով: Ժամանակացույցով նախատեսված չէր Ակաևի այցը թանգարան: Բայց ահա, արդեն ծաղկեպսակ դնելու արարողությունից հետո, թանգարանի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, իմ լավ բարեկամ Լավրենտի Բարսեղյանը, պահը որսալով, դիմում է Ղրղզստանի նախագահին.

-Ասկար Ակաևիչ, չէի՞ք ցանկանա տեսնել Հայոց գրության պատանության թանգարանը

-Բայց ես այստեղ թանգարանի շենք չեմ տեսնում

-Իսկ մենք ճիշտ թանգարանի մոտ ենք, համեցեք ներսն (հուսով եմ, դուք, իմ երիտասարդ բարեկամ, մեկ անգամ չեք եղել այդ թանգարանում և գիտեք, որ այն հանրապետության ստորգետնյա է).

Ակաևը համաձայնում է թանգարան մտնել, չնայած Լևոն Տեր-Պետրոսյանի հիշեցմանը, թե ուշանում են Երևանի պետհամալսարանում կայանալիք հանդիպումից:

-Ոչինչ, շատ չենք մնա,-հորդորում է հյուրը, և երկու նախագահներն, իրենց շքախմբերով, իջնում են թանգարան: Ցուցանմուշները, կրկնում եմ, դեռ այնքան էլ շատ չէին, սակայն Ակաևը, ինչպես երևում է, խորապես ցնցվում է տեսածից. Նա հուզիչ գրառում է կատարում պատվավոր հյուրերի մատյանում, ապա, սեղմելով Լավրենտի Բարսեղյանի ձեռքը, հեռանում է: ՀՀ նախագահի աշխատակազմից Բարսեղյանն, իհարկե, նույն օրն իսկ խիստ հանդիմանության է արժանանում «արարողակարգն ու ժամանակացույցը խախտելու և ինքնագլխության համար»: Բայց մեկ տարի անց, երբ հերթական անգամ եղա թանգարանում, ինձ դիմավորեց շողացող ժպիտով.

-Իմացա՞ր, Ակաևն ինչ է արել. Բաքվում երեկ աստուլիս է տվել, և մի լրագրողուհի հարցրել է, թե ինչպես է թուրքալեզու երկրի ղեկավարը իրեն թույլ տվել Երևանում այցելելու «այսպես կոչված Հայոց ցեղասպանության թանգարան»: Ակաևը ակնհայտ բարկությամբ շպրտել է.

-Հայոց ցեղասպանությունն «այսպես կոչված» չէ, պատմական ցավագին փաստ է, իսկ այն ժխտելը անբարոյականություն: Ես իմ աչքերով եմ տեսել դրա ապացույցները ձեր նշած ցեղասպանության թանգարանում...

-Կեցցես Ակաև,-բացականչեցի ես,-այ քեզ ազնվություն: Պատկերացնում եմ, թե Բաքվում ի նչ ոռնոց է բարձրացել:

-Ոչ մի ոռնոց էլ չի բարձրացել, սկսվել-պապանձվել են, հետո արագորեն թեման փոխել: Բա՞, իսկ ինձ քիչ էր մնում պատժեին, թե «արարողակա՞րգն ինքնագլու՞խ խախտե՞լ

եմ»,- ինչ-որ անհայտ մեկին նմանակելով ակնհայտորեն ծաղրում էր Լավրենտի Բարսեղյանը:

-Ո՞վ էր, Լավրենտի՛ Աշոտովիչ, զանգեք-շշպռեք:

-Ինձ նո՞ր գիտես, ի՞նչ է. Դեռ երեկ երեկոյան եմ զանգել ու երեսին ասել այն ամենն, ինչ մտածում եմ իր մասին..

Այսպիսի բաներ էլ են պատահում, երիտասարդ բարեկամ: Եվ եթե երբևէ քեզ վիճակվի ինչ-որ դահլիճում ժամերով սպասել որևէ բարձրաստիճան հյուրի, ապա մի նյարդայնանա և մի մտածիր, թե ուշանում է, որովհետև անպայման կոնծաբանությամբ է զբաղված: Կոնծելն էլ չի բացառվում, իհարկե (բարձրաստիճան պաշտոնյաներն էլ մարդ են և ոչինչ մարդկային խորթ չէ նրանց), սակայն շատ ավելի հաճախ այս կարգի հարգելի ուշացումներ են լինում, իսկ դա միանգամայն տանելի է:

Ինչևէ, դառնանք մեր թեմային Երևան է ժամանել որևէ բարձրաստիճան պաշտոնյա կամ պատվիրակություն, և խմբագիրը ձեզ հանձնարարել է լուսաբանել այդ իրադարձությունը:

...Հյուրերը ժամանել են, դիմավորումը տեղի է ունեցել, բանակցություններն սկսվել և ընթանում են, ասենք, ՀՀ կառավարության ընդունելությունների տանը: Դուք լրագրող եք, նույնպես գտնվում եք այդ տանը: Կարո՞ղ եք հույս ունենալ, որ ձեզ կհաջողվի տեսնել բանակցությունների բուն ընթացքը: Ոչ, այդպիսի հույս չունենաք: Բարձր մակարդակի բանակցությունները սովորաբար փակ դռների ետևում են ընթանում: Եթե դուք հեռուստալրագրող եք, չի բացառվում, որ բանակցություններն սկսելու առաջին մի քանի րոպեն նկարահանելու իրավունք ստանաք: Այնուհետև ձեզ քաղաքավարի կհրավիրեն դրսում սպասել, մինչև... որևէ համատեղ փաստաթղթի հանդիսավոր ստորագրում: Ստորագրողները ձեզ վրա նույնիսկ ուշադրություն չեն դարձնի, դուք նրանց համար «չկաք», նրանք ձեզ «չեն տեսնում»: Իրար ձեռք են սեղմում, ստորագրված փաստաթղթերն են միմյանց փոխանցում, շամպայնի բաժակներն են իրար խփում ..Մի՛ կարծեք, թե ձեզ էլ կհյուրասիրեն: Դուք, կրկնում եմ, նրանց համար «ներկա չեք», ձեր աշխատանքն եք անում և ուրիշ ոչինչ: Ձեր բախտն ուղղակի կբերի, եթե տեղն ու տեղը պատվիրակության ղեկավարները

հանդես գան մամուլի համատեղ ասուլիսով կամ գոնե ճեպազրույցով Այդ դեպքում դուք կիմանաք, թե ինչ փաստաթուղթ է ստորագրվել, ինչ պայմաններով և այլն, և այլն Եվ, իհարկե, անմիջապես կվազեք խմբագրություն վաղվա համարի ձեր ընթերցողներին տեղեկացնելու· Ձեզանից ավելին չի էլ պահանջվում

Սակայն դուք պետք է հստակ իմանաք ի՞նչն էր ամենից ավելի կարևորը արտասահմանյան պատվիրակության այցի շրջանակներում, ի՞նչն է, որ ամենից ավելի է հուզում ձեր ընթերցողներին Ահա այդպիսի մի օրինակ իմ պրակտիկայից·

Տարիներ առաջ Երևանում անց էր կացվում ԱՊՀ Կոլեկտիվ անվտանգության անդամ-երկրների սահմանապահ ծառայությունների ղեկավարների խորհրդի 31-րդ նիստը· Այն նախագահում էր Ռուսաստանի Դաշնային սահմանապահ ծառայության այն ժամանակվա տնօրեն, գեներալ-գնդապետ Կոնստանտին Տոցկին: Նիստը տեղի էր ունենում ՀՀ կառավարության ընդունելությունների արդեն նշածս տանը, մեծ օրակարգ ուներ, որը հիմնականում ռազմական հսմագործակցության տեխնիկական կողմին էր վերաբերում: Նիստն ավարտվեց բազմակողմ համաձայնագրի հանդիսավոր ստորագրմամբ, շամպայնի բաժակների զրնգոցներով ու մասնակիցների համատեղ ասուլիսով:

Ձուտ նեղ-մասնագիտական, տվյալ դեպքում ռազմական բնույթի համաձայնագիրը, նույնիսկ եթե լրիվ հրապարակվեր, ինչն, անշուշտ, անհնար է պատկերացնել, հասկանալի չէր լինի իմ ընթերցողների մեծ մասին: Ուստի թերթին տվեցի համառոտ մի տեղեկատվություն, ըստ իս բոլորին հետաքրքրող 2 հարցի մասին.

ա) բառացի մեջբերեցի Ադրբեջանի ներկայացուցչի հայտարարությունը, որը ոչ մի կապ չուներ օրակարգի հետ, «Հայաստանի կողմից ադրբեջանական գրավյալ հողերի» մասին անիմաստ և անտեղի հիշատակում էր, որը չէր կարող իր անպատեհության պատճառով ծիծաղ չհարուցել,

բ) վկայակոչեցի «որքա՞ն կմնան ռուս սահմանապահները հայ-թուրքական սահմանում» իմ իսկ հարցին Կոնստանտին

Տոցկու տված կարճ ու կտրուկ պատասխանը «Ռուս սահմանապահները Հայաստանում կմնան այնքան, որքան մեր պետությունները անհրաժեշտ կհամարեն»:

Տոցկու այս պատասխանն էլ իմ հրապարակման վերնագիրն էր: Նկատի առնելով այդ օրերին շրջանառվող խոսակցություններն այն մասին, թե «Արևմուտքը ձգտում է Անդրկովկասից դուրս մղել ռուսներին», ինչը բավական հուզել էր հայ հասարակական միտքը, ռուս բարձրաստիճան գեներալի շուրթերից հնչած նման խոսքերը խիստ կարևոր իմաստ ունեին մեզ համար: Մինչև հիմա էլ չգիտեմ գեներալ Տոցկին տեղյա՞կ էր մեր մամուլում տուրևառվող այդ կարգի խոսակցություններին, թե՞ ոչ, սակայն նրա կտրուկ պատասխանը քիչ դեր չխաղաց անհարկի խռովված հոգիները խաղաղեցնելու գործում...

«Դիվանագիտական հմտությունները» լրագրողին անհրաժեշտ են ոչ միայն օտար, այլև սեփական երկրի բարձրաստիճան պաշտոնատարների հետ շփումների ժամանակ: Ասենք, ՀՀ նախագահը մեկնում է որևէ շրջան ինչ-որ կառույցի բացման հանդիսությանը մասնակցելու: Դուք նրան ուղեկցում եք լրագրողների խմբին հատկացված ավտոբուսով, եզրափակում եք շարասյունը: Հիշեք, դուք նախագահի շքախմբի անդամը չեք, դուք աշխատանքի մեջ եք, պարտավոր եք արարողության մասին տեղեկատվություն ներկայացնել ձեր ընթերցողին, ուրիշ ոչինչ: Որևէ կարծիք հայտնել, առաջարկություն անել, մոտենալ նախագահին կամ պաշտոնական այլ անձի և որևէ «խորհուրդ տալ»՝ իրավունք չունեք: Ձեր լավ կամ վատ տպավորությունը պահեք ձեր ընթերցողների համար: Եղեք դիտորդ, լսող, մտապահող ու արձանագրող: Մի՛ մոռացեք ավելի վաղ տվածս խորհուրդներից մեկը ուշադրություն դարձրեք հիմնականին, գլխավորին և ոչ թե մանրուքին: Եթե որևէ քաղաքացի, օգտվելով առիթից, նախագահին գրավոր դիմում է հանձնում, ապա դա ձեր ապագա հրապարակման նյութ դարձնել չարժե: Իսկ եթե նախագահն ինքը մոտենում է հավաքված շարքային քաղաքացիների խմբին, մտերմիկ զրույցի է բռնվում, ընդսմին արծարծում է լայն հետաքրքրություն ներկայացնող հարցեր,

պատասխանում է սուր հարցադրումների, ապա, անկասկած, դա տվյալ միջոցառման շրջանակներից դուրս եկող, սակայն ուշադրության արժանի բան է· Բայց այ, եթե տվյալ հանդիսությունից հետո սեղան է գցվել և մանավանդ ձեզ էլ չեն հրավիրել (կամ թեկուզև հրավիրել են) այդ սեղանից օգտվելու, ապա անիմաստ է ձեր հրապարակման մեջ դա հիշատակելը: Ի վերջո, գլխավորը տվյալ օբյեկտը շահագործման հանձնելու հանդիսությունն է, ոչ թե սեղանի ճոխությունը կամ դրանից անձամբ ձեր... օգտվել-չօգտվելը:

Ընդհանրապես, գլխավորը երկրորդականից զատելու ունակությունը լրագրողի, մանավանդ քաղաքական լրագրողի (էլ չեմ ասում միջազգայնագետի) համար բացառիկ կարևոր է: Ինձ վիճակվել է բազմաթիվ պաշտոնատարների հետ այլևայլ շփումներ ունենալ: Մանավանդ հարցազրույցների առիթներով: Միշտ լրջորեն նախապատրաստվել եմ, ծանրութեթև արել իմ հարցերը, մի քանի անգամ գրել ու խմբագրել դրանք, որպեսզի չմոռանամ ամենակարևոր բաները: Մի անգամ, երբ արդեն «Ազգ» օրաթերթում չէի աշխատում, զանգահարեց իմ նախկին խմբագիր և լավագույն բարեկամ Հակոբ Ավետիքյանը.

-Մեր թերթի համար Այսինչ պաշտոնյայից (տվեց խիստ ազդեցիկ մի անուն) հարցազրույց եմ խնդրել, քո անունը տվեց, թե «Հովհաննիսյանը կգա հարցազրույց կտամ, ուրիշի չեմ ընդունի...»: Որպես մեր նախկին աշխատակից, խնդրում եմ հանձն առ...

Հակոբ Ավետիքյանին մերժել չէի կարող: Նշանակված ժամին տվյալ ազդեցիկ գործչի առանձնասենյակում էի: Բարևեց, ժպտաց.

-Չկարծես, թե հեռուստացույց չեմ նայում, գիտեմ, որ «Արմենիա» հեռուստաընկերություն ես տեղափոխվել, բայց ուզեցի, որ մի լուրջ մարդ գա:

-«Ազգում» լուրջ մարդիկ էլի կան, պարոն Այսինչյան,- գործընկերներիս հեղինակությանը տեր կանգնեցի ես:

-Միգուցե կան, չգիտեմ, բայց քեզնից հետո այնտեղ շատ երիտասարդներ են հավաքվել, վստահություն չեն ներշնչում...

-Երիտասարդությունն արատ չէ, նրանց մեջ էլ տաղանդավորները կան...

-Հակառակի պես ինձ չեն հանդիպում: Մի այդպիսի «տաղանդավոր» լրագրողուհի, ոչ «Ազգից», ուրիշ թերթից (տվեց անունը) երեք-չորս ամիս կպել էր մեր մամուլի քարտուղարին պոկ չէր գալիս, խնդրում էր ինձ հետ հարցազրույց «հաջողեցնել». Այնքան հոգի հանեց, համաձայնեցի: Ներս մտավ, բարևեց, ներկայացավ, դեմ տվեց ձայնագրիչն ու առաջին հարցը, որ տվեց, գիտե՞ք որն էր. «Ձեր կինն իր ներքնազգեստները ո՞ր խանութից է գնում...»: Առանձնասենյակից անմիջապես դուրս հրավիրեցի, ասացի աղջիկ ջան, ես պետական լուրջ գործեր ունեմ, քեզ հետ իմ կնոջ ներքնազգեստների հարցը քննարկելու ժամանակ չունեմ, մանավանդ երբևէ չեմ հետաքրքրվել, թե նա դրանք որտեղից է գնում...

Ինձ համար ցավալի էր բարձրաստիճան պետական պաշտոնյայի շուրթերից այս պատմությունը լսելը: Մանավանդ այն թերթը, որի մասին խոսք էր գնում, բավական լուրջ համբավ ունի մեզանում, այդ աղջկա անունն էլ քիչ չի աչքովս ընկել նրա էջերում: Օժտված է երևում, գրելու շնորհք, անկասկած, ունի: Եվ ափսոսում եմ, որ չի ունեցել մի ավագ ընկեր կամ լրագրության ուսուցիչ, որ սովորեցներ...քաղաքական կամ պետական այրերի հետ հարցազրույց վարելու տարրական կանոնները: Այսինքն այն, ինչ հիմա փորձում եմ անել ես ձեզ համար, իմ երիտասարդ բարեկամներ, մի անգամ ևս զգուշացնելով, որ սովորեք գլխավորը երկրորդականից զատել ..

Ի միջի այլոց, ես ամենևին չեմ բացառում նաև կնոջ ներքնազգեստներին վերաբերող հարցերի հնարավորությունը: Դա էլ հարց է, դա էլ կարող է իր ընթերցողն ունենալ: Բայց չգրված մի կանոնով այդ կարգի հարցերը արծարծվում են ոչ թե հասարակական-քաղաքական, այլ «դեղին» մամուլի էջերում: Եթե ազդեցիկ պետական պաշտոնյան իմանար, որ դուք ներկայացնում եք այսպես կոչված ոչ թե «լուրջ», այլ հենց «դեղին» մամուլը, ձեր հարցից չէր զարմանա և չէր զայրանա: Միգուցե պարզապես մերժեր ձեր թերթին հարցազրույց տալ,

իսկ եթե արդեն համաձայնել էր, պիտի համակերպվեր նաև այդ կարգի հարցերի հետ Սակայն ներկայանալ համբավավոր հասարակական-քաղաքական թերթի անունից և հարցազրույցն սկսել. կնոջ ներքնազգեստներից, համաձայնեք, առնվազն անլրջություն է:

Նման կարգի մի տհաճ օրինակ էլ պիտի բերեմ Թերթերից մեկում ժամանակին աչքովս ընկավ այսպիսի մի թղթակցություն. «Երեկ Հրազդանի շուկայում, գրում էր բավական հայտնի մի լրագրող, երկու կին զրուցելով գնում էին իմ առջևից: Մեկն ասաց, թե Մեծ Բրիտանիայի համայնքների պալատի փոխխոսնակ, բարոնուհի Քերոլայն Քոքսը...Զորի Բալայանի սիրուհին է...»:

**Փողոցային բամբասանքի** այս կարգի **տիրաժավորումը** առնվազն նողկալի էր: «Ազգում» մի ռեպլիկ տվեցի, ուր հանդիմանում էի այդ ձախորդ հրապարակման հեղինակին տգետ կանանց զազրախոսությունը հանրության սեփականությունը դարձնելու համար: Ինչո՞ւ վիրավորել մի ազնիվ ու ազնվական կնոջ, հայ ժողովրդի և մանավանդ հերոսական Արցախի անշահախնդիր բարեկամին, որը միայն պատերազմի տարիներին 30-ից ավելի անգամներ եղել էր Ստեփանակերտում, բերել ամեն տեսակի մարդասիրական օգնության բեռներ, իր երկրի խորհրդարանի ամբիոնից միշտ պաշտպանել արցախահայության արդար դատը: Ինչու՞ նրա հետ անվանարկել նաև համբավավոր գրողին ու հրապարակախոսին, մեր ժողովրդի ազնվագույն զավակներից մեկին: Ինչու՞ չխնայել նրանց արժանապատվությունը, ցեխ շպրտել մարդկանց բարի անուններին: Դա լրագրությո՞ն է, թե՞...զազրախոսություն:

Այս հարցերն էի առաջադրել հեղինակին և սրա վրա եմ հրավիրում նաև ձեր ուշադրությունը: *Հիշեք, բամբասանքն ու զազրախոսությունը կեղտոտում են ոչ միայն և ոչ այնքան նրան, ում հասցեագրված են: Դրանք առաջին հերթին կեղտոտում են այն բամբառակ բերանը, որից... դուրս են գալիս:* Եվ հարցը միայն սեփական բերանը կեղտոտելը չէ: Դա կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության, էլ բարոյականի մասին չխոսելով: Մի քանի տարի առաջ «Հայկական ժամանակի»

այժմյան խմբագիր Նիկոլ Փաշինյանը կանգնեց դատարանի առաջ, քանի որ զուտ նման կարգի բամբասանքների վրա հիմնվելով թերթում գրել էր, թե Հայաստանում լայնորեն հայտնի քաղաքական գործիչներից մեկի կինը (ինքն այդ գործչի անունը նշել էր, ես ինձ թույլ չեմ տալիս այստեղ նրան նույնիսկ կրկնել) արտասահման մեկնելիս փորձել է... վարտիքի մեջ թաքցված ադամանդներ «անցկացնել»: Դատարանում Նիկոլին հարցրել էին՝ կարո՞ղ է ապացուցել գրածը: «Ինձ ՀՀ մաքսային ծառայության նախկին պետ Երջանիկ Աբգարյանն է ասել», պատասխանել էր երիտասարդ լրագրողը: Իսկ դատարան կանչված Երջանիկ Աբգարյանը իր հերթին հայտարարել էր, թե այդ մասին լսել է իր երբեմնի ենթականերից մեկից, որի անունն արդեն չի հիշում: Մաքսանենգ ճանապարհով, այն էլ «վարտիքի մեջ» ադամանդներ «անցկացնելու» այս պատմությունը փաստաթղթային հիմնավորում չուներ, ակտավորված չէր, քրեական գործ չէր հարուցվել, գոնե նյութեր չէին նախապատրաստվել, որոնց հիման վրա քրեական գործի հարուցումը մերժված լիներ: Մի խոսքով զտարյուն բամբասանք: Այս բամբասանքը միգուցե իրական հիմք ուներ, միգուցե ոչ: Եթե Երջանիկ Աբգարյանը լրագրողի հետ զրույցում այդպիսի բան ասել էլ էր, ապա, հասկանալի է, դա արել էր ոչ իբրև մամուլում հրապարակելու նյութ: Իր հերթին զազրախոսել էր և ուրիշ ոչինչ: Իսկ Նիկոլ Փաշինյանը, ավա՜ղ, այդ զազրախոսությունը դարձրել էր թերթի հազարավոր ընթերցողների սեփականությունը: Դատարանը Նիկոլին դատապարտեց 1 տարվա ազատազրկման: Նիկոլը բողոքարկեց վերադաս դատարանին, մինչ այդ լրագրողների մեր եղբայրությունը աղմուկ բարձրացրեց ի պաշտպանություն Նիկոլ Փաշինյանի: Ես էլ «Ազգում» անդրադարձա այս խնդրին, վերադաս դատարանին խնդրելով Նիկոլի համար սահմանել ազատազրկման հետ չկապված պատիժ, գտնելով, որ պայմանական ազատազրկումն էլ նրա համար լավ դաս կլինի: Դատարանն այդպես էլ վարվեց՝ 1 տարվա բանտարկությունը փոխելով պայմանականի: Բայց դա իրոք դաս եղա՞վ Նիկոլի համար՝ դժվարանում եմ ասել, որովհետև այսօր էլ նրա պրակտիկայում այս կարգի սկան-

դալները հազվադեպ չեն Թող դրանք շրջանցեն գոնե ձեզ, իմ երիտասարդ բարեկամներ, Աստված ձեզ հեռու պահի առանց բավարար հիմքերի մարդկանց բարի անունն արատավորելու գայթակղությունից· Իսկ եթե դուք միջազգայնագետ կամ քաղաքական լրագրող դառնաք և ձեր հրապարակումների հերոսները լինեն քաղաքական ու պետական այրեր, ապա միշտ հիշեք, որ պարտավոր եք առավել քան զգույշ լինել, որովհետև այս պարագայում դուք, ուղղակի կամ անուղղակի, անվանարկում եք ոչ միայն մարդկանց, այլև քաղաքական ու պետական ինստիտուտներ:

Նկատի ունեցեք, ես ամենևին չեմ քարոզում, թե իմանալով որևէ վարկաբեկիչ մանրամասն ձեր կամ որևէ այլ երկրի քաղաքական ու պետական այրերի մասին, դուք պետք է դա... թաքցնեք հանրությունից, որպեսզի, իբր, չվարկաբեկեք այն պետական ու քաղաքական ինստիտուտը, որը ներկայացնում է տվյալ պարոնը կամ տիկինը: Հակառակը, հանրության սեփականությունը դարձնելով անարժան պաշտոնյայի կամ գործչի քաղաքական դիմանկարի անվայելուչ մանրամասները, դուք ծառայություն եք մատուցում հասարակությանը նրան օգնելով ճիշտ կողմնորոշվելու տվյալ անձի նկատմամբ իր վերաբերմունքի մեջ, նպաստում եք պատրանքների ցրմանը: Ասենք, խանգարում եք, որ այդ կարգի անարժանը մնա իր պաշտոնում կամ գրավի ավելի բարձր պաշտոն: Սակայն ձեր տեղեկությունը պետք է անվերապահորեն հավաստի և ապացուցելի լինի: Նախ, որպեսզի ձեր խիղճը չտանջի գործած սխալի համար, եթե հանկարծ պարզվի, որ կամա-ակամա անվանարկել եք անմեղ մարդու և երկրորդ որպեսզի Նիկոլ Փաշինյանի նման դատի առաջ չկանգնեք...

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ԼՐԱԳՐՈՂԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ

Անցնում եմ այս գրքի ամենահեշտ և ամենադժվար մասին լրագրողի կայացմանը. Ամենահեշտ, որովհետև բավական է հայացք նետել իմ սեփական լրագրողական անցյալին (իսկ ես, առանց ավելորդ համեստության, միանգամայն կայացած լրագրող եմ), որպեսզի իմանամ ինչի վրա հրավիրել ձեր ուշադրությունը: Ամենադժվար, որովհետև ամեն մարդ, ամեն մասնագետ, անվերապահորեն, անցնում է կայացման իր սեփական ճանապարհը, և այն ամենն, ինչ օգտակար է եղել մեկին, ամենևին էլ պարտադիր չէ, որ օգտակար լինի մյուսին:

Այնուամենայնիվ, մտովի քայլիր իմ հետքերով, երիտասարդ բարեկամ, և եթե օգտակար բաներ կգտնես, վերցրու, քանզի որքան շատ վերցնես, այնքան... կերջանկացնես ինձ: Տալու մեջ է իսկական երջանկությունը և ոչ վերցնելու: Ինչքան շատ ես տալիս, այնքան...շատ ես հարստանում: Եվ ցավալի է անչափ, որ այս գիտակցությանը հասու ես դառնում միայն այն ժամանակ, երբ տասնամյակների ծանրությունից ուսերդ սկսում են հակվել ներքև...

...Չորս տասնամյակ առաջ աշխատում էի «Դիլիջան» քաղաքային թերթում: Բոլորովին երիտասարդ գրական աշխատող էի, իմ սեփական գրելաոճը դեռ չունեցող, այլոց ոճերին հետևող և նույնիսկ բավական հաջողությամբ...նմանակող: Ենթագիտակցական մակարդակում ընթացող պրոցեսների գերին էր իմ գրիչը, և ցավն այն է, որ չէի էլ նկատում, թե ինչքա~ն ծիծաղելի էր, ասենք, Հրանտ Մաթևոսյանի գրողական մանվածապատ գրելաոճը շրջանային թերթի էջեր «ներմուծելու» իմ ջանքը:

Թերթը, իր խիստ սահմանափակ սյունակներով, պարզապես հանդուրժել չի կարող գեղարվեստական արձակի երկար-բարակ նկարագրությունները կամ հերոսների «ներքին

խոսքը», ինչը մաթևոսյանական արծակի բնորոշ կողմն է Կրկնել այդ ոճը թերթում, նույնն է, թե փորձել օվկիանոսային հսկա ձուկը խցկել...սենյակային փոքրիկ ակվարիումի մեջ Դրանով էլ զբաղվում էի ամբողջ մի տարի, ամեն մի հասարակ թղթակցության, սովորական, անգամ կենցաղային իրադարձության առթիվ գրածս ռեպորտաժների կամ արտադրության առաջավորների դիմանկարների մեջ (այն ժամանակներում ակնարկի այդպիսի հատուկ տեսակ կար) ձգտելով օգտագործել...հերոսների (կամ իմ) «ներքին խոսքը»: Մի օր խմբագիրս, լուսահոգի Մուսայել Մկրտումյանը, չհամբերեց.

-Տղա ջան, ես քեզ հարցնում եմ ու՞ր է ականջդ, դու աջ ձեռքդ տանում, գլխիդ վրայով ձախ ականջդ բռնում ես, թե հրե~ե~ե~ս: Չե՞ս կարող աջ ձեռքով ա՛ջ ականջդ բռնել, ձախով ձախը, որ հենց հարցնեմ արագ պատասխանես հրե՛ս ականջս...

Եթե գալիս ես իմ հետքերով, երիտասարդ բարեկամ, ապա հիշիր իմ տաղանդավոր ուսուցչի՝ Մուսայել Մկրտումյանի առաջին պատգամը մտքի հստակություն և ասելիքի հակիրճություն:

Լրագրության ցանկացած ժանրում, սկսած լրատվությունից, վերջացրած ծավալուն վերլուծականներով (որոնց դուք դեռ շուտ չեք հասնի), դուք պարտավոր եք որքան հնարավոր է արագ, պարզ և սպառիչ պատասխաններ տալ մի քանի կարևոր հարցերի. **ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս:** Ընթերցողը պարտավոր չէ ամբողջական «լավաշներ» կարդալ, իմանալու համար, թե արտգործնախարար Վարդան Օսկանյանը երեկ իր նստավայրում երեկոյան ժամը վեցին ում էր ընդունել և ինչի մասին էր խոսում: Անմիջապես սկսեք հենց դրանից, օրինակ, այսպես. «Երեկ, երեկոյան ժամը վեցին, արտգործնախարար Վարդան Օսկանյանը իր նստավայրում ընդունեց ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության արտակարգ ու լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովին, վերջինիս խնդրանքով: Ինչպես մեզ տեղեկացրեց ԱԳՆ մամլո խոսնակ Համլետ Գասպարյանը, զրույցի ընթացքում քննարկվել են ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Երևան կատարելիք պաշտոնական այցի նախա-

պատրաստության հետ կապված հարցեր». Սրանից հետո ինչքան ուզում եք երկար-բարակ դատողություններ արեք, թե Պուտինի այցի նախապատրաստում ասելով ինչը կարելի է նկատի առնել անվտանգության ապահովու՞մը, երկու պետությունների նախագահների ստորագրելիք փաստաթղթերի մեջ մի վերջին շտկում անե՞լը, պաշտոնական այցի շրջանակներում այս կամ այն մշակութային օջախ այցելելու, թե՞ այլ հարցերի համաձայնեցումը: Կարող եք նաև խելքներիդ զոռ տալ ու ամբողջական «լավաշներ» գրել, թե ինչու, օրինակ, Պուտինը հենց այս պահին է գալիս և ոչ՝ այն, ինչու նախապես եղավ... Բաքվում, կամ ինչու է ի՛նքը գալիս, մի՞թե չէր կարող... Քոչարյանին հրավիրել Մոսկվա և այլն, և այլն: Համոզված եմ, ծեր՝ այդ «լավաշը» ընթերցողների մեծամասնությանը պետք չէ, նա ուղղակի ժամանակ չի վատնի դա կարդալու: Հետևաբար, լավ է, որ ամենագլխավորն ամենասկզբից է ասվել: Այդ մի քանի տողը, զուտ իբրև լրատվություն, ընթերցողը կկարդա: Մի՛ մոռացեք, թերթերը հիմա շատ են, ընթերցողների զգալի մասը շատ ավելի բարձր մակարդակի է, քան իմ հեռու երիտասարդության տարիներին էր:

Սրանից չորս տասնամյակ առաջ, ուղղակի խաղալով ընթերցողի համբերության հետ, բոլոր այս կարգի դատողությունները բերվում էին...առաջ, և միայն ամենավերջում էին տրվում ամենակարևոր հարցերի պատասխանները ո՞վ (ի՞նչ), որտե՞ղ, ե՞րբ, ինչու՞, ինչպե՞ս... Հիշողությանս մեջ մնացել է հետագայում իմ լավագույն բարեկամի, իսկ այն ժամանակ դեռևս անծանոթ Վալերի Հարությունյանի «Մի աղջիկ է շրջում Դիլիջանում...» վերնագրով ակնարկը՝ «Ավանգարդ» երիտասարդական թերթի ամբողջ էջով մեկ: Սա արդեն ոչ թե մեկ, այլ...երկու «լավաշի» ծավալ էր: Ինքս դիլիջանցի՝ անհամբեր ուզում եմ իմանալ, թե այդ ինչ դիլիջանցի աղջկա մասին է խոսքը, ես ճանաչու՞մ եմ, թե՞ ոչ: Իսկ Վալերին, Աստվա՜ծ իմ, գրում ու գրում է «այդ աղջկա» ողբերգական ճակատագրի մասին ինչքա՜ն էր ամուսնուն սիրում, սկեսուրն ի՜նչ ասես չարեց, որ նրան ամուսնու աչքից գցի, ստեր հորինեց, գժտեցրեց, վերջը բաժանել տվեց, հիմա երեխան գրկին, արցունքն

աչքերին, թափառու՞մ է Դիլիջանի փողոցներում. .Սրտաճմլիկ, երկար-բարակ մի պատմություն, որի միայն ամենավերջում էիր իմանում, թե «այդ աղջիկը».. Այսինչ-Այսինչյանն է, Այսինչի կինն է եղել ու Այսինչի հարսը..

Այսպիսի ոճը այսօրվա ընթերցողը պարզապես չի հանդուրժի, ժամանակները փոխվել են. Առավել ևս քաղաքական լրագրության և մանավանդ միջազգային հարաբերությունների ոլորտում. Ուրեմն, դաս առաջին՝ **գրել հստակ, դիպուկ, անմիջապես պատասխանել ամենագլխավոր հարցերին, ընթերցողին «չտանջել».**

Դաս երկրորդ **չգրել... չիմացած բաների մասին:**

Իսկ մի՞թե կարող է այդպիսի բան լինել, կհարցնեք դուք: Կարող է, այն էլ ինչքա՞ն, կպատասխանեմ ես: Կա վայ-լրագրողների մի ամբողջ շերտ, որ ականջը սրած այստեղից-այնտեղից բամբասանք է թռցնում, դրա վրա կառուցում մի ամբողջ...«քաղաքական կոնցեպցիա» և հրամցնում իր ընթերցողին: Ահա ամենաբնորոշ մի օրինակ. 2004 թվականի փետրվարի 5-ին Երևան ժամանեց Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում ստեղծված «Ագոյի խմբի» ղեկավար Պիետրո Էրկոլե Ագոն: Խումբը հենց նրա ազգանունով էլ կոչվում էր և ստեղծվել էր Եվրախորհրդի առաջ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման մոնիտորինգ (վերահսկողություն) իրականացնելու համար:

Ագոյի գալուց մեկ օր առաջ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ծմեռային կարճատև արձակուրդ էր վերցրել և մեկնել Ծաղկաձոր, ուր այդ օրերին անց էին կացվում «Բազեծմեռ» համահայկական երիտասարդական խաղերը: Երիտասարդների հանդեպ Քոչարյանի սերը և սպորտի նկատմամբ նրա թուլությունը հանրահայտ են: Մարդը գնացել էր մի երկու օր «բազեականների» հետ անցկացնելու և իրոք էլ հանդիպեց նրանց: Սակայն տեղեկանալով Քոչարյանի Ծաղկաձոր մեկնելու և Ագոյի գալու մասին, «Հայկական ժամանակը» շտապեց անմիջապես թխել այսպիսի մի «խորիմաստ մեկնաբանություն» Քոչարյանն արձակուրդ է վերցրել, որպեսզի.. Ագոյին չհան-

դիպի Որովհետև, իբր, իրենց աղբյուրները տեղեկացրել են, թե նախագահի և Ագոյի հանդիպումը նախատեսված չէ:

Ուղիղ մեկ օր անց Ագոն ինքը հայտնվեց... Ծաղկաձորում, ուր բավական ջերմ հանդիպում ունեցավ Քոչարյանի հետ Բոլոր հեռուստաէկրաններին նրանց հանդիպումն էր, ժպտացող դեմքերը, այնպես որ անկարելի էր հերքել, թե Ագո-Քոչարյան հանդիպումը կայացել է: Ի հավելումն, Ծաղկաձորում մի քանի ժամ Քոչարյանի հետ անցկացնելուց հետո Երևան վերադարձած դեսպանը մեր արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ համատեղ ասուլիս տվեց, ուր գոհունակություն էր հայտնում նախագահի հետ կայացած հանդիպման արդյունքներից և...Ծաղկաձորի չքնաղ բնությունից: Այս ասուլիսում Ագոն պնդեց, որ Քոչարյանի հետ հանդիպումը նախապես ծրագրավորված էր, սակայն որ դա Ծաղկաձորում կկայանա, ինքն, իհարկե, չգիտեր:

Ի՞նչ մնաց «Հայկական ժամանակի» ծախորդ «մեկնաբանությունից»: Երկու, մեղմ ասած, սուտ Ագո-Քոչարյան հանդիպումը նախատեսված էր, հետևաբար Քոչարյանը ամենևին էլ դիտավորյալ չէր ծմեռային կարճատև հանգստի մեկնել Ծաղկաձոր, որպեսզի «Ագոյից թաքնվի»:

Ինչպե՞ս պիտի վարվեր իրեն հարգող թերթը իր այս «կանխատեսումների» խայտառակ ծախողման դեմ-հանդիման: Առնվազն պիտի խոստովաներ սխալը, մեղքը բարդելով իր աղբյուրի ոչ հավաստի տեղեկությունների վրա և ներողություն պիտի խնդրեր ընթերցողներից՝ նրանց թյուրիմացության մեջ գցելու համար: Առավել ազնիվ լինելու դեպքում կարելի էր նաև ներողություն խնդրել նախագահից, նրան ակամա վիրավորելու և «Ագոյից փախչողի» պիտակ կպցնելու համար:

Այդպե՞ս վարվեց թերթը: Ավա՜ղ, ոչ: Ստախոսության մեջ լիովին մերկացված, հաջորդ օրը շարունակեց իմաստակությունը, թե Քոչարյանն, այո՛, թաքնվել էր Ագոյից, բայց իտալացի դիվանագետն ավելի համառ գտնվեց և ստիպեց, որ իրեն տանեն...սարերում «թաքնված» Քոչարյանի մոտ:

Այն, որ Ագոն շեշտում էր, թե իրենց հանդիպումը վաղօրոք էր ծրագրավորված, հետևաբար Քոչարյանը «Ագոյից

թաքնվելու» որևէ պատճառ չուներ «Հայկական ժամանակը» շրջանցել էր, չնկատելով, որ դրանով իսկ ստախոսության մեջ մեղադրում է իր երիցս սիրելի Ագոյին. էլ չխոսելով ընթերցողներին հիմարի տեղ դնելու մասին, որովհետև միայն հիմարը կհավատա, թե որևէ դեսպան, ինչքան էլ համառի և ինչպիսի միջազգային կազմակերպություն էլ ներկայացնի, կարող է հյուրընկալ երկրի արտգործնախարարին ստիպել, որ իրեն տանեն. «սարերում իրենից թաքնվող...նախագահի մոտ»: Եթե հանդիպումը նախապես ծրագրավորված չլիներ, դեսպանն այդպիսի հանդիպման պահանջ չէր դնի, դա էթիկայի կանոնների կոպիտ խախտում կլիներ նրա կողմից: Նախագահը կարիք չուներ «սարերում թաքնվելու» նաև այլ պատճառով: Եթե Ագոյի հետ հանդիպումը նախապես ծրագրավորված չէր, ինչպես հավաստում էր «Հայկական ժամանակը», և եթե մի պահ պատկերացնենք, որ եվրոպացի դիվանագետը այնքա՜ն բռի ու անտաշ էր եղել, որ հակառակ դրան «համառ գտնվելով» հանդիպում էր պահանջել նախագահի հետ, ապա անկախ նրանից նախագահը որտեղ էր Ծաղկաձորու՞մ, թե՞ Երևանում, Ագոյին շատ քաղաքավարի կպատասխանեին, որ «նախագահն զբաղված է պետական կարևորության այլ գործերով և իրեն ընդունել չի կարող»:

«Հայկական ժամանակի» այս ծախորդ «մեկնաբանությունը» միջազգային իրավունքի նորմերի և պրակտիկայի մասին տարրական գիտելիքներ չունենալու «փայլուն» դրսևորում է: Գրել են...չիմացած բանի մասին: Եվ առավել ցավալի է, որ գրել են չունենալով ազգային արժանապատվության տարրական զգացողություն. վերջին հաշվով, իրենից ի՞նչ է ներկայացնում եվրոպական ցանկացած երկրի կամ կազմակերպության դեսպան որևէ երկրի, այդ թվում նաև մեր երկրի նախագահի համեմատությամբ. Ինչքան ուզում է չսիրես կամ նույնիսկ մոլեգնորեն ատես քո երկրի նախագահին: Քո երկիրը, քո երկրի արժանապատվությունն էլ հո չե՞ս ատում: Այդ դեպքում միայն կատարյալ տգիտությամբ կարելի է բացատրել, որ թերթը չէր նկատում շատ էական մի «մանրուք»՝ աստիճանակարգի ահռելի տարբերությունը ցանկացած, նույնիսկ

ամենահզոր երկրի դեսպանի և այլ երկրի նախագահի միջև: Չէ՞ որ ես ձեզ այս գրքում արդեն ասել եմ պետությունները հավասար են իրենց արժանապատվությամբ: Այսինքն, հավասար հարթության վրա կարող են դիտվել միայն և միմիայն հավասար պաշտոն զբաղեցնողները: Ավելի կոպիտ ասած դեսպանն ո՞վ է, որ պայմաններ թելադրի, պահանջներ ներկայացնի ընդունող երկրում: Եվ դեռ չեկած այնպիսի «ահուսարսափի մեջ գցի» այդ երկրի... նախագահին, որ սա, բա չե՞ք ասի, այդ «զարհուրելի դեսպանին» չհանդիպելու համար...«փախչի սարերը»: Միջազգային իրավունքի նորմերից կատարյալ **անտեղյակությունը**, թերևս, կարելի կլիներ ներել, սակայն **ազգային արժանապատվության** այս կարգի **բացակայությունը** աններելի է անգամ...«Հայկական ժամանակի» համար:

Չե՞ս մոռացել, իմ երիտասա՛րդ բարեկամ, քիչ վերը քեզ առաջարկեցի գալ իմ ոտնահետքերով: Արի, ուրեմն, տանեմ քեզ իմ բազմափորձ պրակտիկայից մի շրջան, երբ ինձ վիճակվեց երես առ երես բախվելու մարդկային տգիտության, չիմացած բաներից գրելու ախտի ամենավտանգավոր դրսևորման հետ:

ՀՀՇ-ն դեռ նոր-նոր էր եկել իշխանության, աշխատում էի «Հայաստան» թերթում, որն այն տարիներին լույս էր տեսնում մեր ժամանակների համար ահռելի տպաքանակով՝ 275 հազար օրինակ: Երկրի քաղաքական մթնոլորտը շիկացած էր, հաղթողի ամբարտավանությամբ ՀՀՇ-ականները այպանում-ամբաստանում էին նախորդ ռեժիմի արատները, հնչում էին կոմունիստների հետ հաշվեհարդար տեսնելու կոչեր: Օդի մեջ թույն ու ատելություն կար, արյան, կացնի հոտ: Ես, որ ժամանակին նույնպես եղել եմ կոմկուսի անդամ, իմ հրապարակումներում անվերջ սթափության էի կոչում հանրությանը, զգուշացնում էի, որ մեկ կաշառակեր տականքի վրեժը չի կարելի հանել հազարավոր անմեղ կոմունիստներից, էլ չխոսելով *պրոլետարիատի դիկտատուրայի* պետության ոճրագործությունների մասին, որոնք ինքս էլ քիչ չեմ դատապարտել և որոնցից սահմանազատվում էին նաև կոմունիստներն իրենք:

Ակնհայտորեն սթափության այս կոչերը (որոնք, իհարկե,

միայն ես չէի անում) տեղ էին հասնում, հասարակությունը չէր խրախուսում կոմունիստների համատարած ջարդ սկսելու առանձին խելահեղների ձգտումները:

Այդ խելահեղների մեջ կային և կոմունիստական ռեժիմի ժամանակ տուժածներ, և կոմունիզմի գաղափարների համոզված հակառակորդներ, և՛ նոր տերերին հաճոյանալու մոլուցքով տարվածներ, և ամեն կարգի արյունածարավ բախտախնդիրներ, որոնք դեմ չէին լինի «սեփականատերերին սեփականազրկելու» մարքսյան դրույթը կրկնել... կոմունիստների նկատմամբ՝ թալանել նրանց տներն ու բնակարանները, ունեցվածքը, որովհետև արտադրամիջոցների մասնավոր սեփականություն այն ժամանակ դեռ չկար:

Պատկերացնու՞մ եք այս կարգի ընչաքաղցների ատելությունը անձամբ իմ և ինձ նմանների հանդեպ, որ խանգարում էինք այդ անասնական բնազդներին ազատություն տալու հասարակական մթնոլորտի ձևավորմանը Հայաստանում:

Այո, ես հպարտանում եմ իբրև հրապարակախոս մայր ժողովրդին մատուցած իմ այդ ծառայության՝ նրան սթափ պահելու իմ ջանքերի համար, անկախ նրանից, թե այդ ծառայությունս ինչքանով ազդեցիկ էր և որքան նպաստեց, որ Հայաստանում մեկը մյուսին խժռելու գործընթաց չսկսվի: Դատելով այն հեռախոսազանգերից, որով անհայտ ահաբեկիչները սպառնում էին «վառել» ինձ էլ, «Հայաստանի» խմբագրությունն էլ, իսկ նորելուկ թերթերը ուղղակի վայրահաչում էին մեր գրեթե ամեն մի նոր հրապարակման վրա, կարելի է դատել, որ այդ ազդեցությունը փոքր չէր:

Սակայն այնպիսի մոլեգին մի կատաղություն, որի մեջ ընկել էր Արթիկի շրջանի (այն ժամանակ շրջաններ կային) «Լեռնագործ» թերթի խմբագիրը (մահացել է, խնայեմ և ազգանունը չգրեմ) , այնպիսի մի ատելություն իմ համեստ անձի նկատմամբ, որ նա դրել էր իր թերթի հրապարակումներում համարից համար, ամսեամիս, ինձ երբևէ չէր վիճակվել կարդալ: Այս պարոնը սովորություն էր դարձրել իր շրջանային թերթում «բանավիճել»...հանրապետական թերթի թղթակցիս հետ: Ինքն իմ հրապարակումները կարդում էր, ես իրենը՝ ոչ, որովհետև

«Լեռնագործը» միայն Արթիկում էր տարածվում, իսկ «Հայաստանը», վերն ասացի, ամբողջ հանրապետությունում Օրերից մի օր Արթիկից մեր խմբագրություն եկավ ծանոթ մեկը և տվեց «Լեռնագործի» վերջին ամիսների 10-12 համարները Ի նչ ասես, որ չէր գրել պարոն խմբագիրը իմ մասին· Ամենաանմեղ խոսքը. .«ագռավի կռկռոցն» էր, որի հետ համեմատում էր իմ ձայնը սույն պարոնը, ծաղրելով «ազգընտիր իշխանություններին» և հասարակությանն ուղղված սթափության կոչերս: Լուտանք, հայհոյանք, կացնի կոչ, արյան ծարավ. . Հակակոմունիզմ էր խաղում, այն դեպքում, երբ մեծացել էր կուսշրջկոմի...պրոպագանդայի բաժնի վարիչի ընտանիքում և ինքն էլ եղել էր կոմունիստ, «Խորհրդային Հայաստան» թերթի մեկ-երկու տարի առաջվա.. սեփական թղթակիցը:

Բայց ամենաահավորն այն է, որ մոլեգին մի ատելություն կար հատկապես Ռուսաստանի ու ռուսերենի, ռուսական դպրոցները հախուռն կերպով փակելու այն օրերին պետականորեն իրականացվող քաղաքականության դեմ իմ արտահայտած տեսակետների հանդեպ: Որքան ես պաշտպանում էի Հայաստանի դարավոր ռուսական կողմնորոշումը, որքան ընդգծում էի ռուսաց լեզվի ու ռուսական մշակույթի բացառիկ քաղաքակրթիչ դերը մեր ժողովրդի կյանքում, այնքան սույն պարոնի ատելությունը մեծանում էր: Եվ արդեն ոչ միայն իմ հանդեպ, այլև ռուսերենի, ռուս ժողովրդի և նույնիսկ նրա հանճարեղ զավակ Ալեքսանդր Պուշկինի նկատմամբ:

Վերջին դեպքում, ակնհայտորեն ադրբեջանական մամուլից տեղեկանալով, թե Պուշկինն, իբր, հայերին անվանել է «դու ստրուկ, դու վախկոտ, դու հայ», պարոն խմբագիրը... փրփրել էր. ո~նց թե, դու Պուշկինը լինես ու մեր մասին այդպես վատ արտահայտվե՞ս: Դե զարկելը հիմի դու տես: Ականջները փակել, բերանը բացել էր այս թերուսը, Պուշկինին անվանելով... ներողություն մեծ բանաստեղծի հիշատակից. . «վիժվածք»: Իսկ ինձ այդ «վիժվածքին» ծնած-սնած ժողովրդի, «ռուս արյունաթաթախ արջերի», մեզ հարյուրամ-

յակներով «ստրկության մեջ պահած» օտարների պաշտպան, ազգային շահերի դավաճան...

Հաջորդ օրն իսկ «Հայաստանում» լույս տեսավ իմ պատասխանը «Տգիտությունը փաստարկ չէ» խորագրով: Գրել էի, թե անձամբ իմ դեմ ուղղված վայրահաչություններին պատասխանելու հարկը չեմ տեսնում: Բայց չեմ կարող լռել, երբ թերուս ոչնչությունը զազրախոսում է մեծն Պուշկինի հասցեին: Եվ ի գիտություն մեր ընթերցողների շեշտել էի, թե ադրբեջանցիները պուշկինյան տողերը բերում են կոնտեքստից կտրված, հետին մտքով, իսկ մեր թերուսները կուլ են տալիս այս խայծը և կարմիր լաթ տեսած ցուլի կատաղությամբ, չիմանալով ինչն-ինչից է, հարձակվում են մեր բարեկամ ժողովրդի ու նրա հանճարեղ զավակի վրա: Իրականում պուշկինյան տողերը վերցված են նրա «Տազիդ» անավարտ պոեմից: Հերոսը, վայրի, բարբարոս ու մարդասպան չեչեն ավազակի որդի, այնուամենայնիվ քաղաքակիրթ մարդ է և չի ուզում հոր նման արյունարբու լինել: Ամեն անգամ հայրը նախատում է որդուն փափկասրտության համար: Մի անգամ էլ, երբ հայրը հարցնում է՝ ու՞մ տեսար, որդին պատասխանում է, թե ինչ-որ վաճառականի: Զինված պահակներ ունե՞ր, շարունակում է չեչեն ավազակը: Չուներ, ասում է որդին: Եվ դու չհարձակվեցի՞ր նրա վրա, չմորթեցի՞ր, չթալանեցի՞ր, զարմանում է ավազակը: Ոչ, ասում է որդին: Եվ ահա այստեղ է, որ Պուշկինի ավազակ հերոսը (ոչ Պուշկինը, այլ նրա պոեմի բացասական հերոսը) որդուն նախատում է. «Հեռու ինձնից, դու չեչեն չես, դու իմ որդին չես, դու ստրուկ ես, վախկոտ ես, հայ ես...»:

Այս է եղածը: Պուշկինի արյունարբու հերոսի համար ուրիշին չթալանելը, չմորթելը, առիթից չօգտվելը անվայել է չեչենին, դա հատուկ է...հային: Ուրեմն, հայը ավազակ չեչենի հակապատկերն է, նրա աչքում է, որ հայը վախկոտ է, ստրուկ է, և ոչ Պուշկինի: Այսինքն, դեռ այն ժամանակներում Պուշկինը գիտեր մեր ժողովրդի քաղաքակրթական ավելի բարձր մակարդակի մասին, քան, ասենք, չեչենների մակարդակն էր:

Բերելով պուշկինյան անավարտ պոեմի սյուժեի այս

շարադրանքը, հույս էի հայտնել, որ մեր ընթերցողները հիանալի կհասկանան հայերին վիրավորում է պոեմի բացասական հերոսը և ոչ թե հեղինակը: Ինչ վերաբերում է «Լեռնագործի» ձախորդ խմբագրին, մի երկու խորհուրդ էի տվել, որից մեկն էլ նոր տերերին անտեղի հաճոյանալու իր ջանքերը չափավորելն էր՝ Կծծեն հյութերդ ու դեն կնետեն, պարոն նախկին կոմունիստ ու կոմունիստի զավակ, գրել էի ես, դավաճանները բոլոր ժամանակներում և բոլորի, այդ թվում նոր տերերի մեջ նողկանքից բացի այլ զգացողություն չեն առաջացնում: Այդպես էլ եղավ կարճ ժամանակ անց իմացա, որ ՀՀՇ-ականները թերթից դուրս էին շպրտել պարոն խմբագրին, երկու տարի գործ չէին տվել, և նա, նվաստացած, արհամարհված, ամիսներով տնից դուրս չէր եկել, ինքն իր մեջ ամփոփվել-խանգարվել էր և...մահացել սրտի կաթվածից: Խղճում եմ, երիտասարդ էր և մանկահասակ երեխաներ ուներ, մանավանդ մահվանից մեկ տարի առաջ եկավ մեր խմբագրություն, ծանոթացանք, հաշտվեցինք, բայց հարցն այդ չէ, դառնանք...Պուշկինին:

Պուշկինյան անավարտ պոեմի սյուժեն ընթերցողների համար մեկնաբանելով, կասկած էի հայտնել, թե «Լեռնագործի» խմբագրի սահմանափակ ուղեղին դա հասանելի կլինի: Եվ ավարտել էի հինավուրց մի լեգենդով. ականավոր քանդակագործի մոտ է գալիս ոմն կոշկակար ու դիտողություն անում, թե նրա կերտած արձանը թերություն ունի՝ այդ դիրքով կանգնած մարդու կոշիկի կրունկը այդպես չի թեքվում, այլ կերպ է թեքվում: Համոզվելով կոշկակարի դիտողության արդարացիության մեջ, քանդակագործը նրան մեծ պարգև է տալիս: Ոգևորված անսպասելի հեշտությամբ ստացած պարգևից, կոշկակարը փորձում է խորամանկության դիմել՝ ոտքի մկանն, իբր, սխալ է քանդակված: Հասկանալով այդ, քանդակագործն ասում է՝ կրունկից վերև մի բարձրանա, քո մակարդակը կրունկի մակարդակ է...

Նույն կերպ էլ ես էի իմ խոսքն ուղղել «Լեռնագործի» խմբագրին՝ Պուշկինը քո խելքի բանը չէ, նրան հասկանալու համար դու դեռ շա՜տ տգետ ես, իսկ **տգիտությունը... փաստարկ չէ:**

Այո՛ տգիտությունը փաստարկ չէ, իմ երիտասարդ բարեկամ՝ եվ սա իմ երրորդ դասն է քեզ՝ շարունակ կարդալ, ինքնակրթվել, անվերջ կատարելագործվել. Չլինել տգետ, երբեք չմտածել, թե արդեն «ամեն ինչ գիտես», էլ ինչու՞ ջանք թափես՝ Ամենալավ իմացածդ բանն էլ ժամանակի հետ որոշ չափով մոռանում ես՝ Հիշողությունը թարմացնելը, հատկապես կրկին ու կրկին վերընթերցելը՝ լավագույն միջոցն է մոռանալու վտանգի դեմ: Աշխատասիրությունը լավ մասնագետ դառնալու նախապայմանն է բոլոր ոլորտներում: Հիշիր, նույնիսկ հանճարների հաջողության բանալին 99 տոկոսով կախված է եղել աշխատասիրությունից և միայն՝ 1 տոկոսով՝ բնական տաղանդից:

*Քաղաքական լրագրությունը, մանավանդ արտաքին քաղաքականության լուսաբանման մեջ մասնագիտանալը այժմ ավելի ու ավելի հրամայաբար են դնում զուտ որոշակի երկրների վրա կենտրոնանալու խնդիրը.* Այդպիսի **նեղ-մասնագիտացումը** շատ օգտակար է: Ասենք, «Ազգ» օրաթերթի քաղաքական մեկնաբան, թուրքագետ Հակոբ Չաքրյանը, ինքն էլ երիտասարդ տարիներին Ստամբուլից հայրենադարձված և Թուրքիայի՝ կյանքին լավ ծանոթ մարդ, ամբողջ օրը կարդում է թուրքական առաջատար թերթերը. Թուրքերենի կատարյալ իմացությունն, ինչ խոսք, այստեղ կարևոր է: Սակայն լեզվի իմացությունը կամաց-կամաց կորցնում է վաղեմի նշանակությունը: Բավական է իմանալ միայն մեկ եվրոպական լեզու և «ինտերնետ» ցանցի միջոցով կարելի է կարդալ աշխարհի ցանկացած երկրի առաջատար թերթերի թարմ համարները, որովհետև դրանք այժմ ինտերնետ են մտնում մի քանի լեզուներով: Նույն «Ազգն», օրինակ, «ինտերնետում» կարելի է կարդալ հայերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն և թուրքերեն: Ուզում եմ ասել՝ անհրաժեշտ տեղեկատվություն կուտակելու միջոցները ձեր սերնդի համար անհամեմատ ավելի մեծ են, քան իմ սերնդի: Մենք համակարգիչ չունեինք, և ես տարիներ շարունակ պահում էի հատուկ թղթապանակներ՝ ըստ երկրների, ինչպես նաև թեմաների: Դրանցում տասնամյակ-տասնամյակի ետևից՝ հսկայական քանակի նյութեր և քաղվածքներ էի կու-

տակել, որ խնամքով վերցրել էի այս կամ այն տպագիր աղբյուրից (գիրք, ամսագիր, թերթեր). Հիմա ձեր ձեռքի տակ այնպիսի մի հիանալի միջոց կա, ինչպիսին համակարգիչն է Նրա մեջ մտցրեք ձեզ հետաքրքրող ցանկացած տեղեկատվություն ցանկացած երկրի մասին: Մի կասկածեք, վաղ թե ուշ պետք է գալու: Էլ չեմ ասում նույն «ինտերնետ» ցանցի մասին, որից հմտորեն օգտվելու դեպքում դուք շատ-շատ տեղեկություններ կհավաքեք ձեզ անհրաժեշտ երկրի կամ թեմայի մասին: Առանց այդպիսի հետազոտական-սևագործ աշխատանքի անկարելի է լավ լրագրող դառնալ: Եթե միջազգայնագետ եք, պիտի լավագույնս տեղյակ լինեք համաշխարհային քաղաքական անցուդարձերից: Եթե մասնագիտացել եք որևէ երկրի գծով, ապա տվյալ երկրի մասին պետք է իմանաք ամեն ինչ կամ գրեթե ամեն ինչ տնտեսական հիմնական ցուցանիշներից սկսած, աշխարհագրությամբ, ժողովրդագրությամբ, քաղաքական ուժերի տեղաբաշխմամբ և հազար ու մի այլ բաներով վերջացրած: Այս կարգի հետազոտական նյութերի մեջ ոչինչ ավելորդ համարվել չի կարող քաղաքական լիդերի ուժեղ կամ թույլ կողմերն ապացուցող փաստերը, բնավորության հիմնական գծերը, անգամ նրա անվան հետ կապված սկանդալներն իմանալը վաղ թե ուշ ձեզ լավ ծառայություն կմատուցեն:

Երկար տարիներ իմ, իբրև լրագրող-վերլուծաբանի, հետաքրքրությունների շրջանակում է եղել Ռուսաստանը: Թե «Հայաստան», թե «Ազգ» օրաթերթերում աշխատածս տարիներին ես մեր խմբագրությունների «գլխավոր ռուսաստանագետն» եմ եղել: Ուշի-ուշով հետևելով ռուսաստանյան իրադարձություններին, մանավանդ Բորիս Ելցինի իշխանության տարիներին երկրում ընթացող բառացիորեն պետականակործան գործընթացներին, ես թեթևացած շունչ քաշեցի միայն այն ժամանակ, երբ ռուսական քաղաքական հորիզոնում սկսեց բարձրանալ Վլադիմիր Պուտինի աստղը: Ռուսաստանյան նախագահական ընտրությունների նախաշեմին, 2000 թվականի հունվարի կեսերին, «Ազգ» օրաթերթում լույս տեսած իմ հոդվածը կրում էր «Ռուսաստանի վերջին հույսը» վեր-

նագիրը ես գրել էի, որ ռուսների այդ վերջին հույսը Վլադիմիր Պուտինն է կամ նա կկանգնեցնի պետության քայքայման գործընթացը, կամ հսկայական երկիրը բաժան-բաժան կլինի ավտատիրական իշխանիկների միջև: Որպես այդ վտանգի նախանշաններ՝ մատնացույց էի արել երկրի իշխանական ուղղաձիգի կաթվածը, տարածաշրջանների կենտրոնախույս ձգտումները, անգամ սեփական վճարամիջոց (դրամ) ստեղծելու միտումները, տեղական այսպես կոչված «Կանոնադրությունների» անհամապատասխանությունը գործող սահմանադրությանն ու դաշնային օրենքներին և այլն, և այլն:

Ուղիղ 4 տարի անց, 2004 թ. փետրվարի 12-ին դիմելով իր վստահված անձանց և ի դեմս նրանց ողջ երկրին, նախագահական նոր ընտրությունների նախապատրաստվող Վլադիմիր Պուտինը իր առաջին նախագահական շրջանի ձեռքբերումների մեջ մատնանշում էր ճիշտ այն վտանգների հաղթահարումը, որոնք ես մատնանշել էի...4 տարի առաջ: Պուտինն ասում էր, թե իրեն հաջողվել է ոչ միայն վերականգնել «իշխանական ուղղաձիգը», այլև ուղղակի «նորից ստեղծել այն», վերացնել տեղական և համապետական օրենսդրական ակտերի անհամապատասխանությունները, կայունացնել ռուբլին իբրև համապետական վճարամիջոց, այլապես «ոմանք արդեն սեփական վճարամիջոցներն էին պատրաստում», և այդպիսով կասեցնել Ռուսաստանի պետականության քայքայումը: Ելցինից հետո անցած 4 տարիներին սա առաջին դեպքն էր, որ Պուտինը բացեիբաց խոստովանեց, թե ինչ ողբալի վիճակի էր հասցրել երկիրն իր նախորդը և ի~նչ սոսկալի ժառանգություն էր թողել իրեն: Եվ ես ուրախ եմ, որ զուտ իբրև լրագրող այդ տեսնում ու այդ մասին գրում էի դեռ այս խոստովանությունից շատ առաջ...Թեև (կներեք, չեմ սեթևեթում) ամենևին էլ այն կարծիքին չեմ, թե այն տարիներին Ռուսաստանում ընթացող քայքայման գործընթացները տեսնելու համար շատ մեծ խորաթափանցություն էր պահանջվում...

Դառնանք, սակայն, *հերթական դասին:* Եթե դուք քաղաքական լրագրող եք դարձել, ապա մի կասկածեք, որ

ենթարկվելու եք հարձակումների, այդ թվում մամուլում եթե այդ հարձակումները բանավիճային բնույթ են կրում, եթե ձեր ընդդիմախոսները ընդամենը հրապարակավ իրենց անհամաձայնությունն են հայտնում ձեր արտահայտած այս կամ այն տեսակետին, փորձում են ձեր պաշտպանած դրույթներին հակառակ դրույթներ առաջ քաշել և իրենց հասկացած ճշմարտությունն ապացուցել, ապա դա միանգամայն նորմալ բան է· Անգամ այն դեպքերում, երբ ձեզ հետ ազնիվ բանավեճ վարողը անտեղի խիստ բառեր է գործածում ձեր հասցեին: Սակայն միանգամայն հողկալի է, երբ ձեր ընդդիմախոսը ձեզ վերագրում է...իր հնարած մտքերը, ապա սկսում ծաղրանքով ցույց տալ, թե որքա~ն սնանկ են դրանք. Քաղաքական պայքարում նման կեղտոտ հնարքի հաճախ են դիմում: Նույնիսկ չափազանց բարձրաստիճան անձինք· Ինձ վիճակվել է ներկա լինել և լուսաբանել ՀՀՇ 6-րդ համագումարը: Ահա այդտեղ ահավոր հիասթափություն ապրեցի ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթից· Պարոն Տեր-Պետրոսյանը, որի հանդեպ, որպես նախագահի, առանց այն էլ ընդդիմադիր կեցվածք ունեի, այդ ելույթով իմ աչքում կորցրեց հարգանքի վերջին փշուրները նաև որպես մարդ:

Ինչու՞:

Որովհետև դիմեց նույն կեղտոտ հնարքին սկսեց մեկ առ մեկ թվարկել, թե ինչ է ասում ընդդիմությունը (իբր) իրենց, իբրև կառավարող կուսակցության, և մեկ առ մեկ էլ հերքեց դրանք, ահա այս տոնով.«Ընդդիմությունը մեզ ասում է...այս-այս-այս, մենք ասում ենք այն-այն-այն»: **Նախագահի ելույթի այդ հատվածը ծայրից ծայր կեղծիք** էր. ոչ ոք ՀՀՇ-ին չէր ուղղել այն մեղադրանքները, որոնք ամպագոռգոռ կերպով բերում էր երկրի նախագահը· **Ինքն էր դրանք հնարել, ինքն էլ հերքում-դատափետում էր իր հնարած կեղծ մեղադրանքները, ծաղրելով երևակայական ընդդիմախոսներին, թե տեսա՞ք՝ ի՞նչ հիմար բաներ են ասում, ի՞նչ անհիմն մեղադրանքներ են մեզ ուղղում... «**Ընդդիմությանը պետք է խղճալ,-արհամարհանք էր խաղում նախագահը,-մենք աշխատում ենք, իսկ նրանք անելիք չունեն,

խոսում են. .»: Այսպիսի ցինիզմ, այսպիսի ամբոխավարություն (դեմագոգիա) պետության ղեկավարի շուրթերից երբևէ ոչ կարդացել եմ, ոչ լսել: Միգուցե մեկ էլ Ստալինի և Հիտլերի պրակտիկայում նման բան եղած լինի Ահա ինչու, լուսաբանելով ՀՀՇ 6-րդ համագումարը, հիմնական ուշադրությունը դարձրել էի նախագահի այդ անվայելուչ հնարքին. «Որքանո՞վ ազնիվ է,- գրել էի ես,-սեփական մտքերը երևակայական հակառակորդին վերագրել, այնուհետև «քաջաբար» ջախջախել դրանք և անտեղյակ ընթերցողի աչքում վեճի մեջ հաղթածի ծիծաղելի կերպարանք ընդունել ..»: Այնուհետև կետ առ կետ հերքել էի նախագահին. ձեզ ոչ թե այս են ասում, ինչպես դուք եք հնարել, այլ այս: Բարի եղեք այս մեղադրանքներին պատասխանել, ոչ թե ձեր հնարածներին· Եվ եթե դրանք ձեր հնարածը չեն, ապա նեղություն քաշեք մատնանշելու, թե ով, որ ընդդիմադիրը, երբ և որտեղ է ձեզ հասցեագրել ձեր հիշատակած մեղադրանքները...

Պատասխան չհետևեց, ստի մեջ մերկացված նախագահը ձևացրեց, թե չի՞ կարդացել կամ արհամարհու՞մ է իմ հրապարակումը: Սակայն համոզված եմ, դա նրա հեղինակությանը հասցված ծանր հարված էր· Որովհետև...հայհոյանք չէր, թեև հեռակա, սակայն առարկայական բանավեճ էր: Այնուամենայնիվ, այս կարգի ընդհանրական ու անհասցե բանավեճը, ուղղված ընդհանրապես «ընդդիմությանը» և ոչ կոնկրետ անձանց կամ քաղաքական ուժերի, դեռ մի կերպ բացատրելի է: *Իսկ ի՞նչ անուն տալ այն նողկալի ընդդիմախոսիդ, եթե նա իբրև թե քննադատում է քո կոնկրետ հրապարակումը, սակայն չակերտների մեջ, իբրև ուրիշի ուղղակի խոսք, այսինքն իբրև թե քո հոդվածից կատարված քաղվածք, մեջ է բերում...* ***սեփական տխմարությունը,*** *որպեսզի հետո հարձակվի...իր իսկ հնարած այդ* ***տխմարության*** *վրա և ընթերցողների մոտ չարախնդա, թե որքա՜ն տգետ ես...դու:* Մեկ անգամ չեմ հանդիպել նման ստոր հնարքի, բարեկամներ, ամեն անգամ արժանի հակահարված եմ տվել այդ կարգի սրիկայություններին, սակայն մինչև հիմա էլ ծանր մի նստվածք է մնում իմ

մեջ, թե ինչպես կարող է գրչի մարդը, լրագրողը կամ պարզապես մտավորականը այդքա՜ն ընկնել: Պատմեմ այդ կարգի մի իրողության մասին իմ պրակտիկայից:

1998-ի գարնանը հաղթելով արտահերթ նախագահական ընտրություններում, Ռոբերտ Քոչարյանը, որ մինչ այդ երկրի վարչապետն էր, այդ բարձր պաշտոնում նշանակեց երիտասարդ պրոֆեսիոնալ Արմեն Դարբինյանին: Դարբինյանի կառավարությունը առավելագույնս ապաքաղաքական էր, կազմված էր իր ժամանակ հրապարակի վրա երևացող լավագույն մասնագետներից: Ի դեպ, այս հանգամանքը նկատել է նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Հայրապետյանը, որը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2002 թ. դեկտեմբերի 9-ի համարում լույս տեսած իր «Իրականություն և հասարակության զարգացման հեռանկարները» հոդվածում, մասնավորապես Արմեն Դարբինյանի կառավարության մասին գրել է. « ...ձևավորվեց մտավոր բարձր կարողություններով օժտված մասնագետների կառավարություն· Ոչ պակաս կարևոր է, որ վերը նշվածները պատշաճ մակարդակով էին ներկայացնում մեր հայրենիքը արտաքին հարաբերություններում»:

Վարչապետն ինքը բարձրահասակ, կիրթ, տոհմիկ ազնվականի կեցվածքով, անթերի շարժուձևով և առասպելական աշխատասիրությամբ համակրանք էր ներշնչում: Նախորդ ռեժիմի հանդեպ ընդգծված ընդդիմադիր լինելով, բնականաբար, մեծ հույսերով ու խանդավառությամբ էի ընդունում նորերին, այդ թվում վարչապետ Արմեն Դարբինյանին, որի կառավարության առաջին իսկ քայլերը հույս էին ներշնչում, ուստի և արժանանում էին իմ խրախուսանքին «Ազգի» էջերում: Եվ ահա օրերից մի օր վարչապետ Արմեն Դարբինյանը մեկնեց Բաքու՝ մասնակցելու «Տրասեկա» կոչվող միջազգային պայմանագրի մասնակից-երկրների ղեկավարների խորհրդաժողովին· «Տրասեկան» տրանսպորտային հաղորդակցության ուղիների, այդ թվում պատմական «Մետաքսի ճանապարհի» բացման հեռանկարներին նվիրված միջազգային ծրագիր է, որից Հայաստանն, իհարկե, դուրս մնալ

չի կարող, և որից մեր երկիրը դուրս թողնել շա՞տ կուզեր. . Ադրբեջանը: Մեկնելով Բաքու և շատ խելացի մի ելույթ ունենալով խորհրդաժողովում, վարչապետ Դարբինյանն, ահա, լուծեց մի քանի խնդիր. ա) հավաստեց Հայաստանի շահագրգռությունը «Տրասեկային» միանալու գործում, բ) չեզոքացրեց այդ միջազգային կազմակերպությունից մեզ դուրս թողնելու Ադրբեջանի ջանքերը, գ) բարձրացրեց «Տրասեկայի» մի ճյուղը Հայաստանի վրայով դեպի Իրան, այնուհետև երկու ուղղությամբ դեպի ներքև, Պարսից ծոցի շրջան և դեպի վերև միջինասիական երկրներ ուղղելու նպատակահարմարության հարցը, դ) կարևորեց Հայաստան-Իրան-Միջին Ասիա (և ավելի հեռու) ցամաքային ճանապարհի առավելությունները Ադրբեջան-Կասպից ծով-Միջին Ասիա ճանապարհի համեմատությամբ և այլն, և այլն:

Հայաստանի վարչապետի այս խելացի փաստարկները չէին կարող ուշադրության չարժանանալ «Տրասեկային» մասնակից մյուս երկրների ղեկավարների կողմից: Հենց Հայաստանի երիտասարդ վարչապետի այս ելույթը նկատի ունենալով, ես «Ազգում» հոդված հրապարակեցի «Արմեն Դարբինյանի ցանած ականները Բաքվում» վերնագրով: Իմաստն այն էր, թե Արմեն Դարբինյանն այնպիսի առաջարկներ ներկայացրեց, որ վաղ թե ուշ ընդունվելու են և անիմաստ են դարձնելու Ադրբեջանից Կասպից ծովով Միջին Ասիա դուրս գալու հաշվարկները, քանի որ բեռնափոխադրումների համար ծովը միշտ շատ ու շատ ավելի վտանգավոր է, քան ցամաքային ճանապարհը: Հեգնելով «Տրասեկայից» Հայաստանին դուրս թողնելու ադրբեջանական ջանքերի փլուզումը, ես, նկատի ունենալով Բաքվում Հայաստանի վարչապետի արած առաջարկները, գրում էի.«Արմեն Դարբինյանի ցանած ականները վաղ թե ուշ պայթելու են, և այդ ժամանակ «Տրասեկայում» ավելորդ է դառնալու ոչ թե Հայաստանը, այլ Ադրբեջանն ինքը...»:

Իմ այս հրապարակումը միանգամայն անսպասելի անդրադարձ ունեցավ...«Առավոտ» օրաթերթում: Անհայտ մեկը, ընդամենը անվան ու ազգանվան սկզբնատառերը նշելով,

բավական կոռեկտ, սակայն բացարձակապես անընդունելի մեղադրանքներ էր հասցեագրել ինձ: Իբր, քանի դեռ ես ընդդիմադիր լրագրող էի, ինձ հաճույքով էր կարդում, « ..իսկ այժմ, երբ ձեր գրիչը դարձել է իշխանամետ, դուք չեք նկատում, որ վարչապետ Արմեն Դարբինյանը ուղղակի իրավունք չուներ Բաքու մեկնելու...»՝ Այնինչ ես, բա չեք ասի, անսկզբունքորեն պաշտպանում եմ վարչապետին և դեռ գրում.. Այստեղ անհայտ ընդդիմախոսս չակերտներ էր դրել, իմ հոդվածից մի մեծ մեջբերում կատարել, սակայն դրա մեջ իրենից ավելացրել էր նաև կատարելապես անհեթեթ եռատող մի նախադասություն: Ամոթ չէ՞, որ դուք այսպիսի բան եք գրում, հարցնում էր այդ անխիղճանամոթը սեփական հիմարությունը վերագրելով...ինձ:

Անմիջապես արձագանքեցի .«Հարգելի պարոն կամ գուցե տիկին Տ. Ժ, ափսոսում եմ, որ ինձ այլևս «հաճույքով չեք կարդում», սակայն ինչու՞ եք ձեր հնարած մտքերը վերագրում ինձ»: Որտե՞ղ եմ ես այնպիսի բան գրել,-հրապարակավ հարցնում էի ես,-որ դուք վերագրում եք ինձ չակերտների մեջ, իբրև ուրիշի ուղղակի խոսք, բերելով ձեր իսկ հնարած տողերը: «Դա ազնիվ բան չէ,-գրել էի ես,- ազնիվ բանավեճն այդպես չի լինում, ես պատրաստ եմ հասարակական լսարանին պատասխան տալ իմ և ոչ թե ձեր տողերի համար.. »: Ինչ վերաբերում է վարչապետի Բաքու գնալ-չգնալու խնդրին, ապա այդ առթիվ էլ նշել էի, թե ես գտնում եմ, որ ճիշտ արեց գնաց: Եթե չգնար, մեկ է, այդ ժամանակ էլ պիտի դատափետեիք, թե ինչու չգնաց,-այս էր իմ պատասխանի էությունը:

Որքա՜ն մեծ եղավ զարմանքս, երբ անհայտ ընդդիմախոսս այս անգամ իմ դեմ հոդված էր բերել...«Ազգին»: Նախ նշում էր, թե ինքը տղամարդ է և ոչ կին, ապա ավելացնում էր, թե ինձնից «չէր սպասում այդքան չարություն», վերջապես կրկին բերում էր իր հնարած և ինձ վերագրած տխմարությունը, գրելով.«ինչպե՞ս հասկանալ ձեր այս տողերը...»: Այս նամակը լույս տեսավ «Ազգի» երրորդ էջի վերևի մասում, իսկ ներքևում իմ նոր պատասխանն էր. «Հարգելի պարոն,-գրում էի ես,- նախորդ անգամ ձեզ դիմելով «պարոն կամ գուցե տիկին» բառերով, ես ամենևին մտադրություն չեմ ունեցել ձեզ

վիրավորել, ես իսկապես չգիտեի ո՞վ եք դուք և ինչպե՞ս ձեզ դիմեմ » Ինչ վերաբերում է չարությանը, հապա ինչպե՞ս չչարանամ, երբ դուք պարզապես զրպարտում եք ինձ,- գրում էի ես,- այս էլ երկրորդ անգամ դուք ձեր հնարած տխմար նախադասությունը վերագրում եք ինձ Ահա թե ինչ եմ գրել ես (այստեղ մեջբերում էի իմ «Արմեն Դարբինյանի ցանած ականները Բաքվում» հոդվածի ճշգրիտ հատվածը ): Իսկ ահա թե ինչ եք վերագրում դուք ինձ (այստեղ մեջ էի բերում իմ հոդվածի նույն հատվածի անբարեխիղճ «քաղվածքը» ընդդիմախոսիս կողմից, որի մեջ խցկել էր իր հնարած տողերը)· Սա իմ իրական հոդվածն է, սա ձեր անբարեխիղճ մեջբերումը, գրում էի ես, ու՞ր է ձեր հնարած տողը իմ հոդվածում, ինչու՞ եք երկրորդ անգամ ինձ զրպարտում .

Այնքան ցցուն էր իմ հերքումը, այնքան անառարկելի բերածս հիմնավորումը, որ ընդդիմախոսս. .լռեց.

Այսպիսի բաներից դառնանալ կամ վրդովվել չարժե: Դժվար է, սակայն պիտի ձգտել վեր կանգնել մանրուքներից և արհամարհել ձեր հասցեին հնչող ամեն կարգի անհեթեթությունները Հիշեք, եթե անտեղի հարձակվում են ձեզ վրա, եթե փորձում են վարկաբեկել հնարելով և ձեզ վերագրելով չեղած բաներ, նշանակում է դուք արդեն ձեզնից որոշակի ուժ եք ներկայացնում, ազդեցություն ունեք հասարակական լսարանի վրա, ուստի և այդ կերպ փորձում են ձեզ թուլացնել: Իմ կյանքում այդպիսի դեպքեր քիչ չեն եղել: Ոմն Վ. Տ. 1996-ի վերջերին ինձ համար նույնիսկ մի ամբողջ կենսագրություն էր հորինել և այդ նողկանքը հրապարակել «Երեկոյան Երևանի» էջերում: Ինքն այն ժամանակ ՀՀՇ պաշտոնաթերթ «Հայքի» մեկնաբանն էր, սակայն սեփական խմբագիրը հրաժարվել էր հայհոյանքների այդ շարանն ընդունել: Սրա՞ գայրույթի պատճառն ինչ էր:

Երկրի ներքաղաքական մթնոլորտն այդ շրջանում չափազանց լարված էր, ես «Ազգի» էջերում ամեն օր հանդես էի գալիս նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի քաղաքականության քննադատությամբ, ընթերցողի առաջ շարադրելով այս կամ այն հարցի լուծման իմ տեսակետները: Վ. Տ.-ն, ահա,

դրանք ընդունել էր իբրև իմ կողմից երկրի նախագահին հասցեագրված «խորհուրդներ», որոնք այդ պարոնին բացահայտ կատաղության էին հասցրել: Իբր դու ո՞վ եղար մեր ամենագե՞տ, իմաստու՞ն, հանճարե՞ղ նախագահին խորհուրդ տվող դարձար: Քո խորհուրդները քեզ պահիր, ծաղրում էր գործող նախագահին կուռք դարձրած այս թերուսը, մեր ամենախելացի՞ նախագահը դրանց կարիքը չունի...

Մինչդեռ այդ «ամենախելացի՞» նախագահը Վ.Տ.-ի այս պամֆլետի հրապարակումից բառացիորեն մեկ շաբաթ առաջ հանդիպելով ՀՌԱԿ այն ժամանակվա ատենապետ Ռուբեն Միրզախանյանին, խնդրել էր իր անունից շնորհակալություն հայտնել. .ինձ: «Ինձ մեղադրում են,-ասել էր նախագահը,-թե ես քննադատություն չեմ ընդունում: Ճիշտ չէ, ես չեմ ընդունում հայհոյանքը: Ձեր Հովհաննիսյան Ռաֆիկը «Ազգում» առավոտից երեկո ինձ քննադատում է, և ես նրա հոդվածները ի նքս եմ կարդում, որովհետև դրանցում հայհոյանք չկա, կան ընդունելի կամ անընդունելի տեսակետներ, կա սրտացավություն...»: Որքան էլ չսիրես երկրիդ նախագահին, հաճելի է գիտակցել, որ քո հոդվածները նա կարդում է, դրանցում սրտացավություն է տեսնում (անշուշտ ոչ իր անձի, այլ երկրի նկատմամբ), քո արտահայտած մտքերի մեջ ընդունելի կամ անընդունելի տեսակետներ է գտնում: Նշանակում է՝ ընդունելիներից եզրակացություններ կանի, չէ՞ որ օժտված է հսկայական իշխանությամբ, և այս կերպ դու, համեստ ու շարքային լրագրող, ծառայություն կմատուցես քո պետությանը:

Պատկերացրեք, ուրեմն, երկրի նախագահից իրեն ուղղված «խորհուրդների» համար շնորհակալություն ստացած այդ ընդդիմադիր լրագրողի վիճակը, երբ մեկ այլ, սակայն այս անգամ իշխանամետ լրագրող նույն այդ «խորհուրդների» համար գործընկերոջ վրա է հարձակվում...կարմիր լաթ տեսած ցուլի կատաղությամբ: Ընդհանրապես գեղեցիկ բան չէ, երբ լրագրողը մամուլով հարձակվում է մեկ այլ լրագրողի վրա: Առավել տգեղ է, երբ նրա համար հորինում է «կենսագրական» չեղած «փաստեր», վերջում էլ իր արևին հեգնում.«Ի՞նչ պետք է սովորի լրագրողների երիտասարդ սերունդը քեզնից»: Կարող

էի հողմացրիվ անել ստահակին, բայց հաղթահարեցի ինձ և պատասխանեցի սառն ու զուսպ Իմաստն այն էր, թե ինձ համար «կենսագրություն» հորինելը ազնիվ բան չէ, թե նախագահին «խորհուրդներ տալուս» համար զուր է հուզվում, նախագահը դրանց համար ինձ բառացիորեն օրերս շնորհակալություն է հայտնել, իսկ այն հարցին, թե ինչ պետք է սովորի լրագրողների երիտասարդ սերունդն ինձնից, պատասխանել էի «*Չեմ կարող ասել, թե ինձնից ի՞նչ կսովորեն երիտասարդ լրագրողները, սակայն զգաստախոսություն, ստորաքարշություն, զրպարտություն և կեղծիք հաստատ չեն սովորի...*»:

Տարիների հետ ավելի հանդարտ դառնալով արդեն նույնիսկ հումորով եմ ընդունում այս կարգի հարձակումները: Լրագրողական էթիկան պահելու, միմյանց չհայհոյելու, անտեղի թույն ու մաղձ չթափելու թեմաներով հերթական հրապարակախոսական հոդվածիս առթիվ երիտասարդ լրագրող Արմեն Բաղդասարյանը «Հայքում» հեգնանքով նկատել էր «Ովքեր լրագրողական էթիկայի այս նորմերը խախտեն, կգլխատվեն Ռաֆիկ Հովհաննիսյանի անվան գիլյոտինով...»: Նուրբ հեգնանք էր, դուրս շատ եկավ: Երկու-երեք օրից պատահաբար հանդիպեցինք «Արմենպրեսի» սրահում: Գրկեցի, թփթփացրի ուսին. «Ապրես, Արմեն ջան, էդ «Ռաֆիկ Հովհաննիսյանի անվան գիլյոտինի» վրա շատ ծիծաղեցի, լա՜վ էիր գտել ..»: Ավագը պիտի կարողանա կրտսերին այսպես վերաբերվել, և դա էլ կրտսերի կայացման նախապայմաններից մեկն է...

Սակայն **ամենագլխավորը** լրագրողի, մանավանդ միջազգայնագետ լրագրողի համար այն է, որ գտնի իր բոլոր հրապարակումների բարձրագույն չափորոշիչը, այն կիզակետը, որից դիտելիս կարելի լինի անսխալ և անվերապահորեն որոշել ճի՞շտ է ինքը, թե՞ սխալ: **Միջազգային իրավունքի իմացությունը, դիվանագիտական նրբություններին տիրապետելը, ամենաբազմազան բնագավառների մասին գիտելիքների մեծ պաշարը և հազար ու մի այլ բաներ, անկասկած, այս տեսակետից շատ կարևոր են լրագրողի համար: Դրանք, ինչպես նաև մարդկային որակները՝ անաչառությունը, անկաշառությունը, ազնվությունը,**

խորաթափանցությունը, հայտնի փաստերից ճիշտ եզրակացություններ անելու վերլուծական կարողությունները և այլն կնպաստեն լրագրողի աճին ու կայացմանը· Բայց սրանք բոլորը դեռևս գլխավորը չեն: Գլխավորը աշխարհում կատարվող ամեն ինչի վրա սեփական ազգային ու պետական շահերի հայեցակետից նայելու ունակությունն է: Հիշե՛ք *բարձրագույն արդարությունը, բարձրագույն բարոյականությունը, բարձրագույն ճշմարտությունը քո հայրենիքի, քո պետության ու քո ժողովրդի շահն է: Մնացած ամեն ինչը ստորադաս է սրան, երկրորդական է:* ***Կարողացե՛ք աշխարհին նայել ազգային առողջ էգոիզմի դիրքերից:*** Աշխարհը մեզ այդպես է նայում և ոչ այլ կերպ: Միջազգային իրավունքի, ժողովրդավարության, համամարդկային բարոյականության և այլ արժեքները աշխարհում կիրառվում են (այդ թվում նաև մեր նկատմամբ) միայն և միմիայն այն դեպքերում, *եթե դրանք չեն հակասում կիրառողների ազգային ու պետական շահերին:* Օրինակ, ինչու՞ շատերը, այդ թվում «համաշխարհային ժողովրդավարության ու արդարության առաջամարտիկ» ԱՄՆ-ը չեն ճանաչում Հայոց ցեղասպանությունը: Մի՞թե կասկածում են եղե՞լ, թե՞ չի եղել: Ամենևին: Հիանալի գիտեն, որ եղել է: Իսկ չեն ճանաչում, որպեսզի...չգրգռեն թուրքերին, չվատացնեն իրենց հարաբերությունները Թուրքիայի հետ: Այսինքն արդարությունը զոհաբերում են իրենց պետական շահին: Մե՞նք ինչու այդպես չլինենք: Ինչու՞ աշխարհին նայենք քրիստոնեական արդարության ակնոցով:

Ռուս-չեչենական առաջին պատերազմի տարիներին, դեռ մինչև 1995-ի Խասավյուրտի հաշտությունը, ինչ-որ առիթով Ազգային ինքնորոշում միավորման առաջնորդ Պարույր Հայրիկյանը մոտ 200 հոգի էր հավաքել Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան առաջ, որոնք սև դրոշներ ծածանելով բողոքի ցույց էին անում՝ ի պաշտպանություն... չեչենների: «Դադարեցրե՛ք չեչեն ժողովրդի ցեղասպանությունը», գրված էր հայրիկյանականների ցուցապաստառներին: Ես այս ցույցին անդրադարձա հենց ազգային առողջ

էգոիզմի դիրքերից Գրել էի, թե Հայրիկյանն ու՞ր էր, երբ նույն չեչենները մեկ-երկու տարի առաջ, գեներալ Դուդաևի իշխանության գալուն պես, Գրոզնուց պարզապես վռնդեցին 30 հազար հայերի, նախապես համարյա թալանելով նրանց ունեցվածքը, ջրի գնով ձեռքներից առնելով տներն ու այգիները, տասնամյակների վաստակը, էլ չխոսելով մարդկանց կյանքին ու արժանապատվությանը հասցված հարվածների մասին. Չեչեն մոլեռանդների զինված բանդաները չէի՞ն կռվում մեր դեմ Արցախում, մինչև որ քոթակ կերած շան պես փախան ռազմաճակատից: Իսկ մի՞թե չեչենները վայրագաբար չէին հոշոտում հայերին իրենց հավատակից թուրքերի հետ դեռ 1915-ին, հարցնում էի ես, բերելով Հայոց ցեղասպանությունը վերապրած ականատեսի վկայությունը. «Թուրքեն վատ կըրնա ըլլալ միայն չեչենը. .»: Հանուն սրանց ինչու՞ վատացնենք մեր հարաբերությունները բարեկամ Ռուսաստանի հետ, հարցնում էի ես Պարույր Հայրիկյանին հրապարակավ: Պատասխան. . չհետևեց: Սակայն դատելով այն բանից, որ Հայրիկյանն այլևս չկրկնեց սև դրոշների ցույցը Ռուսաստանի դեսպանատան առջև, թեև ռուս-չեչենական երկրորդ պատերազմն է ընթանում, կարելի է ենթադրել, որ իմ հրապարակումը որոշ ազդեցություն, այնուամենայնիվ, ունեցել է:

Ի դեպ, ես խուսափում եմ ռուս-չեչենական պատերազմին գնահատական տալուց: Դա իմ խնդիրը չէ: Ինձ համար էական է միայն այն, որ անկախ այդ պատերազմի նկատմամբ իմ վերաբերմունքից հայ-ռուսական ռազմավարական դաշնակցությունը չտուժի: Էգոիստակա՞ն մոտեցում է: Այո: Սա ազգային էգոիզմի բացահայտ դրսևորում է: Եվ ես չեմ ամաչում դրա համար, ես իմ ընթերցողներին ճիշտ և ճիշտ այդպիսի պատգամ եմ տալիս: Բավական է, ինչքան այլասեր (ալտրուիստ) եղանք. Ոչ ոք դրա համար մեզ երբեք «շնորհակալություն» չի ասել: Ոչ ոք մեզ աշխարհի չարն ու բարին գնահատելու, արդարն ու անարդարը կշռելու «բարձրագույն» լիազորություն չի տվել: Մի քիչ էլ, գոնե այնքան, ինչքան ուրիշներին ենք սիրում, մեզ սիրենք, մեր ազգային-պետական շահին գերակայություն տանք: Այս կամ այն երևույթը բխու՞մ է մեր շահերից,

համապատասխանու՞մ է մեր շահերին, ուրեմն դրանից ավելի արդար, ազնիվ ու ճշմարիտ բան չկա: Եթե նույնիսկ համոզված ես, որ վերացական առումով այդպես չէ Որովհետև վերացական ճշմարտություն չի լինում. Ճշմարտությունը միշտ կոնկրետ է, համապատասխանում է իրականությանը միայն որոշակի ժամանակային ու տարածական տիրույթում, դրանից դուրս այն արդեն ճշմարտություն չէ, սուտ է. Օրինակ, «Գյումրին Հայաստանի Հանրապետության 2-րդ քաղաքն է» հավաստումը ճշմարտություն էր մինչև 1988-ի դեկտեմբերի 7-ի կործանիչ երկրաշարժը· Դրանից հետո դա այլևս ճշմարտություն չէր, չէր համապատասխանում իրականությանը ոչ բնակչության թվով, ոչ արտադրական կարողությունների հզորությամբ, ոչ որևէ այլ գործոնով

Նույնն է նաև միջազգային, միջպետական հարաբերությունների ոլորտում: Այստեղ ևս ամեն մեկն իր ճշմարտությունն ունի: Մերձավորարևելյան հակամարտությանն արաբներն իրենց հայեցակետից են նայում, հրեաներն իրենց Եվ ոչ ոքի տրված չէ երկու կողմերի համար դատավոր լինելու լիազորությունը. Բոլոր նրանք, ովքեր այս կամ այն առիթով հարկադրված են լինում իրենց վերաբերմունքն արտահայտել պաղեստինա-իսրայելական հարաբերությունների ներկա վիճակի կամ հակամարտության կարգավորման հեռանկարների նկատմամբ, միշտ նախ և առաջ ելնում են ոչ թե արաբների ու հրեաների, այլ իրենց շահերից: Սեփական շահին հարմար եղավ կասեն արաբներն են ճիշտ, հարմար չեղավ կանցնեն հրեաների կողմը, ինչպես նաև հակառակը: Բարոյականության առումով, ինչ խոսք, խոցելի կեցվածք է. Բայց ո՞վ է ասել, թե աշխարհը... բարոյական չափանիշներով է կառավարվում: Վերջին հաշվով, եթե շատ եք ուզում հաշտ ապրել ձեր խղճի հետ, ձեզ համար սահմանեք հետևյալ բանաձևը այն, ինչ օգուտ է իմ հայրենիքին, իմ ժողովրդին ու պետությանը, բարոյական է:

Չկարծեք, թե այս խորհրդին հետևելը հեշտ է. Դրա համար, նախ, պիտի հստակորեն պատկերացնես քո ազգային ու պետական շահը, այսինքն՝ բավականաչափ լավ

պատկերացնես թե՛ քո ժողովրդի պատմությունը, թե ներկան՝ իր ամբողջ բազմազանությամբ: Երկրորդ՝ պիտի հասունություն ունենաս վեր կանգնելու հատվածական-խմբակային, կուսակցական-դասակարգային շահերից և դրանք ստորադասես համազգային-համապետական շահերին:

Այս գրքում ձեզ բազմիցս մատնանշել եմ տարիներ շարունակ ՀՀՇ-ական իշխանությունների, նաև նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ռեժիմի նկատմամբ իմ անհաշտ ընդդիմադիր լինելու հանգամանքը: Ռեժիմի և նախկին նախագահի դեմ ես գրել եմ հարյուրավոր քննադատական, հաճախ չափազանց սուր հոդվածներ: Բայց իմ կենսագրության մեջ եղել է դեպք, երբ ես ծառս եմ եղել...ի պաշտպանություն Լևոն Տեր-Պետրոսյանի, հանուն նրա հեղինակության ու արժանապատվության: Եվ ծառս եմ եղել ու՞մ դեմ՝ իմ ջերմորեն սիրած Ռուսաստանի այն ժամանակվա արտաքին գործերի նախարար Անդրեյ Կոզիրևի դեմ:

...Արցախյան պատերազմի տարիներին էր, 1992-ի կամ 1993-ի նոյեմբերը: Բաքվից՝ Երևան պիտի ժամաներ ղարաբաղյան պատերազմում Ռուսաստանի, իբրև միջնորդ երկրի այն ժամանակվա նախագահ Բորիս Ելցինի անձնական ներկայացուցիչ, հատուկ հանձնարարությունների դեսպան Վլադիմիր Կազիմիրովը: Նախնական պայմանավորվածությամբ Կազիմիրովը պիտի գար Ղազախից՝ Իջևանի վրայով: Սակայն Կազիմիրովին մինչև իրենց սահմանն ուղեկցող ազերիները, չգիտեմ կանխամտածվա՞ծ, թե՞ ոչ կանխամտածված կերպով, «Վիլիս» մակնիշի 5 ավտոմեքենաների ավտոշարասյունը տարել էին դեպի Նոյեմբերյանի դիրքերը, ուր հերթապահող հայ սահմանապահները, կատարելապես անտեղյակ, թե ինչ շարասյուն է, եկողն ով է՝ կրակ էին բացել առջևից գնացող հենց Կազիմիրովի ավտոմեքենայի վրա, ստիպելով հետ դառնալ:

Այս միջադեպը ռուսական կողմը չափազանց ուռճացրեց: Մոսկովյան հեռուստատեսության 1-ին ալիքի «Ժամանակ» ծրագրով խնդիրը երկու օր շարունակ շահարկվում էր, մինչև

որ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հանդես եկավ բացատրությամբ ու ափսոսանք հայտնեց, թե եղածը պարզ թյուրիմացություն է, Կազիմիրովի ավտոշարասյունը, առանց հայկական կողմին զգուշացնելու. փոխել է ավելի վաղ համաձայնեցված երթուղին, ուստի և բանից անտեղյակ հայ զինվորները կրակ են բացել՝ Հայաստանի նախագահի այս ափսոսանքին նույն օրը երեկոյան նույն «ժամանակ» հեռուստածրագրով Անդրեյ Կոզիրևը (Արևմուտքի առաջ այն ժամանակներում ամենից ավելի քծնող-սողացող ռուսական բարձրագույն պաշտոնատարներից մեկը) պատասխանեց...անսպասելի կոշտ հայտարարությամբ: Պահանջեց, որ Լևոն Տեր-Պետրոսյանը միջադեպի համար.. ներողություն խնդրի: Իբր Հայաստանի նախագահի պաշտոնական ափսոսանքը «բավարար չէ»:

Արևմուտքի առաջ սողաս, բարեկամիդ առաջ հոխորտա՛ս: Անմիջապես, հաջորդ օրն իսկ «Հայաստան» թերթում լույս տեսավ իմ ցասումնալից հոդվածը «Ինչու՞ է հոխորտում պարոն Կոզիրևը» վերնագրով: Ես մատնացույց էի արել, թե Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի արժանապատվությունը վիրավորելը «ոմն նախարարի» կողմից աստիճանակարգության կոպիտ խախտում է և անպատվություն հայ ժողովրդի համար: Եվ եթե պարոն Կոզիրևն իրեն այդպիսի լկտիություն է թույլ տալիս, նշանակում է սա չի կարող դիտվել միայն իբրև իր դիրքորոշումը, սրա ետևում, ամենայն հավանականությամբ, Ռուսաստանի ձգտումն է փոխելու Հայաստանի հանդեպ իր քաղաքականությունը: Այդ դեպքում Կազիմիրովի մեքենայի գնդակոծումը կարող է առիթ ծառայել այդպիսի քայլն «արդարացնելու» համար, ահա թե ինչու է ուռճացվում պարզ, այն էլ ոչ հայկական կողմի մեղքով տեղի ունեցած միջադեպը. գրել էի ես: Սակայն այս կարգի առիթ փնտրելը ազնիվ բան չէ, ավելացրել էի ես, թող պարոն Կոզիրևը քաջություն ունենա խոստովանելու Հայաստանի հանդեպ իր պետության արտաքին քաղաքականության փոփոխության մասին: Այլապես նա ո՞վ է, որ իր անհիմն հոխորտանքով համարձակվում է վիրավորել Հայաստանի նախագահին...

Այս տողերը թե այն ժամանակ, թե հիմա կարդացողներին (եթե բանից անտեղյակ են և ծանոթ չեն իմ հրապարակախոսությանը) կարող է թվալ, թե ես անձնապես անսահման նվիրված էի Լևոն Տեր-Պետրոսյանին, պատրաստ նրա համար խարույկ ու խաչ ելնելու:

Ամենևին: Խնդրո առարկա հոդվածը գրելիս Տեր-Պետրոսյանն ինձ համար անձ չէր, անհատ չէր, մերժելի քաղաքական գործիչ չէր, իմ երկրի նախագահն էր: ***Ես կարող էի նրան չսիրել , բայց հանդուրժել, որ որևէ մեկը, թեկուզև Ռուսաստանի արտգործնախարարը, կպչի նրա պատվին՝ չէի կարող***: Այդ պարագայում, այո, ես պատրաստ էի խարույկ ու խաչ ելնել հանուն Տեր-Պետրոսյանի. Ավելի ճիշտ հանուն իմ Հայրենիքի, որն այն ժամանակներում, իբրև պետության բարձրագույն պաշտոնյա, ներկայացնում էր Լևոն Տեր-Պետրոսյանը:

Իմ «Ինչու՞ է հոխորտում պարոն Կոզիրևը» հոդվածին, ինչպես երևում է, վիճակված էր որոշակի դերակատարություն, որին տեղյակ չէի, անշուշտ, մինչև որոշ ժամանակ անց հրավեր ստացա ներկայանալու ՀՀ արտգործնախարարության մամուլի քարտուղար Արամ Սաֆարյանին: Մինչ այդ մեկ-երկու թռուցիկ հանդիպում էինք ունեցել, մտերիմ չէինք, կարելի է ասել նույնիսկ պաշտոնապես ծանոթներ չէինք: Ընդունեց արտակարգ ջերմորեն, հետո ասաց, որ հրավիրել է արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանի հանձնարարությամբ և լիազորված է ինձ պաշտոնապես շնորհակալություն հայտնելու...հենց վերը նշված հոդվածի համար: Ու պատմեց, որ ՀՀ արտգործնախարարությունը, Կոզիրևի հոխորտանքներից հետո, թարգմանել է «Հայաստան» թերթում լույս տեսած իմ վերոհիշյալ հոդվածը և ուղարկել...ոչ միայն ՌԴ արտգործնախարար Անդրեյ Կոզիրևին, այլև Մոսկվայում հավատարմագրված այլ երկրների 179 դեսպանատներ: Իբր, տեսեք, թե ի~նչ վատ նստվածք է տվել Կոզիրևի հոխորտանքը հայաստանյան մամուլում, ուր ենթադրում են, որ Կոզիրևն այս կերպ առիթ է փնտրում Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքա-

կանությունը փոխելու Եվ Կոզիրևը, համենայն դեպս Արամ Սաֆարյանի ասելով, այլևս լռել ու Լևոն Տեր-Պետրոսյանից ոչ միայն ներողություն խնդրել չէր պահանջել , այլև նամակ էր ուղարկել ՀՀ արտգործնախարարություն, ինչպես նաև վերոհիշյալ 179 դեսպանատներ, որում պնդել էր, թե «հայկական մամուլն իրեն սխալ է հասկացել», թե Ռուսաստանն «ամենևին մտադրություն չունի Հայաստանի հանդեպ իր քաղաքականությունը փոխելու» և անձամբ ինքն «այդպիսի առիթներ չի փնտրում ..»՝

-Մի խոսքով, Ռաֆիկ ջան,-եզրափակեց Արամ Սաֆարյանը,- քո հոդվածն օգնեց փրկելու ոչ միայն մեր նախագահի արժանապատվությունը, ստիպելու հզոր Ռուսաստանին, որ նահանջի այդ հարցում, այլև կրկին հավաստի իր բարեկամական քաղաքականության անփոփոխությունը Հայաստանի նկատմամբ: Դրանով դու մեծ ծառայություն մատուցեցիր մեր պետությանը...

Անշուշտ, հաճելի էր լսել: Ամեն լրագրողի չէ, որ բախտ է վիճակվում ծառայություն մատուցել. .պետությանը: Իմ լրագրողական կենսագրության, իմ հրապարակախոսական գործունեության այս փաստով ես անթաքույց հպարտանում եմ: Սա չէր լինի իմ կյանքում, եթե ես հստակ չիմանայի քաղաքական լրագրության վերը նշածս դասը՝ **պետության, հայրենիքի ու ժողովրդի շահը վեր է ամեն ինչից:** Այդ թվում՝ նախագահի հանդեպ քո անձնական համակրանքից կամ հակակրանքից:

Ավա՜ղ, ստիպված եմ փաստելու, որ մեզանում առկա է չափազանց վտանգավոր մի ծայրահեղություն պետության ղեկավարին պետության հետ նույնացնելու տխմարությունը, որի հետևանքով այդ ղեկավարի հանդեպ անձնական ատելությունը շատ հաճախ վերածվում է պետության հանդեպ ատելության: Եվ ոչ միայն պետության: 2003 թվականի նախագահական ընտրություններում ես հրապարակավ պաշտպանում էի Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը: «Ազգում» լույս տեսավ իմ հոդվածաշարը «Հանուն Հայաստանի Հանրապետության» խորագրով: Դա Ռոբերտ Քոչարյանի քաղաքական

դիմանկարի ուրվագիծն էր, ուր ծանրութեթև էի արել նրա քաղաքական ու կազմակերպչական կարողությունները և նշել, որ եղած թեկնածուների մեջ նախապատվությունը տալիս եմ հենց իրեն: Եվ հորդորում եմ առաջիկա ընտրություններում ձայն տալ Ռոբերտ Քոչարյանին, բայց ոչ թե հանուն նրա գեղեցիկ աչքերի, այլ հանուն Հայաստանի Հանրապետության:

Տեսնել էր պետք, թե ի նչ թշնամանքով ընդունեցին Քոչարյանի մրցակիցներն ու հակառակորդները իմ այդ հոդվածաշարը: Կարծես թե իրենք իրավունք ունեին այս կամ այն թեկնածուին սատարել, ես ոչ Իսկ ընտրություններից հետո, երբ ընդդիմությունը անընդհատ բորբոքելով հանրահավաքային հիստերիան, քիչ էր մնացել բանը հասցներ քաղաքացիական բախումների ու արյունահեղության, հեռուստաէկրանից իմ հանդարտության կոչերը նույնպես ընկալվում էին իբրև...Ռոբերտ Քոչարյանին մատուցվող ծառայություն. Կարծես թե երկրի կայունությունը միայն Քոչարյանին էր ձեռնտու, և եթե արյունահեղություն սկսվեր, ժողովուրդը չէր տուժելու:

Ճիշտ մեկ տարի անց, 2004 թվականի փետրվարի 19-ին, նախագահ Քոչարյանը հանդիպման էր հրավիրել 4 առաջատար հեռուստաընկերությունների, այդ թվում «Արմենիայի» լրագրողներին, ուր ես աշխատում էի: Դրանից մոտ երկու-երեք շաբաթ առաջ խորհրդարանական ընդդիմությունը հայտարարել էր օրինաստեղծ աշխատանքի բոյկոտի մասին և փորձում էր մարզերում կրկին հանրահավաքների ալիք բարձրացնել, հուսալով այդ ճանապարհով հասնել իշխանափոխության (Քոչարյանի հրաժարականին): Նախագահը, ակնհայտորեն անհանգստացած ընդդիմության կազմակերպած այդ հանրահավաքներում հնչող բռնության կոչերից, հեռուստալրագրողներին կրկին ու կրկին հավաստում էր, թե նման պայմաններում ինքը խստորեն հետևելու է Սահմանադրությանը: Քանի դեռ ընդդիմությունը Սահմանադրությունը չի խախտի, ընդգծում էր նախագահը, կարող է ազատ գործել, իսկ եթե խախտի, ինքը Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն միջոցներ կձեռնարկի:

Այսպիսի նախազգուշացման համար նախագահը բավարար հիմքեր ուներ, քանի որ այդ օրերի մամուլը լի էր ոչ միայն Քոչարյանի հանդեպ սովորական դարձած ատելության քարոզչությամբ, այլև բռնի ուժով նրան տապալելուն պատրաստ լինելու կոչերով. Այդ հեղափոխական խանդավառությունը, արյուն թափելու այդ պատրաստակամությունը մեծ չափով, անշուշտ, ամբոխային տրամադրությունների հետևանք էր: Ակնհայտորեն այդ տրամադրությունների ազդեցությամբ առանձին մարդիկ ոչ միայն հանրահավաքներում, այլև մամուլում իրենց կողմնակիցներին ոգևորում էին, թե «Քոչարյանը ժողովրդից վախենում է», «ռեժիմը հոգեվարքի մեջ է», «մի զարկ էլ տանք կփախչի» և այլն, և այլն: Սա երկիրն ապակայունացման տանելու բացահայտ անպատասխանատու կեցվածք էր, մեծ չափով պայմանավորված նաև հարևան Վրաստանի նախորդ տարվա «վարդերի հեղափոխության» թողած տպավորությամբ: Վրաց նորելուկ հեղափոխականները Սահակաշվիլի, Բուրջանաձե, Ժվանիա, դրսի հզոր նյութական ու բարոյական աջակցությամբ հասան էդուարդ Շևարդնաձեի հրաժարականին: Ահա որոշ մարդիկ նույնն էին երազում Հայաստանի համար: Սակայն և 2004-ի հունվարից ի վեր, և հիմա, այս տողերը գրելու պահին (մարտ) ես համոզված էի և եմ, որ Քոչարյանը Շևարդնաձե չէ, որ նա հրաժարական չի տա, որ նրան ուժով իշխանությունից հեռացնելու ցանկացած փորձ կարող է շատ մեծ արյունահեղության հանգեցնել երկրի ներսում: Ահա ինչու 2004-ի փետրվարի 22-ին, «Արմենիա» հեռուստատեսության եթերից կատարելով շաբաթվա անցուդարձերի քաղաքական վերլուծությունն իմ «Շաբաթը» հեղինակային ծրագրում, հատուկ ընդգծեցի այս հանգամանքը.«Կարելի է տարբեր կերպ վերաբերվել նախագահին,- բառացիորեն ասացի ես,-կարելի է սիրել կամ չսիրել, գնահատել կամ չգնահատել նրան, նույնիսկ ատել, սակայն չի կարելի ժխտել, որ նա ուժեղ կամքի տեր անձնավորություն է»:

Ուզում էի հասկացնել, թե ինքներդ ձեզ մի խաբեք Ռոբերտ Քոչարյանը վախկոտ մարդ չէ և չի «փախչի», մերկ ձեռքով մի

խփեք բզի գլխին, իսկ եթե խփում եք խփեք, գլուխներդ քարը, սակայն ձեզ հետ միասին փորձությունների մի տարեք ժողովրդին ու երկիրը· Արի ու տես ոմն Մ Ա , ակնհայտորեն Ռոբերտ Քոչարյանին մոլեգնորեն ատող մեկը, սթափության այս կոչս ընկալել էր որպես «Քոչարյանի գովերգ»: «Այբ-ֆե» թերթի իր մաղձոտ անդրադարձում այս պարոնը, չակերտների մեջ բերելով իբրև թե իմ ուղղակի խոսքը, ինչը շա~տ հեռու էր իմ ասածից, Քոչարյանի հանդեպ իր հիվանդագին ատելությունը տարածել էր.. ինձ վրա· Հարկ չհամարեցի պատասխանել. երբ մարդն ատելությունից այդպիսի կուրության է հասնում, ապա դա այնպիսի **կենդանական** մակարդակ է, ուր բանականությունը... տեղ չունի:

Առակս զի՞նչ ցուցանե· **Անձնական ատելությունը ձեզ առաջնորդ մի՛ կարգեք:** Իսկ եթե անկարող եք հաղթահարել դա, ապա գոնե ձգտեք այն բանին, որ չկորցնեք օբյեկտիվությունը նույնիսկ ձեր թշնամուն գնահատելիս: Այդ թշնամու հանդեպ ատելությունից կուրացած դուք կարող եք դառնալ ձեր իսկ ինքնաներշնչանքի զոհը: Ասենք, կարող եք ձեզ համոզել, թե դիմացինը...վախկոտ է (ինչպես տվյալ դեպքում վարվում է մեր ընդդիմությունը Քոչարյանի նկատմամբ), թույլ է, անվճռական է, իսկ նա իրականում այդպիսին չլինի: Հակառակը, լինի համարձակ, համառ, ուժեղ անհատականություն և ձեր հոխորտանքներին փառավոր հակահարված հասցնի: Եթե այդ հակահարվածից տուժի միայն ձեր ծնոտը ոչինչ, դա չարյաց փոքրագույնն է: Աստված մի արասցե տուժեն նաև ուրիշների ծնոտները:

Դուք, իհարկե, հասկանում եք, որ «ծնոտ» բառն այստեղ փոխաբերական իմաստով է գործածվում: Քաղաքականության մեջ ծնոտներ չէ, որ ջարդվում են: Ջարդվում են ժողովուրդների, պետությունների, անհատների ճակատագրեր, հազարավոր, միլիոնավոր մարդկանց երազանքներ, փլուզվում են պատրանքներ...**Դա վիթխարի բարոյական պատասխանատվություն է:** *Այն քաղաքական գործիչը, ով ի վիճակի չէ հաշվել իր քաղաքական քայլերի հնարավոր դրական ու*

*բացասական հետևանքները, ով պատրանքների, խաբկանքների, իր երևակայության հնարած ռոմանտիկ տեսիլների հետևից ընկած իր ետևից փորձությունների է տանում մարդկային զանգվածներին, կամա-ակամա դառնալով նրանց դժբախտության պատճառը, ներում չի գտնում ոչ ժամանակակիցների, ոչ պատմության կողմից:*

Ընդհանրապես հիշեք *աշխարհում շատ ավելի քիչ են գաղափարներով առաջնորդվողները, քան գաղափարների մասին խոսողները*: Առաջինները իսկապես ռոմանտիկներ են, անձնականը գաղափարին զոհած մարտիկներ: Նրանք բավականություն են ստանում ավելի շատ իրենց գաղափարների հաղթանակը տեսնելով, քան այդ հաղթանակի մեջ իրենց անձնական վաստակի գնահատությամբ, այդ վաստակի դիմաց իրենց մատուցված պատիվներով ու բարիքներով: Պատմությունն այդպիսի եզակի անձանց անուններ է հիշում **Ջուզեպպե Գարիբալդի, Մահաթմա Գանդի**, մեկ-երկու, և վերջ: *Մինչդեռ միլիոնավոր ուրիշներ, զրահավորվելով բարձր գաղափարների շղարշով, իրականում որոնում են իրենց անձնական շահը, բարիքը: Սրանք երկրորդներն են գաղափարների մեջ իրենց, և ոչ թե իրենց մեջ գաղափարներ կրողները: Պաշտոնամոլություն, փառասիրություն, իշխանատենչություն, ընչաքաղցություն և այլ արատներ ահա մարդկանց մեծամասնության կողմից քաղաքական ընտրանու շարքերում հայտնվելու մոլեգին ձգտումների թաքուն զսպանակը:*

Էլ ավելի սարսափելի է, երբ այդպիսի մեկը հանգամանքների բերումով իսկապես հայտնվում է քաղաքական բուրգի վերևներում: Ասենք, դառնում է որևէ կուսակցության նախագահ, զբաղեցնում է որևէ պետական պաշտոն և այլն, և այլն: Պաշտոնի, դիրքի կորուստն այդպիսի մեկի համար դառնում է ուղղակի անձնական ողբերգություն, նա որոնում է այդ կորստի պատճառն իրենից դուրս և գտնելով իր իրական կամ երևակայական թշնամուն մնացած ողջ կյանքը նվիրում է այդ «թշնամուց» վրեժ լուծելուն· Իհարկե, այս ոխի ու վրեժի իրական

պատճառն այդպիսի մարդը նույնիսկ ինքն իրեն չի խոստովանում. Ինքն իրեն ներշնչում է և փորձում է դա ներշնչել նաև իր շրջապատին, թե իր պայքարը ոչ թե անձնակա՞ն, այլ, իբր, սկզբունքայի՞ն, գաղափարակա՞ն պայքար է տվյալ քաղաքական գործչի դեմ՝

Կեղծիք է: Կամ հիմնականում կեղծիք: Աշխատեք յուրաքանչյուր այսպիսի դեպքում կռահել նման կեցվածքի անձնական, թաքուն դրդապատճառը: Ես մոտիկից ճանաչում եմ ոչ քիչ նման «սկզբունքայիններ»: Մեկն, օրինակ, ժամանակին բավական բարձր պաշտոն ուներ և անչափ «նվիրված» էր ներկայիս նախագահ Քոչարյանին: Փորձեիր որևէ ամենաանշան բան ասել Քոչարյանի հասցեին կհոշոտեր: Հետո այնպես եղավ, որ հրաժարական տվեց և զրկվեց պաշտոնից: Մոտ մեկ տարի դեռ լռում էր, հույս ուներ, թե Քոչարյանն իրեն չի «մոռանա» և նոր պաշտոն կառաջարկի՝ Չառաջարկեց. Եվ այս պարոնը, աստիճանաբար ինքն իր մեջ մաղձոտելով, դարձավ Քոչարյանի ամենաանհաշտ հակառակորդներից մեկը:

Ավա՜ղ, շատ-շատերն են այսպիսին: Մեկը պաշտոնն է կորցրել, մյուսը իրեն պատկանող որևէ սեփականություն, մի երրորդի այլևայլ ակնկալիքները չեն արդարացել, ահա և «ընդդիմադիր» է դարձել: Նկատի ունեցեք Քոչարյանին հասցեագրված նրանց քննադատությունների մեջ կարող են լինել (անշուշտ կան) արդարացի դիտողություններ՝ Սակայն ինչու՞ դրանք չէին հնչում, երբ հեղինակները...պաշտոններ ունեին: Մի՞թե Քոչարյանը «չարիք» դարձավ միայն այն բանից հետո, երբ իրենք...անձնապես տուժեցին:

Հազվադեպ քաղաքական այրեր եմ ճանաչում, որ ընդունակ են վեր կանգնելու իրենց այս անձնական նեղացածությունից: Մեկը այս գրքում արդեն հիշատակածս **Արմեն Դարբինյանն է,** մյուսը՝ ԱԺՄ նախագահ **Վազգեն Մանուկյանը:** Երկուսն էլ եղել են նախկին նախարարներ ու վարչապետներ: Մանավանդ Արմեն Դարբինյանը, որ վարչապետ էր հենց Քոչարյանի օրոք և մեր այն եզակի նախկին վարչապետներից է, որ... պաշտոնանկ չի արվել: Գործող

Սահմանադրության համաձայն, 1999-ի խորհրդարանական ընտրություններից հետո, ցած է դրել իր և իր կառավարության լիազորությունները նոր խորհրդարանի առջև, որից հետո կազմված նոր կառավարության կազմում չի ընդգրկվել.

Եվ ի՞նչ. Չի մաղձոտել, ոխով չի լցվել նախագահի հանդեպ, կենդանական ատելություն չունի նրա նկատմամբ, ինչպես մյուսները: Իհարկե, հարկը պահանջածին քննադատում է նախագահին ու նրա քաղաքականությունը, առաջարկում խելացի լուծումներ: Սակայն երբեք չի հայտարարում, թե Քոչարյանը համարյա...«դժոխքի ծնունդ» է: Իրեն այս կարգի պատշաճության շրջանակներում է պահում նաև Վազգեն Մանուկյանը: Նրան ևս կենդանական ատելությունը չէ առաջնորդողը, այլ պետության շահը (համենայն դեպս այս տողերը գրելու պահին):

Իսկ ո՞րն է այդ շահը՝ տվյալ պահին: **Չճոճել մեր պետական նավը, Քոչարյանից անձնական վրեժ հանելու և նրան իշխանությունից հեռացնելու մոլեռանդ ձգտումներին զոհ չդարձնել երկրի ներքին կայունությունը, ժողովրդին չտանել դեպի բարիկադներ.** .Այդպիսի վտանգ այսօր կա (2004 թ. մարտ), երկրում սավառնում է իշխանափոխության, հեղափոխության ոգին, և այդ չտեսնելը կամ տկարամտություն է, կամ դրսից խրախուսվող դավաճանություն: Դրսից, որովհետև միամտություն է կարծել, թե որևէ հեղափոխություն որևէ երկրում, այն էլ Հայաստանի նման փոքր ու աղքատ երկրում, կարող է հաղթանակել առանց դրսի ֆինանսական պատկառելի ներդրումների: Պատահական չէ, որ օրերս մեր մամուլում լուր սպրդեց, թե լոնդոնաբնակ մեծահարուստ Հ.Հ.-ն համաձայնել է 100 միլիոն դոլար հատկացնել...«Հայաստանում սահմանադրական կարգը վերականգնելու», այսինքն ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին իշխանությունից հեռացնելու համար:

Չգիտեմ որքանո՞վ է այս հավաստումը համապատասխանում իրականությանը. սակայն հաստատ գիտեմ, որ Հ.Հ.-ն նախկին իշխանությունների ժամանակ լայն հնարավորություններ էր ստացել Երևանում «բիզնես անելու», իսկ

Քոչարյանի օրոք դրանից զրկվել է Ահա թե որտեղից է գալիս «Հայաստանում սահմանադրական կարգը վերականգնելու նկատմամբ» նրա «ազնի՜վ» պոռթկումը: Եթե հիշատակված գումարները տրամադրվեն, ապա երկրում լուրջ խառնակություն գցելու հավանականությունը կմեծանա: Եվ եթե Քոչարյանն այս փողերով իշխանությունից հեռացվի, ապա անկասկած է, որ նրան փոխարինողները լոնդոնահայ «բարերարին» հնարավորություն կտան Հայաստանից ետ քամելու շատ ավելի մեծ գումարներ, քան նա կներդնի «հանուն Հայաստանում սահմանադրական կարգի վերականգնման»:

Հարցը Քոչարյանի անձը չէ: Վերջ ի վերջո, նա կարող է նաև հեռանալ (կամ հեռացվել), ինչպես այդ եղավ 1998-ին Լևոն Տեր-Պետրոսյանի և 2003-ին Էդուարդ Շևարդնաձեի պարագայում: Հարցն այն է, թե ինչ կշահի դրանից մեր ժողովուրդը: Ահա այստեղ է, որ լուրջ կասկածներ ունեմ: Ավելին, *համոզված եմ, որ իշխանափոխության դեպքում, եթե դա նույնիսկ լինի «թավշյա» իշխանափոխություն, նմանվի վրացական «վարդերի հեղափոխությանը», մեր երկիրն իր զարգացման մեջ առնվազն մեկ տասնամյակով հետ է շպրտվելու, առանց այն էլ սոցիալական ծանր վիճակում գտնվող զանգվածների վիճակն էլ ավելի է ծանրանալու, էլ չխոսելով պատերազմի վերսկսման սպառնալիքի ուժեղացման ու այլ աղետների մասին:*

Իհարկե, անձնապես շահողներ լինելու են: Պատկերացնու՞մ եք, թե քանի՜-քանի՜ պաշտոնյաներ են հեռացվելու, և նրանց տեղը քանի՜ նորերն են զբաղեցնելու: Չի բացառվում նաև կոռուպցիայի դեմ պայքարի անվան տակ մեծահարուստներին «թափ տալու» հավանականությունը հօգուտ իբրև թե պետբյուջեի, իսկ իրականում նորանշանակ պաշտոնյաների: Բայց դրանից հասարակ ժողովրդին ի՞նչ օգուտ: Եթե Պողոսի փոխարեն Պետրոսի կլանն է հղփանում, ժողովուրդը դրանից ի՞նչ է շահում:

**Սովորե՛ք ժողովրդի հիմնական զանգվածի շահի ու վնասի հայեցակետից դիտարկել ձեր շուրջն ընթացող պրոցեսները, և դա ձեզ անվերապահորեն կօգնի դառնալու լավ վերլուծաբան:** Սակայն միայն այն դեպքում, եթե

ունենաք պարզ-մարդկային **խիզախություն**՝ ձեր հասկացածն ու ըմբռնածը բարձրաձայնելու. Մանավանդ ներքաղաքական իրադարձությունների մասին. Հավատացեք իմ փորձին, դա ոչ միայն դժվար է, այլև վտանգավոր: Դժվար է այն առումով, որ շատերը կարող են չկիսել ձեր տեսակետը, կարող են բանավիճել, օստրակիզմի ենթարկել ձեզ, և դուք պետք է պատրաստ լինեք պաշտպանել ձեր ճշմարտությունը, իսկ վտանգավոր այն առումով, որ մեզ նման չկայացած ժողովրդավարություններին հատուկ է ծայրահեղ անհանդուրժողականությունը այլակարծության նկատմամբ:

Այդ անհանդուրժողականությունը կարող է արտահայտվել նաև անձամբ ձեր անձի դեմ ուղղված ոտնձգություններով, ձեզ «վառելու», «պայթեցնելու» անանուն սպառնալիքներով, ատելության «ֆշտոցներով» և այլ բաներով: Քիչ չեն եղել այդպիսի սպառնալիքներ նաև իմ հասցեին, հատկապես հասարակական լուրջ շիկացումների շրջանում, և կեղծիք կլիներ, եթե ասեի, թե ես դրանցից...չեմ վախեցել: Սակայն այն գիտակցությունը, որ ես ծառայում եմ արդար նպատակի, առաջնորդվում եմ ոչ թե անձնական, այլ հասարակական շահով, և հենց դրա համար էլ «վաստակել» եմ իմ դեմ ուղղված ոմանց ատելությունը, ինձ ուժ է տվել դիմանալու: Որքան մեծ է եղել ինձ ահաբեկելու և լռեցնելու ոմանց ցանկությունը, որքան ակնհայտ է դարձել, որ որոշակի շրջանակներ իմ դեմ գրգռում են սեփական դատողությունից զուրկ անձանց ու անգամ զոմբիացված, ատելությունից կուրացած, ամբոխային տրամադրությունների տարերքին տրված խմբերի, այնքան պարզ է դարձել, որ ինձնից... վախենում են: Այլապես այդքան չէին գազազի իմ դեմ:

Հասկանալով, որ իմ հրապարակախոսությունը, իմ քաղաքական վերլուծությունը որոշակի ազդեցություն ունի հասարակական լսարանի վրա, որ հազարավոր մարդիկ սպասում են իմ հրապարակումներին ու հեռուստաելույթներին հաղթահարել եմ ներքին տագնապներս ու վախերս: Որովհետև **լրագրողը, հրապարակախոսը, վերլուծաբանն ու մեկնաբանը այլևս միայն ինքն իրեն չի պատկանում, պատկանում է իր ընթերցողներին ու լսարանին:** *Չի կարելի*

*հուսախաբ անել նրանց քո հազարավոր ու հազարավոր երկրպագուներին: Չի կարելի **վախկոտաբար** լռել, երբ նրանք քո խոսքին են սպասում, քո խոսքի կարիքն ունեն: Չի կարելի հուսախաբ անել նույնիսկ քո հակառակորդներին, որոնք ոչ պակաս բծախնդրությամբ են հետևում քո հրապարակումներին:* Դա վիթխարի պատասխանատվություն է լրագրողի համար: Եվ եթե լրագրողը գիտակցում է այդ պատասխանատվությունը, ուրեմն նա արդեն...կայացել է: Ինչը և սրտանց բարեմաղթում եմ ձեզնից յուրաքանչյուրին, իմ երիտասա՛րդ բարեկամներ:

## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Դեռ 2 տարի առաջ իմ մտքով էլ չէր անցնում, թե ես երբևէ այսպիսի գիրք կգրեմ: Բայց այնպես ստացվեց, որ Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի ռեկտոր, այս գրքում արդեն հիշատակված Հայաստանի նախկին վարչապետ Արմեն Դարբինյանը, որին գիտեի դեռ «Ազգ» օրաթերթում աշխատածս տարիներից, ինձ ուղղակի իր հեղինակությամբ ճնշելով՝ հարկադրեց ստանձնել իր ղեկավարած համալսարանում «Արտաքին քաղաքականությունը և մամուլը» առարկայի դասավանդումը: 2002 թվականի սեպտեմբերի 1-ից սկսելով դասախոսությունները, հասկացա, թե որքա~ն օգտակար կլիներ ուսանողների համար այսպիսի մի ձեռնարկ ձեռքի տակ ունենալը, որն *ավելի շատ իմ, իբրև ավագ լրագրողի, փորձի նկարագրությունը լիներ, քան թե պարունակեր տեսական դատողություններ:* Վերջ ի վերջո, ես լրագրող եմ դարձել հիմնականում պրակտիկ աշխատանքով և ոչ թե լրագրության մասին զանազան ու զարմանազան գրքեր կարդալով (դրանց մեջ հաջողվածներն էլ կան, անշուշտ): Սակայն առողջությունս ծայրահեղ վատ էր, և ես ի վիճակի չէի լրացուցիչ ծանրաբեռնվածություն առնել իմ ուսերին գրել թեկուզև **սեփական փորձի վրա հիմնված** այս գիրքը: Օգնության ձեռք մեկնեց դարձյալ Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի ռեկտորը, որ պատահաբար վկա դառնալով իմ սրտի ցավի նոպաներից մեկին առանց նույնիսկ իմ խնդրանքի, սեփական ցանկությամբ ու իր բարի սրտի ներքին մղումով հորդորեց ենթարկվել անհապաղ վիրահատության, խոստանալով վճարել դրա համար պահանջվող բոլոր ծախսերը: Իհարկե, ես երախտապարտ եմ իմ բժիշկներին, որոնք փրկեցին իմ կյանքը, բայց նրանք իրենց աշխատանքի դիմաց

ստացան իմ բարեկամի վճարած գումարները, իսկ ինքն, իհարկե, ոչինչ չստացավ· Չէր էլ ակնկալում, քանզի իսկական բարության մարմնացում լինելով համոզված էր և է, թե բարեգործությունն այդպես անանուն պիտի լինի Իր համար ազնվագույն ու ճիշտ կեցվածք է, ինձ համար անընդունելի: *Քանզի ես ուզում էի և ուզում եմ, որ հանրությունն իմանա այդ անշահախնդիր և ազնիվ մարդու անունը·* Ահա, առողջանալով, գրեցի այս գիրքը ոչ միայն և ոչ այնքան որպես օգնություն ուսանողներիս, որքան որպես **իմ համեստ անձի նկատմամբ մշտապես մարդկային մեծ ջերմություն ցուցաբերած, իմ կյանքի ամենածանր պահին ինձ որդիաբար օգնության ձեռք մեկնած, հոգեպես ու նյութապես սատարած այդ սքանչելի երիտասարդի հանդեպ խոր երախտագիտության արտահայտություն:**

Համոզված եմ, որ նրա շռայլ շնորհները **պետական ու քաղաքական աշխատանքի մեծ փորձը, կազմակերպչական ակնառու ունակությունները, հեռատեսությունը, հաստատակամությունը, զսպվածությունը, սկզբունքային կեցվածքը, էլ չխոսելով զուտ մարդկային առաքինությունների՝ զգայուն հոգու և կարեկից սրտի մասին, դեռ շատ են պետք գալու մեր պետությանն ու ժողովրդին: Օրհնում եմ նրա գալիք ճանապարհը** և այս գիրքս նվիրում եմ նրան ինձ համար անչափ սիրելի այդ պարկեշտ ու տաղանդավոր երիտասարդին, պայծառ մարդուն ու հիանալի ղեկավարին **Արմեն Դարբինյանին:**

**ՀԵՂԻՆԱԿ**

**Նոյեմբեր-մարտ, 2003-2004**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Գլուխ առաջին**

Պետությունը և նրա գործառույթները ... . .... . ..... .... ....5

**Գլուխ երկրորդ**

Դիվանագիտական հարաբերություններ (Լրագրողը և դիվանագիտությունը) ..... .....43

**Գլուխ երրորդ**

Քաղաքական լրագրության տեխնոլոգիաներ .....51

**Գլուխ չորրորդ**

Լրագրողի կայացումը ... . ..... .... .. .....86

Վերջաբանի փոխարեն ..... ..... .....124

РАФИК СИРЕКАНОВИЧ ОГАНЕСЯН

# ВНЕШНЯЯ ПОЛИТИКА И ПРЕССА

## Учебное пособие для студентов

В книге известного журналиста и политического обозревателя Оганесяна Р С., обладателя премии Союза журналистов Армении «Золотое перо», содержатся практические рекомендации по организации работы журналиста-международника.

Учебное пособие предназначено для студентов факультета журналистики.

ՌԱՖԻԿ ՍԻՐԵԿԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՄՈՒԼԸ

**Ուսումնական ձեռնարկ ուսանողների համար**

Հրատ. պատվեր № 11.
Ստորագրված է տպագրության 30.09 2004թ
Չափսը 60 X 84 $^{1}/_{16}$. Թուղթը օֆսեթ № 1:
8 տպ մամուլ Տպաքանակը 300 օրինակ
Գինը պայմանագրային·

ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող 24

«Բուկինիստ» ՍՊԸ
ISBN 99941-919-8-5
2 000050 941016
Արտաքին քաղաքականություն և ծանուցը
1250 00 ,